

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
ПЕДАГОГИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ
ИМ . Х.АБОВЯНА

ARMENIAN STATE PEDAGOGICAL
UNIVERSITY AFTER
KH. ABOVYAN

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ

SCIENTIFIC NEWS

N 1 (18)

ԵՐԵՎԱՆ

ЕРЕВАН 2013 YEREVAN

Խմբագրական խորհուրդ

Միրզախանյան Ռ. Կ. – Խմբագրական խորհրդի նախագահ

Բաբախանյան Ա. Վ. – Գլխավոր խմբագիր

Հովակիմյան Ս. Ա. – Պատասխանատու քարտուղար

| | | |
|------------------|---|----------------------|
| Բրուտյան Գ. Ա. | — | ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս |
| Բաղդասարյան Գ. Ե | — | ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս |
| Դավթյան Մ. Ա. | — | ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս |
| Դոլուխանյան Ա. Գ | — | ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ |
| Ղազարյան Է. Մ. | — | ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս |
| Ղուկասյան Ա. Ա. | — | պրոֆեսոր |
| Շահինյան Ա. Ա. | — | ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս |

Խմբագրական կոլեգիա

Գևորգյան Ս., Երեմյան Ա., Վարդանյան Կ., Պետրոսյան Հ.,
Դանիելյան Կ., Խուրդյան Ս., Գալստյան Ա., Թանգամյան Տ.,
Դեմիրխանյան Գ., Եղիազարյան Ա., Ազարյան Ռ., Թադևոսյան Գ.,
Հարությունյան Հ., Հոբոսյան Ն., Հարությունյան Գ., Յավուրյան Շ.,
Սարգիսյան Ի.

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

(Հումանիտար գիտություններ), № 1(18) 2013

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
<Գիտական տեղեկագիր> №1 (18), Մանկավարժ հրատ., - Երևան, - 2013թ.: 142 էջ:

ՄԱՆԿԱՎԱՐԺ 2013

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 1(18) 2013 Гуманитарные науки

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

| | | |
|---|---|----|
| Կ. Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Լ. Ռ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԴԵՍՏՐՈՒԿՏԻՎ ՌԵՖԵՐԵՆՏԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ԱՌԻՏՈԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆ..... | 5 |
| Ս. Ա. ԱՆՏՈՆՅԱՆ | ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ՝ ԸՍՏ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ..... | 14 |
| Դ. Հ. ՄԱՐԿՈՍՅԱՆ | ԱՆՁԻ ԱՌԻՏՈԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԱԳԾԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ..... | 24 |
| ԱՍՔԱՐԻ ԱՍՂԱՐԻ ԳԱՆՁԻ, Կ. Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ | ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ..... | 34 |
| Ա. Վ. ՅԱՅԼՈՅԱՆ | ԳՈՐԾՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՄՏԱՎՈՐ ՀԵՏԱՄՆԱՑ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱԿՏԵՐԱՅՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 43 |

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

| | | |
|-----------------------|--|----|
| Է. Մ. ԱՎԱԳՅԱՆ | ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՈՒՅԹԻ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՏԵՍԱԿ..... | 53 |
| Ն. Վ. ՊԱՐՈՆՅԱՆ | ԲՆԻԿ ԵՎ ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐԸ ԵՄԱՅԻ ՂՐԻՄԵՅՈՒ <ՏՈՒՄԱՐ ԱՐԵԳԱԿԱՆ ԵՎ ԼՈՒՍՆԻ> ԵՐԿՈՒՄ..... | 61 |

ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ

Լ. Ա. ԵՐԵՄՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....70

Ա. ՅՈՒ. ԵՐԻՅՅԱՆ ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԼԵԶՎԱԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ.....81

Ն. Ի. ՍՄՄՎԵԼՅԱՆ <ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ> ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ.....87

Ռ. Լ. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ <ԱՇԽԱՀՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ> ԱՌԱՐԿԱՅԻ ԴԵՐԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....96

Ա. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՐԺԵԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԲՈՒՀԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....102

ԻՐԱՎՈՒՆՔ

Ա. Կ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎՐԱՑ-ՕՍՍԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ.....111

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ս. Լ. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ <ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ> ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ.....119

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

Գ. Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....128

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ № 1(18) 2013 Гуманитарные науки

ՀՏԴ 159.9 : 301.151

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԴԵՍՏՐՈՒԿՏԻՎ ՌԵՖԵՐԵՆՏԱՅԻՆ
ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ԱՌԻՏՈՍԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԱԳԾԻ
ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆ**

Վ. Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Լ. Ռ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

*Խ. Արուխանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան*

Հասարակության զարգացման արդի փուլը հասկանալի է սոցիալական լարվածության կտրուկ աճով, որն ուղեկցվում է անձի ներհոգեկան լարվածությամբ և դեզադապտացիայի տարբեր արտահայտչաձևերով, որոնք էլ հանգեցնում են աուտոագրեսիաների, ինչպես նաև նրա ծայրահեղ դրսևորումների՝ ինքնասպանությունների աճին: Մեր իրականության մեջ երևույթը դառնում է ավելի ընդգծված, երբ նկատի ենք ունենում ազգաբնակչության համատարած ներքինիզացիայի մեջ գտնվելու իրողությունը և այն, որ սուիցիդը, շատ հաճախ ներկայում լինելով դեպրեսիայի դրսևորման ձևերից մեկը, վաղ տարիքի անձանց լայն շերտերն ընդգրկելու հակվածություն է դրսևորում: Հատկապես երևույթն առավել ընդգծվում է երիտասարդական դեստրուկտիվ ռեֆերենտային խմբերում[1]:

Վերջին ժամանակաշրջանում մեր իրականության մեջ հաճախակի է դրսևորվում «Էմոների» ենթամշակույթը: Ենթամշակույթը գերիշխող մշակույթների մեջ գոյություն ունեցող այն երևույթն է, որի անդամներին բնորոշ են այդ ընդհանուր մշակույթից տարբերվող արժեքներ, տարբերվող հայացքներ, հետաքրքրություններ ու կենսակերպ: Ենթամշակույթները հիմնականում երիտասարդական են և դրանց հիմքում ընկած են անչափահասների դժգոհությունները գերիշխող մշակույթից, արժեքներից ու կարծրատիպերից: Իսկ դա արտահայտվում է նրանց արտաքին տեսքով, վարքով և կյանքի ընկալմամբ: Եվ ինչպես բոլոր հասարակական երևույթները, ենթամշակույթների առաջացումն էլ ունի իր պատճառները. նախ հասարակության մեջ առաջացած հակասությունները, իսկ ինչպես գիտենք դեռահասներն ու պատանիներն

այդ հակասությունների նկատմամբ առավել զգայուն են, որը հաճախ նրանց մաքսիմալիզմի պատճառով դառնում է հակասոցիալական երևույթ:

«Էմո» բառն առաջացել է «Էմոցիա» զգացմունք բառից [2]: Էմոների ներկայացուցիչներին անվանում են էմո-կիդեր (emo + անգլ. kid- երիտասարդ մարդ, երեխա), կամ սեռից կախված՝ էմո-բոյ (անգլ. boy- տղա, երիտասարդ), էմո-գրլ (անգլ. girl- աղջիկ, աղջնակ): Առաջին անգամ այս տերմինն օգտագործվել է 1985 թվականին: Կատակով այդպես անվանում էին երաժշտական խմբերին, որոնք սկսեցին նվագել տարօրինակ երաժշտություն՝ փոկալային տարրերով պանկ: Այն ռոքի ուղղություն է, որը հիմնադրել է ամերիկյան «Ռայթս օֆ Սփրինգ» խումբը անցյալ դարի 80-ականներին: «Էմոն» պահպանում էր ավանդական «Պանկ» ռոքի երանգները, սակայն երգերի թեմաները վերաբերվում էին կյանքի, սիրո, մահվան փիլիսոփայությանը: Եվ չնայած, որ էմո-ռոքը հայտնվել և ձևավորվել է որպես պանկ-ռոքի տեսակ, այնուամենայնիվ այս երկու ուղղությունների արժեքավոր կողմնորոշումները ամբողջովին տարբեր են և ի տարբերություն դասական պանկերի՝ էմոները ռոմանտիկ են: 1990-ական թվականներին էմո ոճը տարածվեց ամբողջ աշխարհով, անկախ նրանից՝ հետևողներն այդ երաժշտության հանդեպ սեր ունեին, թե ոչ:

«Ժամանակակից էմոները» զգալիորեն տարբերվում են «իրական էմոներից»: Առաջին էմոները բուսակերներ էին, ալկոհոլ և թմրանյութեր չէին օգտագործում, չէին ծխում: Հագնում էին միայն վանդակալոր շորեր: Իսկ «Ժամանակակից էմոները» 12-18 տարեկան անկանխատեսելի երիտասարդներ են՝ «Էմո փոքրիկներ»: Նրանք ունեն իրենց բնորոշ ոճը՝ սև և վարդագույն հագուստ (սևը խորհրդանշում է դաժան, իրական աշխարհը, իսկ վարդագույնը՝ նրանց մտեցումը կյանքին), գույնզգույն սպարանջաններ, մետաղյա տարրերով գոտիներ և տարբեր նշաններով պայուսակներ: Էմոների ավանդական սանրվածքն է համարվում թեք, ընկնող մազափունջը, որը հասնում է մինչև քթի ծայրը՝ փակելով մեկ աչքը և հետևից՝ տարբեր կողմեր թափթփված կարճ մազերը: Նախընտրությունը տրվում է սև ուղիղ մազերին: Աղջիկները կարող են կրել նաև մանկական, ծիծաղելի սանրվածքներ, վառ մազակալեր, բանտեր: Ականջների և մարմնի այլ մասերի վրա էմոները հաճախ են դակումներ անում: Ե՛վ տղաները, և՛ աղջիկները ներկում են շրթունքները, աչքերի շուրջը ներկում սև մատիտով կամ սովորաբար ներկերով, իսկ եղունգները ներկում են սև լաքով: Նրանց բնորոշ է թախիծը, նրանք իրենց ճնշված և մեկուսացված են զգում արտաքին աշխարհից: Նաև հետաքրքիր է, որ «Էմո» ենթամշակույթը ավելի մեծ մասապակասություն է վայելում դեռահասների մոտ:

12-18 տարեկանը համարվում է ճգնաժամային ժամանակաշրջան. անձը մուտք է գործում հասուն կյանք և ադապտացվում է նոր սոցիալական միջավայրին: Օրգանիզմում ի հայտ են գալիս կտրուկ փոփոխություններ կապված ներզատիչ գեղձերի աշխատանքի և հատկապես սեռական գեղձերի հետ: Օրգանիզմի ներքին ֆիզիոլոգիական գործընթացների խախտումը և դեռևս նոր համակարգի չկարգավորվածությունը դեռահասի ընդհանուր անհավասարակշռության, նրա գրգռվողականության, տրամադրության կտրուկ փոփոխականության՝ ուժեղ ակտիվությունից ճնշվածության և սպաթիայի հիմք են հանդիսանում: Այս տարիքում տեղի է ունենում հոգեբանական հեռացում ընտանիքից և դպրոցից, դեռահասի անձի կայացման համար դրանց նշանակությունը իջնում է, այն դեպքում երբ ուժեղանում է հասակակիցների ազդեցությունը: Ի վերջո նա կանգ է առնում երկրորդական առջև. մի կողմից պաշտոնական կոլեկտիվը և մյուս կողմից էլ շփման ոչ ֆորմալ խումբը: Դեռահասը առավելությունը տալիս է այն խմբին, որում իրեն ավելի լավ է զգում, ավելի հանգիստ է, որտեղ իրեն վերաբերվում են առավել հարգալից:

Եվ չնայած, որ նրանք վախենում են մահից, միաժամանակ այն գրավում է նրանց, որովհետև կարող է փրկություն լինել միայնությունից և ցավից, որը զգում է յուրաքանչյուր էմո «այս դաժան աշխարհում»: Ու քանի որ նման հոգեբանական խնդիրներ կան գրեթե յուրաքանչյուր դեռահասի մոտ, էմոների ենթամշակույթը մեծ արդիականություն է վայելում մեր օրերում [3]:

«Էմոների» ենթամշակույթի բոլոր ներկայացուցիչները սահմանել են իրենց համար հետևյալ հիմնական արժեքները՝ բանականությունը, հույզերը և զգացմունքները: Եվ այս երեք բաղադրամասերի համակցման կարողությունն էլ հենց էմոյի բուն էությունն է: Էմոները հիմնականում առանձնանում են բարձր հուզականությամբ և հասարակական կարծիքի նկատմամբ արհամարհական վերաբերմունքով: Էմոն շատ խոր ապրումներ է ունենում այն ամենից, ինչը տեղի է ունենում իր հետ: Թվում է, թե առանձնահատուկ ոչինչ չկա. բոլոր մարդիկ էլ ապրելով իրենց կյանքում ունենում են անհաջողություններ ու հաջողություններ, ուրախություններ և տխրություններ: Որոշներն էլ աննշան պատճառներից ընկնում են ընկճվածության մեջ: Հարց է առաջանում. ինչո՞վ է էմոն տարբերվում մյուս մարդկանցից: Էմոյի հիմնական տարբերությունը սեփական հույզերի և զգացմունքների ցուցադրությունն է: Էմոների միջավայրում սխալ է համարվում սեփական զգացմունքները թաքցնելը: «Եթե վատ ես զգում՝ արտասովի՛ր վշտից, եթե լավ ես զգում՝ արտասովի՛ր երջանկությունից, եթե ուրախ ես՝ ծիծաղի՛ր, իսկ եթե ցավում է գոռա՛: Պատռի՛ր դիմակդ: Եղի՛ր ինքդ քեզ հետ, եղի՛ր բնական և

դու երբեք չես լինի միայնակ»,- սա է էմոյի նշանաբանը: Եվս մեկ տարբերիչ գիծ էմոյի համար՝ դեռահասության ինֆանտիլիզմն է. նա չի ցանկանում պատասխանատվություն կրել, մերժում է բարոյական և իրավական նորմերը, մեղադրում է մյուս մարդկանց շրջապատող աշխարհի ոչ կատարյալ լինելու համար: Ընդունելով շրջապատող աշխարհի դժվարություններն ու զգալով սիրո և հասկացված լինելու կարիք՝ «էմո» ենթամշակույթի ներկայացուցիչը արտահայտում է ցավ և չհասկացվածություն: Եվ հենց այս պատճառով էլ էմոներն հաճախ են ցուցաբերում վիրավորվածություն և ընկճվածություն, հոգու լուրջություն և անցում դեպի իրենց ներքին աշխարհը:

Էմոն զգացմունքային դեռահասն է, որի համար ցավալի է հրաժեշտ տալը մանկությանը, բայց ստիպված է, ում ոչ ոք չի հասկանում և չի ուզում հասկանալ, ով միշտ ստիպված է լինում անել այն, ինչ չի ցանկանում, ում ոչ ոք չի սիրում: «Ողջ աշխարհը իմ դեմ է», - սա է հասուկ էմոյին: Էմոն մեծ նշանակություն է տալիս ամենահավերժական արժեքներից մեկին՝ սիրուն: Էմոն ձգտում է զգալ իսկական, անկեղծ սիրո զգացմունքը, որը կարիք չունի ձևի և պայմանականության, որը պետք չէ թաքցնել, որն արժանի է, որ բոլորն իմանան այդ մասին: Էմոն փորձում է սպրել որքան հնարավոր է լիակատար: Միաժամանակ նա չի ցանկանում սպանել իր մեջ ի հայտ եկած հույզերը շրջապատող աշխարհի անբարենպաստ փոխհարաբերությունների սզդեցության տակ՝ նախընտրելով ավելի շուտ իսկապես մահանալ, քան միաձուլվել ամբոխի հետ, դառնալ շատերից մեկը [4]:

Էմոներին շատ հաճախ համեմատում են մեկ այլ ենթամշակույթի՝ գոտերի հետ, ինչը դիմադրության է արժանանում ինչպես գոտերի, այնպես էլ էմո-կիդերի կողմից, չնայած որոշները համաձայնվում են, որ այդ երկու սուբկուլտուրաների միջև կա նմանություն: Որոշ հետազոտողներ եկան այն եզրահանգման, որ էմոներն առավել հաճախ են հակված ինքնասպանության, քան գոտերը: Ավստրալական հոգեկան առողջության ամսագրի խմբագիր Հենրիյա Մարտինի խոսքերով. «Օրինակ՝ էմո ենթամշակույթին նվիրված վեբ-կայքերից մեկում, որպես էմոների և գոտերի առանցքային տարբերություն, նշվում է, որ էմոներն ասում են իրենց, իսկ գոտերը ասում են բոլորին: Եթե այդ իրենց հանդեպ ունեցած ասելության գաղափարը ճիշտ է, սպա կարելի է ենթադրել, որ էմոները՝ ունեն ռիսկային մեծ հնարավորություն վնասել իրենց, քան հասակակից գոտերը: Չնայած որ սրա վերաբերյալ հետազոտություններ չկան կատարված, այնուամենայնիվ կարող ենք հստակ ասել, որ առևտրական կոմիքսի գործողություններ շատ հաճախ են հանդիպում այս ենթամշակույթի ներսում»: Վիճակագրության համաձայն՝ դեռահաս էմոների շարքում սուիցիդների քանակն ավելի շատ է, քան գոտերի

շրջանում: Սարսափելի է, երբ 13-14 տարեկան դեռահասը կտրում է երակները, իրեն դուրս է նետում պատուհանից, մեծ քանակությամբ դեղահաբեր է ընդունում կամ կախվում: Քիչ չեն դեպքերը, երբ նրանք փրկվել են, բայց փորձերը կրկնվել են հետագայում: Նախկինի նման նրանք տխուր են և սուիցիդալ մտադրություններով լի: Այստեղ առանցքային տեղ ունի տարիքային գործոնը, դեռահասները պատրաստ չեն պայքարելու կյանքի դժվարությունների հետ: Ինքնասպանության դրդապատճառները հաճախ շատ պարզ են լինում՝ ոչ ոքի պետք չլինելը, դժբախտ սերը, ծնողների անհանդուրժողականությունը և այլն: Նրանք չեն մտածում իրենց ծնողների մասին, քանի որ ըստ էմոնների իրենք նրանց պետք չեն:

Էմո ենթամշակութային շարժման ներկայացուցիչները խաղ են անում մահվան հետ, օրինակ, երակների վրա կտրվածքները շատ նորաձև են: Պետք չէ նաև մոռանալ, որ անհաջող ինքնասպանության նշանները մարմնի վրա ընդունվում են որպես գերազանցության նշան: Հաճախ դրա հետևում կանգնած է ոչ միայն ծնողներին սպշեցնելու ու շանտաժի դիմելու փորձը, այլ նաև առավել խորը դրդապատճառներ, այդ թվում՝ մահվան վախը հաղթահարելու ձգտումը^[5]: Էմոների շրջանում տարածված երևույթ է նաև խմբային սուիցիդները, երբ սուիցիդենտը իր հետևից տանում է ևս մեկին կամ երկուսին: Բացի այդ էմոների շրջանում սուիցիդը հաճախ կրում է նաև կրկնօրինակման բնույթ: Հայտնի է, որ ամեն անգամ որևէ երիտասարդական կուռքի մահը իր հետևից առաջացնում է երիտասարդների ինքնասպանությունների հսկայական ալիք: Գուցե այս երևույթի բացատրությունն այնքան էլ բարդ չէ. դեռահասը ցանկանում է լինել ինչպես իր կուռքն է, ցանկանում է արտացոլել նրան ամեն ինչում, այդ թվում նաև կյանքից հեռանալը: Վերջին ժամանակներում նորաձև են դարձել պսևոսուիցիդալ վարքաձևերը: Նորաձև են դարձել նաև այն երգերը, որտեղ այդ գաղափարը արժևորվում է:

Հայաստանում առաջին էմոները հայտվել են 2007թ.-ին: Էմոներ կան ոչ միայն Երևանում, այլև մարզերում՝ Վանաձորում, Գյումրիում, Դիլիջանում: Նրանք սովորաբար հավաքվում են աչքից հեռու վայրերում՝ երթուղային կայարաններում, լքված բնակարաններում: Երբեմն նրանց մեծ խմբերով շրջելիս կարելի է հանդիպել նաև Կասկադում, Կոմսայգում և Կարապի լճի շրջակայքում:

Հակառակ իրենց արտասահմանյան ընկերների՝ հայ էմոների կարծիքով բացարձակապես պարտադիր չէ վառ հագնվել: Էմո կարելի է լինել նաև ներքուստ: Իրենց էմո համարող հայ պատանիներն ու աղջիկները հաճախ ծանոթ չեն էմո ենթամշակութին: Նրանցից շատերն այժեխտներ են, ումանք սատանիստներ, մի մասը հավատարիմ է մնում

Առաքելական եկեղեցուն: Հայ Էմոնների ճնշող մեծամասնությունն սղջիկներ են, որոնք ոչ միշտ են պահպանում Էմոնական ավանդույթները: Պաշտոնական վիճակագրությունն առայժմ լռում է Էմոնների ինքնասպանության դեպքերի մասին, բայց դրանք արդեն իրականություն են, և դրանց մասին են վկայում անցկացված հետազոտությունների հետևյալ օրինակները:

Տասնհինգամյա Հ.Ա.-ն բազում նպատակներ ուներ կյանքում: Բայց դրա փոխարեն նա փակվում է լոգարանում, երկու գոտիներ կապում է միմյանց և դրանով կախվում: Որպես երկտող թողնում է իր կյանքի օրագիրը: Հետազոտությունը ցույց է տալիս, որ Հ.Ա.-ն իր մահը վաղուց պլանավորել էր, անգամ օրն էր նշանակել: «Բոլոր Էմոնների նպատակը գեղեցիկ մահն է, նրանք ճիշտ են, ու ես նույնպես այդպես կանեմ», - գրել էր Հ.Ա.-ն: Պարզվեց, որ նույն տարում Հ.Ա.-ն միացել է երիտասարդական Էմո շարժմանը: Ինչպես արդեն վերը նշվել է, Էմոները երազում են մահվան մասին և Հ.Ա.-ն որոշել է գնալ մինչև վերջ: Նախ և առաջ նա մազերը ներկել է վարդագույն, տան պատերին փակցրել է մոայլ պատկերներով ու գրություններով նկարներ, իսկ օրագրում հետևյալ գրությունն է թողել. «Մայրի՛կ, քո «օգնությունից» հետո ինձ վրա ծիծաղում էր ամբողջ դպրոցի աշակերտությունը: Դրա համար ոչ քեզ, ոչ էլ հայրիկին երբեք չեմ ների...»:

Տասնութամյա երիտասարդները՝ Կ.-ն և Լ.-ն՝ ծնված 1993 թվականին, բարձրացել են Մոսկվա քաղաքի բարձրահարկ շենքի տանիք և այնտեղից ցած են նետվել՝ այդ կերպ վերջ տալով իրենց կյանքին: Ինքնասպանությունից առաջ երիտասարդները թողել էին գրություն, որտեղ գրված է եղել, որ իրենց մահվան մեջ ոչ ոքի չեն մեղադրում: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ երիտասարդները Էմո մշակույթի հետևորդներ են:

Տասնհինգամյա դեռահաս Բ.Ն.-ն կատարել է ինքնասպանություն: Էմո սուբկուլտուրայի գաղափարախոսությունն է, որ միայն տխրության և թախծի մեջ մարդը կարող է հասկանալ կյանքի իրական իմաստը: Մակայն Էմո մշակույթի ժամանակակից ներկայացուցիչները սղճատել են գաղափարախոսության իմաստը և առաջնային տեղ են հատկացրել ինքնասպանությանը: Նրանք գտնում են, որ մահը կյանքի ամենագեղեցիկ կողմն է, իսկ ինքնասպանությունը կյանքից հեռանալու իդեալական տարբերակ: Հետագայում պարզվեց, որ Բ.Ն.-ն ինտերնետի և հեռախոսային հաղորդագրությունների միջոցով կապի մեջ է եղել Էմո շարժման ներկայացուցիչների հետ: Երիտասարդը ինքնասպանությունից առաջ ինքնասպանություն գործելու պահանջով հաղորդագրություն է ստացել: Այնուհետև ինչպես Ն.-ի քույրերն են փաստել, Բ.Ն.-ն հաղորդագրություն է ստացել, որի հեղինակները նրան սպառնացել են,

որ եթե նա կամավոր ինքնասպան չլինի, սպա նրան կապանեն: Բ.Ն.-ն այդ հատորագրությունը ստանալուց մի քանի օր անց կախվել էր լողասենյակում:

Հայ էմոնների ճնշող մեծամասնությունը աղջիկներ են, որոնք ոչ միշտ են պահպանում էմոյական ավանդույթները: 16-ամյա Մ-ն Երևան քաղաքում բացահայտ շրջող եզակի էմո տղաներից է ու թերևս միակը, ով իրեն թույլ է տալիս «արտասովոր» հագնվել: «Էմոն նաև հոգեվիճակ է, որով սպրում են: Ես միշտ եմ այդպիսին եղել, բայց ինձ էմո սկսել եմ համարել 2007 թ.-ից», - ասում է նա: Նրա հետ զրույցից պարզ է դառնում, որ հասարակությունը իրեն չի ընդունում: Նրան ամեն քայլափոխի ծեծում են, նվաստացնում: «Հասարակությունն ինձ ամեն օր ցույց է տալիս, որ ես այնտեղ տեղ չունեմ», - զրույցի ընթացքում խոստովանեց էմո պատանին:

Ամենօրյա սթրեսների պատճառով դեպրեսիաներն էմոների մոտ սովորական երևույթ են, և դրա հետևանքը լինում է ինքնասպանության փորձերը: Իրավիճակի հիմնական պատճառը հայ էմոների անգրագիտությունն է: Նրանք իրենց էմո են անվանում նույնիսկ ծանոթ չլինելով «Էմո» ենթամշակույթի հիմնական ավանդույթներին: Էմոն ազատ մտածելակերպի դրսևորում է, իսկ այն, ինչ մենք սովորաբար տեսնում ենք, ընդամենը ցածրորակ նմանակում է կամ այլընտրանքային նորաձևության վատ ցուցադրություն:

Երբեմն անձը կարող է ընկնել այնպիսի խմբի մեջ, որտեղ ենթարկվելով որոշակի ազդեցության, դառնում է տվյալ խմբի մոլագար-մանյակալ առաջնորդին կամ նրան շրջապատողներին բավարարող անկամք գործիք: Ամբողջությամբ ճնշվում է նախկին անձնային նույնա-կանությունը, խարխլվում են նախկին սոցիալական կապերը, նրան ներշնչվում է բացասական դիրքորոշում ամբողջ արտախմբային սոցի-ումի նկատմամբ: Արտասահմանյան, հատկապես ամերիկյան գրականության մեջ այդ երևույթը նշանակվում է «դեստրուկտիվ պաշտամունք», իսկ անձի սոցիալականացման պրոցեսը, պաշտամունքային կառուցվածքին կապակցումը՝ գիտակցության հսկողություն (mind control) կամ «ռեֆորմացված մտածողություն» (thought reform): Գիտակցության հսկողությունը հավատքի բռնի վերափոխման (համոզմունքի ներդրում) գործընթաց կամ վարքի ձևափոխման տեխնիկա է, առանց հաշվի առնելու այն մարդու ցանկությունը, որի նկատմամբ այդ տեխնիկան կիրառվում է: Դեստրուկտիվ պաշտամունքային խմբերում կամ կառույց-ներում, խմբի անդամների նկատմամբ կիրառվում են անբարոյական հոգեբանական տեխնիկաներ՝ նրանց վերափոխելու նպատակով, առաջնորդների հետաքրքրությունների բավարարման համար: Մրանցից մեծ մասն ունի կրոնական քողարկում, սակայն կան քաղաքական, առևտրային, բժշկական երանգավորում ունեցողներ: Ցանկացած

դեստրուկտիվ պաշտամունքում շեշտը դրվում է խմբի անդամների անգրագիտության և հոգեբանական անպաշտպանվածության վրա: Այդպիսի խմբի առաջնորդները հավակնում են աստվածային, գերբնական ուժերի: Դեստրուկտիվ պաշտամունքն անձի անհատականությունը ճնշում է խմբի կոլեկտիվ հետաքրքրություններով: Սրանց հանցավոր դեմքը դրսևորվում է նաև մասսայական ինքնասպանություններով, օրինակ՝ 1978թ-ին Գայանայում 932 (Ժողովրդական տաճար), 1994թ-ին Կիևում 210 (Սպիտակ եղբայրներ), 1995 թ-ին Տոկիոյում 11 (Աում Սինրիկյո) անձանց խմբային ինքնազոհողության դեպքերը:

Այսպիսով՝ անչափահասությունը մարդու կյանքի այն սենզիտիվ, անցումային փուլն է, որի ընթացքում մարդը հավասարապես ընկալունակ է ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցությունների նկատմամբ: Եթե անչափահասը գտնվում է անբարենպաստ գործոնների ազդեցության տակ, սպա վերջիններս, միավորվելով այս տարիքին բնորոշ առանձնահատկությունների հետ, առաջացնում են հակազդում, որը կարող է ամենատարբեր բնույթ ունենալ: Արդյունքը կարող են հանդիսանալ շեղվող վարքի տարատեսակ դրսևորումները, որոնք կամ ձեռք կբերեն սոցիալական փտանգավորության աստիճան, այսինքն՝ կկատարվի հակաիրավական արարք կամ էլ չկարողանալով դուրս գալ ստեղծված կոնֆլիկտային իրավիճակից՝ անձը կդիմի ինքնասպանության: Քանի որ սուիցիդալ վարքը «փախուստի ձև է», այն հանդիսանում է սոցիալական իրականությունը գիտակցաբար կամ անգիտակցաբար չընդունելու, այդ իրականությունը հասարակության մեջ ընդունված եղանակներով հակազդելու անկարողության կամ ցանկության բացակայության արդյունք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վարդանյան Կ. Անձի հոգեբանական առանձնահատկությունների դերը սուիցիդալ վարքի պատճառականության շրջայում, Երևան, «Դավիթ թագավոր», 380 էջ, 2008թ.:
2. [ru.wikipedia.org/wiki/Эмо_\(субкультура\)](http://ru.wikipedia.org/wiki/Эмо_(субкультура))
3. <http://newsedoma.com.ua/index.php?newsid=23497>
4. Неформальные субкультуры молодёжи. Идеология ЭМО
5. <http://www.panarmenian.net/rus/details/56900/>

РЕЗЮМЕ
МОЛОДЕЖНЫЕ ДЕСТРУКТИВНО РЕФЕРЕНТНЫЕ
ОБЪЕДИНЕНИЯ КАК СРЕДСТВО ВЛИЯЮЩЕЕ НА
АУТОАГРЕССИВНОЕ ПОВЕДЕНИЕ ЧЕЛОВЕКА
К. Е. ВАРДАНЯН, Л. Р. ОВАКИМЯН

В статье представлена субкультура «Эмо», в состав которого предрасположена входит молодёжь. Такие референтные объединения иногда являются благоприятной средой для проявления аутоагрессивного поведения личности.

SUMMARY
YOUTH DESTRUCTIVE REFERENTIAL UNIFICATIONS AS A
FACTOR PROMOTING PERSON'S AUTOAGGRESSIVE BEHAVIOR
K. E. VARDANYAN, L. R. HOVAKIMYAN

The authors of the article present the subculture „Emo”. Usually young people are prone to join this subculture. Such referential groups are a favorable environment for person's autoaggressive behavior.

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ № 1(18) 2013 Гуманитарные науки

ՀՏԴ 159.9 : 355./359 (479.25)

**ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ՝ ԸՍՏ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ
ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ**

Ս. Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն

Ժամանակակից տեխնածին քաղաքակրթության բացասական տեղաշարժերի թվին են պատկանում 21 դարի մարդկանց վարքում տեղի ունեցող փոփոխությունները: Այդ թվում, առավել նկատելի է դառնում տազնապայնության աճը, սրվում է միայնակության, կյանքի անիմաստության, ունայնության զգացումը, գերիշխող են դառնում ձանձրույթը, անտարբերությունը, ինչն էլ ոչ դրական է ազդում սուբյեկտի գործունեության արդյունավետության վրա: Հրատապ խնդիր է դառնում մի կողմից ինքնաբավ, ներդաշնակ անձի, մյուս կողմից՝ գործունեության բարձր արդյունավետությամբ աշխատողի գոյը: Ուստի, անձի մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու համար հարկ է բացահայտել այնպիսի գործոններ, որոնք փոխապայմանավորում են ինչպես անձի ինքնաիրացումը՝ ներդաշնակ և ամբողջական զարգացումը, այնպես էլ գործունեության արդյունավետ իրականացումը: Մեր կարծիքով այդպիսի կարող են լինել արտաքին և ներքին (ընթացաբովանդակային) դրդապատճառները: Արտաքին դրդապատճառները անմիջականորեն կապված չեն իրականացվող գործունեության բովանդակության հետ, օր.՝ ընդունված լինելու ձգտումը, մերժման վախը, բարձր կարգավիճակ, իշխանություն ձեռք բերելու ձգտումը և այլն: Ներքին դրդապատճառների դեպքում ակտիվության խթան են հանդիսանում գործունեության բովանդակությունն ու ընթացքը, հետաքրքրությունը, սերը իրականացվող գործունեության նկատմամբ, այդ իսկ պատճառով այդ դրդապատճառներն անվանում են նաև ընթացաբովանդակային դրդապատճառներ [1]: Ներազդելով անձնային, գործարար որակների, ինքնաիրացման, գործունեության արդյունավետության վրա՝ արտաքին և ներքին դրդապատճառները տարակերպ ազդեցություն են ունենում անձի և գործունեության

սուբյեկտի հոգեկան զարգացման վրա: Ուստի, անձի գործունեության հիմքում արտաքին և ներքին դրդապատճառների գերակայության բացահայտումը մեզ հնարավորություն կտա առավել ամբողջական պատկերացում կազմել նրա աշխարհարտացուման, մարդկանց և իր նկատմամբ ունեցած վերաբերմունքի, կյանքի դիրքի, վարքի, հուզական վիճակների, բնավորության դրսևորումների և այլնի մասին:

Թեման շատ արդիական է ՀՀ պաշտպանական համակարգում, նախ այն պատճառով, որ Հայաստանի՝ Եվրամիությանը անդամակցելու հետ համատեղ ժողովրդավարացման են ենթարկվում պետական բոլոր համակարգերը, այդ թվում՝ պաշտպանական համակարգը, և էլ ավելի է կարևորվում անհատի դերը, ուշահարույց հիմնախնդիր է դառնում սպայի ինքնաիրացումը, անհատականության ձեռք բերումը, զինապայական ծառայության ընթացքում այնպիսի անձնային որակների դրսևորման անհրաժեշտությունը, ինչպիսիք են՝ այլասիրությունը, կարեկցողականությունը, գթասրտությունը, սպրումակցելու կարողությունը և այլն:

Մյուս կողմից, ՀՀ պաշտպանական համակարգում որոշ չափով նկատելի են դառնում ռազմական բնագավառի կադրերի շրջանում զինվորական ծառայության անհրաժեշտության, անձնային ու հանրային նշանակելիության մեջ համոզվածության կորուստ, ինչը պատճառ կարող է հանդիսանալ սպայական գործունեության արդյունավետության անկման համար: Ուստի, մենք կարևորում ենք ՀՀ ԶՈՒ-ում արտաքին և ներքին դրդապատճառների և ինքնաիրացման, անձնային, գործարար որակների, ինչպես նաև՝ հրամանատարի գործունեության արդյունավետության փոխապայմանավորվածության առանձնահատկությունների ուսումնասիրումը, ինչը թույլ կտա դուրս բերել սպայի հոգեբանական բնութագրեր՝ ըստ արտաքին և ներքին դրդապատճառների գերակայության: Ըստ նշված դրդապատճառների սպայի հոգեբանական բնութագրերի առանձնացումը հնարավորություն կտա նաև, բացահայտելով այդ դրդապատճառների առաջնայնությունը հրամանատարի մոտ, կանխատեսել նրա ղեկավարման գործունեության արդյունավետության միտումները, վարքային դրսևորումները, և ուղղորդել դրանք համապատասխան ուղղությամբ՝ ակտիվացնելով արտաքին կամ ներքին դրդապատճառները:

Այդ նպատակով իրականացվել է հետազոտություն ՀՀ ԶՈՒ կրտսեր սպայահրամանատարական կազմի մասնակցությամբ: Հետազոտությանը մասնակցել են 138 սպա՝ այդ թվում՝ գումարտակի, վաշտի և դասակի հրամանատարներ: Հետազոտության տվյալների մաթեմատիկական և հոգեբանական վերլուծությունը մանրամասն ներկայացված է հեղինակային հոդվածներում [2-4]:

Հետազոտության ընթացքում բացահայտված արդյունքները հնարավորություն են տալիս սպաներին բնութագրել ըստ գործունեության

հիմքում արտաքին դրական և ներքին՝ ընթացաբովանդակային դրդապատճառների գերակայության, որն էլ և կներկայացվի ստորև:

Վարքի հիմքում արտաքին դրական դրդապատճառների առկայությունը ենթադրում է, որ մարդիկ **ինչ-որ գործողություն են կատարում, քանի որ ինչ-որ բան են սպասում, ցանկանում, կամ ինչ-որ բանի պահանջ ունեն:** Զինվորական գործունեության մեջ արտաքին դրական դրդապատճառների թվին են դասվում խրախուսանքները, պարգևները, պաշտոնեական առաջխաղացումը, նյութական վարձատրությունը, հարգանքի, իշխանության հասնելու ձգտումը և այլն: Արտաքին դրական դրդապատճառների գերակայության դեպքում սպան բնութագրվում է գործունեության բարձր արդյունավետությամբ, գործարար որակների, սոցիալական հետաքրքրության, կարեկցողականության, այլասիրության արտահայտվածությամբ: Առաջին հայացքից թվում է, թե արտաքին դրական դրդապատճառների ակտիվացումը լավագույնս կարող է նպաստել հրամանատարի անձի ներդաշնակության ապահովմանն ու ղեկավարման գործունեության արդյունավետության բարձրացմանը: Բայց նայնպես, հետազոտության արդյունքների վերլուծությունը փաստում է, որ արտաքին դրական դրդապատճառների առաջնայնության դեպքում հրամանատարների մոտ ցայտուն արտահայտված գործարարությունը, գործունեության բարձր արդյունավետությունը կրում են ժամանակավոր բնույթ, քանի որ կոնկրետ պաշտոնում երկար աշխատելու ընթացքում հրամանատարի մոտ նվազում է արտաքին դրական դրդապատճառների ինտենսիվությունը, սաճում է հուզական սպառման մակարդակը, որն ուղեկցվում է անբավարարության զգացմամբ, ֆիզիկական և հոգեկան ուժերի սպառմամբ՝ հիմք հանդիսանալով ինքնահարգանքի իջեցման, մերժման վախի ակտիվացման համար: Որպես հետևանք նվազում է գործարար որակների արտահայտվածության ցուցանիշը, անկում է ապրում հրամանատարի ղեկավարման գործունեության արդյունավետությունը: Պատճառն այն է, որ վարքի և գործունեության հիմքում արտաքին դրական դրդապատճառների գերակայության դեպքում հրամանատարն ունենում է արտաքին գերակա պահանջումը (շրջապատի կողմից ընդունված լինելու, իշխանության, պաշտոնի բարձրացման և այլնի տեսքով): Որոշ ժամանակ անց, տվյալ պաշտոնում երկար աշխատելու ընթացքում նա կարող է բավարարել այդ պահանջումը: Ուստի պահանջումի բավարարված լինելու հետևանքով արտաքին դրդապատճառների ուժը թուլանում է, հրամանատարը դրդապատճառ չի ունենում տվյալ գործունեությունը իրականացնելու համար, անտարբեր է դառնում իր գործունեության հանդեպ, սկսում է այն անհրաժեշտությունից ելնելով կամ ստիպված կատարել, որպես հետևանք նա սպառ-

վում է ներքուստ, ձևավորվում է հուզական սպառման համախտանիշը և նվազում գործունեության արդյունավետության մակարդակը:

Մեր կարծիքով հրամանատարի գործունեության արդյունավետությունը կարող է անկում ապրել նաև արտաքին պահանջմունքի բավարարման իրական և իդեալական պատկերների անհամապատասխանության դեպքում, երբ հրամանատարը պարզապես չի կարողանում բավարարել իր արտաքին խթանում ունեցող պահանջմունքը, օրինակ՝ իր կատարած աշխատանքի դիմաց չի արժանանում ակնկալվող հարգանքի, իշխանության, հերթական զինվորական կոչման, նյութական ապահովման, խրախուսանքի, քանի որ իր այդ պահանջմունքի բավարարումը կախված է արտաքին գործոններից, որոնք անվերահսկելի են, փոփոխական և անկայուն, կամ արտաքին պահանջմունքի բավարարման իրական չափը չի համապատասխանում նրա ակնկալիքներին՝ պահանջմունքի բավարարման իդեալական չափին (հարգված է, սակայն ավելի մեծ ակնկալիքներ ունի):

Երկու դեպքում էլ չի բավարարվում արտաքին գործոններով պայմանավորված պահանջմունքը, որը բերում է **անբավարարության զգացման** առաջացման և արտաքին դրդապատճառների թուլացման: Տվյալ վիճակի մշտականության դեպքում մարդու էներգետիկ պաշարներն սպառվում են, քանի որ նա աշխատում է, էներգիա է ծախսում, սակայն ստացված էներգիան փոքր է ծախսվածից (ծախսված էներգիայի և ստացված էներգիայի տարբերությունը հավասար չէ սպասվող էներգիային): Որպես հետևանք առաջանում է հուզական սպառման համախտանիշը և նվազում ղեկավարման գործունեության արդյունավետությունը [2]:

Արտաքին դրական դրդապատճառների գերակայությամբ և ցայտուն արտահայտված գործարարությամբ հրամանատարի մոտ դրսևորվող սոցիալական ուղղվածությունը (սոցիալական հետաքրքրությունը) ուղեկցվում է դոմինանտության, իշխանության ձգտմամբ, ցածր ինքնաընդունմամբ և վարքի ցածր ճկունությամբ: Թեև սպան սոցիալական հետաքրքրությունը ընդունում է որպես արժեք, այն դրսևորում է՝ հետևելով հասարակության ընդհանուր սկզբունքներին և պահանջներին, ինչպես նաև ցանկանալով ամրապնդել դոմինանտության, գերազանցության զգացումը և ընդունել ինքն իրեն: Անձի այս բնութագրերը շատ նման են Ա. Ադլերի կողմից նկարագրված թերապեությունից բարդույթ ունեցող անձի բնութագրին, ով առանձնանում է ցածր ինքնաընդունմամբ, ինքնագնահատականով և այդ բարդույթը հաղթահարելու նպատակով ընտրում է բարդույթի հաղթահարման դրական՝ կառուցողական ուղղվածությունը՝ հարաբերակցելով իր գերազանցության, դոմինանտության ձգտումը այլ մարդկանց բարեկեցության հետ՝ դրսևորելով սոցիալական հետաքրքրություն:

Մեր հետազոտության մասնակից սպաների մոտ մենք նմանապես բնական ենք համարում դոմինանտության ձգտման հարսբերակցումը սոցիալական ուղղվածության (սոցիալական հետաքրքրության), կարեկցողականության հետ, քանի որ նրանց մոտ գերազանցության ձգտումը սոցիալապես դրական է, ինչը թույլ չի տալիս, որ հրամանատարի մոտ նվաճման, պայքարի, իշխանության ձգտումը իր զինվորական կոլեկտիվում ունենա սպակառուցողական, սվերիչ հետևանքներ և ընդհակառակը՝ նպաստում է, որ սպան լինի ավելի հոգատար իր ծառայակից ընկերների և զինվորների նկատմամբ, ինչպես նաև գիտակցի զինվորական գործունեության հասարակական օգտակարությունն ու նշանակությունը: Միայն թե պետք է կրկին անգամ նկատենք, որ արտաքին դրական դրդապատճառների գերակայությամբ և բարձր գործարարությամբ սպայի մոտ սոցիալական հետաքրքրության ցայտուն արտահայտումը տեղի է ունենում հասարակության ընդհանուր սկզբունքներին և պահանջներին համապատասխանելու ցանկության հետևանքով և արտաքին դրդապատճառների հիմքում ընկած պահանջմունքի (հարգանքի, իշխանության, ընդունված լինելու պահանջմունք, նյութական բավարարվածության, պաշտոնական առաջխաղացման ձգտում) բավարարման նպատակով:

Ինչ վերաբերում է այլասիրության և կարեկցողականության անձնային որակների դրսևորմանը, պետք է նշենք, որ այս տիպի հրամանատարի մոտ բարձր արտահայտված այլասիրությունն ու կարեկցողականությունն ուղեկցվում են.

- հոգեբանական տակտի զգացումով, սոցիալական ընդունելության արժանանալու ձգտմամբ (արտաքին դրական դրդապատճառ),
- վարքի ցածր ճկունությամբ՝ դոգմատիզմով, ընդհանուր սկզբունքներին ենթարկվելու հատկությամբ,
- բարձր կախյալությամբ՝ թույլ սոցիալական հատունությամբ, ցածր ինքնուրույնությամբ,
- բարձր զիջողականությամբ՝ սոցիալական անհարմարվողականությամբ, ցածր ինքնագնահատականով, արտահայտված ինքնախարագանմամբ:

Այս բնութագրերը շատ նման են ախտաբանական ձուլման մեջ գտնվող անձի բնութագրերին: Արտաքին դրդապատճառների առաջնայնության դեպքում հրամանատարը դրսևորում է այլասիրություն, կարեկցողականություն, օգնում, կարեկցում է այլ մարդկանց, որպեսզի արժանա գովասանքի, ընդունելության: Այս սպան ձուլում է իր <ես>-ը դիմացինի <ես>-ին և հուսահատվում, երբ չի ստանում շտրհակալական վերաբերմունք, գնահատանք, ինչից էլ ընկնում է ինքնագնահատականը, նա հուսահատվում է և խարագանում, մեղադրում ինքն իրեն, թե ինչու է

ինքն այդքան նվիրված մարդկանց, նույնիսկ իրեն ցածր է դասում նրանցից (դրսևորում է բարձր զիջողականություն), սակայն չի արժանանում փոխադարձ վերաբերմունքի: Գործելով մեծ նվիրվածությամբ և պատրաստականությամբ, սակայն չարժանանալով փոխադարձ վերաբերմունքի՝ (տալիս է, բայց չի ստանում) նա ընկնում է ինքնամեղադրանքի, վիրավորվածության գիրկը՝ ափսոսալով իր այդքան մեծ կապվածության համար: Վերջինս վկայում է անձի մոտ բարձր կախյալության առկայության մասին: Շատ հաճախ այս մարդկանց թվում է, որ նրանք ինչ-որ անում են, անում են սիրով, իրենց կամքով՝ ցանկությամբ, մինչդեռ նրանք գործողության իրականացման ցանկությունը շփոթում են գործողության առաջացման ցանկության հետ, նրանք մեծ բավականությամբ և հաճույքով իրականացնում են այդ գործողությունը, բայց և այնպես, այդ բավարարվածությունը կապված է ոչ թե գործունեության բովանդակության, այլ տվյալ գործունեության մեջ սեփական <ես>-ի արժևորվածության զգացման և ընդհանրապես <ես>-ի ներառվածության հետ: Ձուլման մեջ գտնվող անձի կողմից հաճախ հնչող արտահայտություններից են. <Ես այդքան անում եմ, բայց փոխադարձը ոչինչ չեմ ստանում>, կամ <ես եմ մեղավոր, որ այդքան շատ եմ նվիրվում մարդկանց> [3]:

Անհեղձի է այլասիրության ու կարեկցողականության անձնային որակների դրական նշանակությունը շրջապատող մարդկանց և հասարակության համար, սակայն, երբ դրանք ուղեկցվում է արտաքին դրդապատճառների գերակայությամբ, բացասաբար են անդրադառնում հենց այդ որակները կրող անձի համար:

Այս տիպի հրամանատարներին բնորոշ է իմաստի անընդհատ փնտրությունները: Քանի որ նրանց համար առավել կարևորվում է գործունեության մեջ բարձր արդյունքների հասնելու ձգտումը, քան հետաքրքրությունը գործունեության բովանդակության և ընթացքի նկատմամբ, ուստի սպասվող արդյունքների հասնելուց հետո գործունեությունը միանգամից կորցնում է իր իմաստը և մարդն ունենում է **անիմաստության, դատարկության զգացում**: Այս գործընթացը կարող է շարունակվել այնքան ժամանակ, մինչև արտաքին խթանը դառնա անտարբեր գրգիռ սպայի համար: Իսկ այս դեպքում նրա մոտ կկայունան **անտարբերության զգացումը, ոչինչ չանելու ցանկությունը**: Արտաքին դրական դրդապատճառների գերակայության դեպքում սպայի մոտ առկա է լինում արտաքին պահանջումը, որի բավարարումը պայմանավորված է արտաքին գործոններով, որոնք անվերահսկելի են, փոփոխական և անկայուն, ուստի նրա մոտ առաջանում է պահանջումների բավարարման անորոշություն: Անորոշությունը ծնում է **բարձր տագնապայնություն**: Որքան ուժեղ է պահանջումները բավարարելու ձգտումը, այնքան ուժեղ է պահանջումները չբավարարելու տագնապը: Հետևաբար մարդու՝

իրականության ընկալումը տեղի է ունենում բարձր տագնապայնության ներքո, ուստի և **իրականությունը արտացոլվում է ոչ համարժեք կերպով**: Պահանջումնքը չբավարարելու հնարավորության առկայությունը՝ տագնապայնության բարձրացումը և իրականության ոչ համարժեք արտացոլումը այս մարդկանց մոտ հանդիսանում են ինքնահարգանքի, **ինքնագնահատականի և տրամադրության անկայունության և տատանման** աղբյուր: Որքան ուժեղ է արտաքին պահանջումնքը բավարարելու ցանկությունը, այնքան խոցելի է դառնում մարդու ինքնագնահատականը, նմանապես նաև անկայուն **ինքնահարգանքն ու ինքնաընդունումը**: Քանի որ այս սպայի հիմնական կողմնորոշումն է՝ <տալ, որպեսզի ստանալ>, ապա կարող ենք ասել, որ նրա ինքնահարգանքը, ինքնագնահատականն ու տրամադրությունը կախված են արտաքին անորոշ, անկանխատեսելի, փոփոխական և անվերահսկելի գործոններից, մարդկանց գնահատականներից: Ա. Մալոուսն նկատում է, որ եթե մեր ինքնահարգանքը կախված է կողմնակի մարդկանց գնահատականներից, մենք գտնվում ենք հոգեբանական վտանգի մեջ: **Համաձայն նրա, որպեսզի ինքնահարգանքը լինի կայուն, այն պետք է հիմնվի մեր իրական նշանակալիության և ոչ թե արտաքին գործոնների վրա, որոնք գտնվում են մեր վերահսկողությունից դուրս** [5]:

Արտաքին դրդապատճառների առաջնայնությունն ունեցող հրամանատարների մոտ արտահայտվող **ինքնահրացումը կրում է թվացյալ բնույթ**, քանի որ այն ինքնաբուխ չէ: Այս սպաներին կարող է թվալ, թե իրենք են որոշումներ կայացնում, առաջնորդվում են սեփական սկզբունքներով և արժեքներով, ունեն վերահսկողության ներքին լույս, սակայն իրականում նրանք շփոթում են գործողության իրականացման ցանկությունը գործողության առաջացման ցանկության հետ, քանի որ, ինչպես հետազոտության արդյունքների վերլուծությունն է փաստում, վարքի նախաձեռնությունը՝ առաջացումը, արտաքին դրական դրդապատճառների ազդեցության ներքո ինքնաբուխ չէ [4]:

Ի տարբերություն արտաքին դրական դրդապատճառների, ներքին՝ ընթացաբովանդակային դրդապատճառների գերակայության դեպքում հրամանատարի վարքի և գործունեության շարժառիթները կապված են իրականացվող գործունեության ընթացքի և բովանդակության հետ կամ բովանդակային առումով սերտորեն առնչվում են տվյալ գործունեության հետ, ուստի վարքի առաջացումը ոչ թե ղեկավարվում է արտաքին փոփոխական և անկայուն գործոնների, այլ մարդու կողմից: Այդ դրդապատճառների թվին են պատկանում ռազմա-մասնագիտական դրդապատճառները՝ ռազմական մասնագիտության նկատմամբ հետաքրքրությունը, զենքին և ռազմական տեխնիկային տիրապետելու ցանկությունը, ծագող խնդիրները վարպետորեն լուծելու ձգտումը,

ռազմա-հայրենասիրական հայացքներն ու համոզմունքները, գինվորական գործունեության հասարակական օգտակարության ու նշանակության գիտակցումը և այլն: Ներքին դրդապատճառների գերակայությունն ունեցող հրամանատարներին բնորոշ են **վերահսկողության ներքին լոկուսի առաջնայնությունը և արտահայտված ինքնասիրացումը**: Թեպետ ներքին դրդապատճառների գերակայությամբ սպան անսպանանորեն **չի առանձնանում բարձր այլասիրությամբ, կարեկցողականությամբ, սոցիալական հետաքրքրությամբ**, սակայն դրսևորվող այլասիրությունն ու կարեկցողականությունը ինքնաբուխ են, բնական և չեն պայմանավորվում արտաքին գործոններով: Եթե արտաքին դրդապատճառների ազդեցության ներքո արտահայտվող այլասիրության, սոցիալական հետաքրքրության դեպքում հրամանատարը օգնում է, համագործակցում, կարեկցում իր ենթականերին, որպեսզի արժանանա մեծարանքի և ընդունելության՝ այդպիսով նպաստելով ինքնարևոտման, ինքնահարգանքի բարձրացմանը, սպա ներքին՝ ընթացաբովանդակային դրդապատճառների դեպքում սպային համագործակցության, այլասիրության է մղում հենց համագործակցելու, հանրօգուտ գործունեությունն ծավալելու ցանկությունը: Ներքին խթանում ունեցող վարքի ժամանակ գործունեությունը ձեռք է բերում սեփական իմաստ, հրամանատարին հաճույք և բավականություն է պատճառում հենց գործունեության ընթացքն ու բովանդակությունը, ուստի նրա մոտ դիտվում է կայուն ցածր հուզական սպառում, նրան խորթ է անիմաստության, դատարկության, անբավարարության, անտարբերության զգացումը: Այս դրդապատճառների գերակայությամբ սպան առանձնանում է արտահայտված **ստեղծարար ուղղվածությամբ և շփվողականությամբ** [4]:

Մեկ չափազանց կարևոր առանձնահատկությունն ենք ցանկանում շեշտադրել. **ներքին դրդապատճառների արտահայտվածության դեպքում հրամանատարը բնորոշվում է բարձր ինքնահարգանքով, ինքնասիրությամբ, ինքնարևոտմամբ**: Ներքին խթանման գերակայությամբ մարդկանց մոտ իրենց ուղղված հարգանքը, իրենց ուղղված սերը կախված չէ արտաքին միջավայրի գործոններից: Շատ հաճախ ինքնասիրությունը համարում են եսասիրության հոմանիշ: Սակայն ինչպես անբեկանելի նկատում է Է. Ֆրոմը, եսասերի խնդիրը ոչ թե այն է, որ նա սիրում է իրեն առավել, այլ, որ ընդհանրապես չի սիրում և հոգու խորքում՝ նույնիսկ ատում: Կողքից թվում է, թե եսասերը շատ է տարված սեփական անձով, բայց դրանք միայն անհաջող փորձեր են փոխհաստուցել սեփական <ես>-ի նկատմամբ իրական խնամքի բացակայությունը [6]:

Սակայն պետք է նկատել, որ թեպետ ներքին՝ ընթացաբովանդակային դրդապատճառների գերակայությունը նպաստում է հրամանատարի անձի ներդաշնակության պահպանմանը, բայց և այնպես անսպանանորեն

չի հանգեցնում սպայի ղեկավարման գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ չկա ուղիղ համեմատական կապ ներքին դրդապատճառների և ղեկավարման գործունեության արդյունավետության միջև: Հավանաբար պատճառն այն է, որ ընթացաբովանդակային դրդապատճառների գերակայության դեպքում սպայի համար ոչ թե առաջնային է գործունեության բարձր արդյունավետության հասնելու ձգտումը, այլ ինքնաբավության ձեռք բերումը, ինքնարտահայտումը, ինքնաիրացումը: Եվ հաճախ այս մարդիկ հրաժարվում են աշխատել ցանկության և հետաքրքրության բացակայության դեպքում:

Ամփոփելով նշենք, որ հրամանատարի և՛ առաջին, և՛ թե երկրորդ տիպերը առանձին-առանձին չեն կարող նպաստել արդյունավետ գործունեության իրականացմանը, քանի որ առաջին դեպքում, երբ հրամանատարի գործունեության հիմքում գերակայող են դառնում արտաքին դրական դրդապատճառները, սպան դրսևորում է ղեկավարման գործունեության բարձր արդյունավետություն, սակայն սուժում է նրա անձը, որը հետագայում բերում է ղեկավարման գործունեության անկման: Իսկ երկրորդ դեպքում, երբ գերիշխող են լինում ներքին դրդապատճառները, հրամանատարը անձնային մակարդակում իրեն ներդաշնակ է զգում, սակայն չի երաշխավորվում ղեկավարման գործունեության արդյունավետության բարձր մակարդակ: Ուստի, հիմք ընդունելով Կ. Ջամֆիրի աշխատանքային գործունեության դրդապատճառների կառուցվածքային մոտեցումը, ըստ որի արտաքին և ներքին դրդապատճառները չեն հակասում մեկը մյուսին և կարող են միաժամանակ գերակայել անձի մոտ [7], կարող ենք եզրակացնել, որ **լիարժեք գործող, ինքնաբավ, ինքնաիրացած անձ և բարձր արդյունավետությամբ հրամանատար մենք կարող ենք ունենալ հրամանատարի վերոնշյալ 2 տիպերի համակցման դեպքում, երբ ակտիվ են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին դրդապատճառները:**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Занюк С.**, Психология мотивацши, Киев, "Эльга-Н. Ника центр", 2002, сс.65-67.
2. **Անտոնյան Ս. Ա.** <Արտաքին ու ներքին գործոններով խթանվող շարժառիթների և հուզական սպառման փոխապայմանավորվածությունը հրամանատարի գործունեության արդյունավետության համատեքստում>, <Հայկական բանակ> ռազմագիտական հանդես, թիվ 1-2, <Լինուշ>, Երևան, 2011, էջ 194-203:
3. **Անտոնյան Ս. Ա.** <Արտաքին ու ներքին դրդապատճառների և անձնային որակների փոխապայմանավորվածության հիմնախնդիրը>,

- <Բանբեր Երևանի համալսարանի>, համդես, 136.4, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 52-60:
4. **Անտոնյան Ս. Ա.** <Արտաքին և ներքին գործունեությունը խթանվող դիպլոմատիայի դերը անձի ինքնաիրացման գործընթացում>, <Հոգեբանությունը և կյանքը> համդես, թիվ 1-2, <Զանգակ-97>, Երևան, 2011, էջ 50-56:
 5. **Хьелл А. Зиглер Д.**, Теория личности, СПб., "Питер", 2002, с. 493.
 6. **Фромм Э.**, Бегство от свободы. Человек для себя, Мн., "Попури", 2000, с. 144.
 7. **Ильин Е. П.**, Мотивация и мотивы, СПб., "Питер", 2002, с. 278.

РЕЗЮМЕ
ПСИХОЛОГИЧЕСКИЕ ХАРАКТЕРИСТИКИ КОМАНДИРОВ
ВООРУЖЕННЫХ СИЛ РА ПРИ ДОМИНИРОВАНИИ
ЭКСТРИНСИВНЫХ И ИНТРИНСИВНЫХ МОТИВОВ
С. А. АНТОНЯН

В статье проанализированы результаты психологических исследований, проведенных с командирами ВС РА. Представлены психологические характеристики командиров при доминировании экстринсивных и интринсивных мотивов. Показано, что экстринсивные и интринсивные мотивы разным образом влияют на развитие личности и субъекта деятельности. Экстринсивные мотивы способствуют повышению уровня эффективности управленческой деятельности командиров, но становятся препятствием в процессе гармоничного развития личности, что в свою очередь, по истечению времени, при долгом нахождении офицера на той же должности, приводит к понижению эффективности деятельности. Приоритет интринсивных мотивов способствует развитию самодостаточной и гармоничной личности, но не гарантирует высокий уровень продуктивности.

SUMMARY
PSYCHOLOGICAL CHARACTERISTICS OF COMMANDERS OF RA
ARMED FORCES ACCORDING TO DOMINANCE OF EXTRINSIC AND
INTRINSIC MOTIVES
S. A. ANTONYAN

The results of psychological research, administered with commanders of RA Armed Forces, is analyzed in this article. Here are represented characteristics of commanders of RA Armed Forces according to dominance of extrinsic and intrinsic motives. It is shown, that extrinsic and intrinsic motives influence on personal development differently. Extrinsic motives favor the increase of the efficiency of commander's managerial activity, but serve as obstacles for harmonic personal development, which brings about the decrease in the activity efficiency, when the officer holds the same post for a long time. The priority of intrinsic motives favor the development of self-sufficient and harmonic personality, but doesn't guarantee high level of the efficiency.

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ № 1(18) 2013 Гуманитарные науки

ՀՏԴ 159.9

**ԱՆՁԻ ԱՌԻՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ**

Դ. Հ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

***Խ. Արույանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան***

Առևտրագրեսիվ վարքի պատճառականության շղթայում նշվում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են տարատեսակ հոգեբանական և սոցիալական խնդիրներն ընտանիքում և շրջապատում առաջացող միջանձնային կոնֆլիկտները, ինքնադրստրաման և ինքնաիրացման համարժեք հնարավորությունների բացակայությունը, անձի տարբեր հոգեախտաբանական խաթարումները, իսկ որպես երկրորդական, սակայն նույնպես կարևոր պատճառներ կարող են հանդես գալ սոցիալական անկայունությունը, աշխատանքի բացակայությունը, ցածր նյութական ապահովվածությունը, սակավ սոցիալական շփումները: Անձնավորությանը շրջապատող միջավայրը, իրադրությունը, որում նա գտնվում է, չնայած բավական միջնորդավորված, այնուամենայնիվ ազդում է մարդու սթրեսակայունության շեմի վրա: Այսպես օրինակ՝ կենսակերպի կտրուկ փոփոխությունը՝ սոցիալական կառույցների անհրաժեշտ աջակցության բացակայության պայմաններում, կորստի սպրուհը՝ նրան ուղեկցող ինտենսիվ հոգեբանական ցավով, կայուն բարոյական չափանիշների բացակայությունը՝ հասարակության մեջ ազդեցիկ ընդհանուր մակարդակի բարձրացման պայմաններում, գոյատևելը՝ անընդհատ սոցիալական անորոշության, խրոնիկական սթրեսի պայմաններում և այլ պատճառներ գրեթե միշտ հանգեցնում են հոգեֆիզիկական ծանրաբեռնվածության: Համապատասխանաբար հյուժվում են մարդու պաշտպանական մեխանիզմները և մարդու մոտ ձևավորվում է չհարմարվողականություն [1]: Եթե այդ հոգեվիճակում մարդը հայտնվում է շատ կոնկրետ հոգետրավմատիկ գործոնի ազդեցության տակ, նրա մոտ սկսում են գործել պաշտպանական-

հարմարվողական վարքի ձևերը, որոնցից մեկն էլ հանդիսանում է աուտոագրեսիվ ակտիվությունը [2]:

Սուիցիդոլոգիական պրակտիկայում շատ հաճախ աուտոագրեսիվ վարքը բնութագրվում է իբրև ինքնապահպանման բնագրի պիտանքանական տարատեսակ: Այն դեպքում, երբ բախվում են մարդու անգիտակցական հակումներն և նրա իդեալական Ես-պատկերը, վերջինս պահպանվում է՝ անձի չբավարարված իրական Ես-ի և կենսաբանական օրգանիզմի կործանման հաշվին: Մարմնական բնագրի համար սա դրսևորվում է ինքնապահպանման բնագրի դեգադաստիվ ձևերում, ինչը համապատասխանաբար բերում է պաշտպանական վարքի բնագրի խաթարման՝ ուժերի տնտեսում, քնի-արթնության կարգավորում, խաթարվում են դերային բնագրերը. ծնողական, տարածքային, սեռային, հիերարխիկ, սպորտիստական, որոնք անմիջականորեն դրսևորվում են վարքի խաթարումներում [3]:

Գ.3. Պիլյագինան նշում է, որ աուտոագրեսիայի ծագումը միանշանակ պայմանավորվածություն չունի: Նրա առաջացման համար անհրաժեշտ է առնվազն երեք բաղադրիչների առկայություն: Առաջին բաղադրիչը գործունեության սուբյեկտն է՝ ճնշված ագրեսիայով, անհատական պահանջումների ֆրուստրացիայով և դրանով պայմանավորված ներանձնային կոնֆլիկտով: Երկրորդ բաղադրիչը այն իրադրությունն է, որում իրականացվում են վարքի պաշտպանական բաղադրիչները՝ պայմանավորված վերոնշյալ ներանձնային կոնֆլիկտով: Ամենից հաճախ իրադրությունը դառնում է հոգետրավմատիկ, քանի որ ներառում է նշանակալի օբյեկտ, որի օգնությամբ, կամ որին օգտագործելով սուբյեկտը փորձում է լուծել իր ներանձնային աններդաշնակությունը: Երրորդ բաղադրիչ է հանդիսանում հետադարձ բացասական կապը՝ օբյեկտի և իրադրության նկատմամբ չիրականացած սպասումը, որն ուժեղացնում է սուբյեկտի լարվածությունը, ագրեսիան և ներանձնային կոնֆլիկտը լուծելու պահանջումները: Երբ մարդու մոտ սկսում է գործել այս համակարգը, նա բախվում է էքզիստենցիալ ճգնաժամի հետ, որի հետևանքն էլ իրենց հերթին ի հայտ են գալիս վարքի իմպուլսիվ, խառը ձևերը, մասնավորապես աուտոագրեսիվ ակտիվությունը:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում աուտոագրեսիվ ակտի իրականացման պահը: Այս ոլորտի հետազոտությունները ցույց են տալիս, որ աուտոագրեսիայի այնպիսի ներքին ձևերը, ինչպես օրինակ անտիվիտալ ապրումները, սուիցիդալ մտայնություններն ու մտքերը, շատ հաճախ են հանդիպում որպես սթրեսային իրադրության հակագրում: Նման պայմաններում ոմանք իրականացնում ինքնապահպանություն, սուիցիդալ փորձ, վտանգավոր այլ գործողություններ, իսկ

մյուսները՝ ոչ: Ինչպես է սկսում գործել աուտոագրեսիվ սկտիվության իրականացման մեխանիզմը: Այս առիթով առավել տարածված է երկու տեսակետ.

1. Հոգետրավմատիկ իրադրության առկայության պայմաններում աուտոագրեսիվ գործողություններն իրականացվում են իմպուլսիվորեն: Այս դեպքում պատճառահետևանքային շղթան զարգանում է հետևյալ կերպ: Հոգետրավմատիկ իրադրության զարգացումը պահանջում է ֆրոստրացիայի և վարքի պաշտպանական ձևերի ճնշման հետևանքով սուբյեկտի համար հաճախ դառնում է անսպասելի: Աուտոագրեսիվ վարքի գաղափարը այստեղ ծագում է պատահականորեն, <փայլատակման, ինսայթի> տեսքով: Ինքնասպանությունը դիտվում է որպես ձևավորված իրադրությունից դուրս գալու միակ ելք: Աուտոագրեսիվ գործողությունների պատճառ նման վիճակում հանդիսանում է պատահական ներանձնային անկումը՝ սպասումների անսպասելի կործանում, սովորական աշխարհի պատկերի խաթարում, որոնք սուբյեկտի կողմից ընկալվում են որպես ակնհայտ անարդարություն:

2. Աուտոագրեսիվ վարքի իրականացման դրդապատճառը ձևավորվում է տևականորեն պահպանվող նշանակալի հոգետրավմատիկ իրադրության կամ հաճախակի տրավմաների ժամանակ՝ աղապտացիոն մեխանիզմների թուլացման հետևանքով: Այս տարբերակում սուիցիդալ մտքերը կարող են բավական երկար ժամանակ գոյություն ունենալ սուբյեկտի մոտ: Նման պայմաններում Աուտոագրեսիվ առիթ կարող է դառնալ նույնիսկ աննշան դեպքը: Այս տարբերակի ժամանակ հնարավոր են տևականորեն պահպանվող կամ զարգացող հոգեախտաբանական խաթարումներ, ավելի հաճախ նյարդային բնույթի, ինչպես սուբլիմիկական, այնպես էլ մանիֆեստային: Մասնավորապես, կարող են դրսևորվել հարմարվողականության խաթարումներ, հետտրավմատիկ սթրեսային խանգարումներ, անձնային խանգարման ֆազային դեկոմպենսացիաներ, սոմատիզացված խանգարումներ և այլն: Սուիցիդալ գործողությունները կրում են իրական բնույթ, առկա է մահանալու գիտակցվող ձգտումը:

Որոշ սուիցիդոլոգներ սուիցիդալ սկտիվության ծագումը կապում են մոտիվացիոն ինվերսիայի հետ: Եթե սովորական պայմաններում վարքի կոգնիտիվ և հուզական բաղադրիչների միջև ներդաշնակ միասնություն գոյություն ունի, այսինքն կյանքի պաշտպանությունը ուղեկցվում է դրական հույզերով, իսկ կյանքին վտանգը՝ բացասականներով, սապա վարքի սուիցիդալ ուղղվածության ժամանակ կատարվում է դրանց վերափոփոխում: Ավելի դրական հույզերով սկսում են երանգավորվել անհատի կյանքի ընդհատման մտքերը, իսկ կյանքի ապահովման միտքը նեգատիվ երանգավորում է ստանում: Կյանքից

հեռանալը սուբյեկտին ներկայանում է որպես որևէ տանջող հիմնախնդրի լուծում, երկու չարիքներից փոքրագույնի ընտրություն, իսկ երբեմն՝ որպես բարիք և ինքնահաստատման միջոց:

Այցեղուների հարցումներից կարելի է եզրակացնել, որ ինչ-որ պահից սկսած սուիցիդի մասին միտքը սկսում է նրանց ներքին հանգստություն բերել, թուլացնում է տագնապը, հանգստացնող գործառույթ է կատարում: Այսպիսի մտքերը կարող են դառնալ սովորական և նույնիսկ գրավիչ: Սուբյեկտի գիտակցության մեջ դումինանտող տեղ զբաղեցնելով՝ նրանք կարող են ձևավորել վարքի սովորական ոճ՝ սուիցիդումանիա: Մարդը տրվում է սեփական խնդիրն այնպիսի ճանապարհով լուծելու պատրանքին, ինչպիսին սուիցիդն է: Ընդ որում, վարքի արտաքին դրսևորումը նույնն է մնում՝ վատից դեպի լավը: Միայն այն տարբերությամբ, որ սուիցիդենտի համար լավը ոչ թե կյանքի պահպանումն է, այլ նրա կասեցումը:

Նշված դրդապատճառներն անհրաժեշտ, սակայն բավարար պայման չեն սուիցիդալ մտադրության իրականացման համար, քանի որ սուիցիդի ձգտման իրականացման խոչընդոտ է հանդիսանում ինքնապահպանման հզոր բնագործ և մարդու հոգեբանական պաշտպանության ամբողջ համակարգը: Նման բնական պաշտպանության թուլացման պայման են հանդիսանում ուժեղ հուզական ցնցումները, որոնք սովորաբար հանգեցնում են հետաֆեկտային դատարկության վիճակի, հոգեկան անզգայացումը՝ բացասական ապրումների կուտակման հետևանքով, վախի զգացման թուլացումը՝ ակոհոլի կամ թմրանյութերի օգտագործման հետևանքով և այլ պատճառներ: Հենց նման պահերին սուիցիդալ մտադրությունների իրականացման ճանապարհը բացվում է, և նրանք իրականացվում են [3,4]

Ընդհանրապես դեստրուկտիվության բնույթի վերաբերյալ տեսակետները հիմնականում կենտրոնացած են դետերմինանտների խնդրի վրա: Հարկ է նշել, որ տարբեր հեղինակների կողմից առաջարկվող պատճառները շատ տարբեր են, երբեմն էլ նույնիսկ հակասական: Այսպես օրինակ, չինական փիլիսոփա ՄԷն-Յզին ենթադրում էր, որ մարդը <ի սկզբանե բարի է>, իսկ ՄԷն-Յզին նույնքան անկեղծորեն վստահ էր, որ <մարդը չար բնույթ ունի>: Ոմանք պնդում են, որ այդ չարությունը դրված է կործանիչ բնական բնագոյների մեջ, մյուսները, ինչպես Ֆրոմմը, եզրակացնում են, որ դեստրուկտիվությունը մարդու ձեռքբերովի դրական որակ է, որը ծնվում է, <երբ մարդը հրաժարվում է ինքն իրենից, իր յուրօրինակությունից>, այսինքն սա մարդու ընտրության, նրա ակտիվության արդյունք է:

Առտոդեստրուկտիվության հիմնախնդրի փորձարարական ուսումնասիրման արդյունքները հետաքրքիր տվյալներ են պարունակում

նմանատիպ վարք դրսևորած անձանց <ֆիզիկական ես-ի> պատկերացումների վերաբերյալ: Ռ. Մանլիի, Ռ.Տոնկինի, Կ. Համմոնդի հետազոտությունները այս հարցի շուրջ բացահայտում են, որ աուտոագրեսիվ սկտիվության փորձ ունեցող այցելուներին բնորոշ են մարմնի պատկերի խաթարման կոնկրետ դրսևորումներ. մանավորապես՝ ցածր ինքնագնահատական, անբավարարություն սեփական արտաքին տեսքով, դեպրեսիվ գծեր, մարմնի պատկերի աղավաղում: Նրանց մոտ առկա է սեփական մարմնի աղավաղված պատկեր, իրական և իդեալական մարմնի պատկերի մասին պատկերացումների միջև անհամաձայնություն, հակասություն Ես պատկերի և մարմնի պատկերի միջև (М.Ю.Чаплыгина /Проблема "тела" у лиц с аутодиструктивным поведением/):

Հետազոտությունների մի այլ ոլորտ վկայում է, որ աուտոագրեսիվ սկտիվությունը ուղիղ համեմատական է սեփական բացասական սպրումները արտահայտելու անկարողության հետ: Այս տեսանկյունից նույնիսկ պատճառահետևանքային փոխազդեցությունների յուրահատուկ շղթա կազմելու փորձ է արվում. այսպես՝ հուզական ոլորտի խաթարումները կապված են դեպրեսիվ խանգարման լուրջ ձևերի հետ, որն ընդհանուր առմամբ բերում է ինքնակործանման (V.Madianos, M.Gefou, C.Stefanis, 1994):

Ուշագրավ են այն աշխատանքները, որոնք ուսումնասիրում են նեգատիվ հույզերի գործոնը՝ որպես աուտոդետրոկտիվ վարքի առաջնային կառույց: Խոսքը մեղավորության և ամոթի հույզերի նեգատիվ սպրումների մասին է, որոնք բավական խորն ու տրավմատիկ են, քանի որ ենթադրում են սեփական Ես-ի բացասական գնահատում, սպառնում են մարդու հեղինակությանն ու ինքնասիրությանը: Դրա հետ կապված մարդիկ հաճախ չարություն ու թշնամանք են զգում: Այստեղ արդեն, կախված անձնավորության ադապտացիոն մեխանիզմների անհատական ոճերից, առաջացած բացասական հույզերն ուղղվում են կամ դեպի սեփական ես-ը, կամ էլ դեպի շրջապատը (Бэрон Р., Ричардсон Д., 1998):

Աուտոագրեսիվ սկտիվությունը ի սկզբանե եղել է հոգեբույժների ուսումնասիրության օբյեկտ: Նրանց և հոգեբանների հետազոտությունների արդյունքների համադրման շնորհիվ հնարավոր եղավ առանձնացնել ուսումնասիրվող ֆենոմենի հոգեբանա-հոգեբուժական գործոնները.

- պահանջումների բարձրացված լարվածություն, ձգտում հուզական մտերմության, հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ձևավորման ցածր կարողություն, ֆրուստրացիան թուլացնելու անկարողություն

- ինպուլսիվություն, հուզական անկայունություն, բարձր ներշնչվողականություն անզիջողականություն և կենսափորձի բացակայություն

մեղքի զգացման և ցածր ինքնագնահատականի առկայություն

- կոնֆլիկտների ժամանակ գերակտիվ հուզական ֆոն, արժեքային
- կողմնորոշումների վերակառուցման դժվարություններ

Ա. Ա. Ռեանը, հետազոտելով ագրեսիվության առանձնահատկությունները դեռահասների մոտ, առաջարկում է ներմուծել անձի աուտոագրեսիվ պատտերնի հասկացությունը (Ռեան, 1997թ.): Աուտոագրեսիան իրենից ներկայացնում է ոչ թե մեկուսացված անձնային հատկություն, կոնկրետ առանձնահատկություն, այլ հանդիսանում է բարդ անձնային կոմպլեքս, որը գործում և դրսևորվում է տարբեր մակարդակներում:

Անձի աուտոագրեսիվ պատտերնի կառուցվածքում հեղինակը առանձնացնում է 4 ենթակառուցվածքներ.

1. Բնութագրական - աուտոագրեսիայի մակարդակը հաջողությամբ համահարաբերակցվում են բնավորության որոշ գծերի և առանձնահատկությունների հետ, ինչպես ինտրովերսիա, պեդանտություն, ցուցադրականություն, նաև դեպրեսիվության և նյարդայնության հետ:

2. Ինքնագնահատականի ենթակառուցվածք - բնորոշում է աուտոագրեսիայի կախվածությունը ինքնագնահատականից: Ինչքան ցածր է սեփական կոգնիտիվ ունակությունների, մարմնի, ինքնուրույնության, վարքում և գործողություններում ինքնավարության կարողությունների ինքնագնահատումը, այնքան բարձր է աուտոագրեսիվ ակտիվությունը:

3. Ինտերակտիվ ենթակառուցվածք - բացահայտում է անձի աուտոագրեսիայի կապը հաջող սոցիալական ադապտացիայի ունակության կամ անկարողության, միջանձնային փոխգործունեության հաջողության կամ անհաջողության հետ: Աուտոագրեսիայի մակարդակը բացասաբար է հարաբերակցվում շփվողականության, և դրական՝ ամոթխածության հետ:

4. Սոցիալական ընկալման ենթակառուցվածք - աուտոագրեսիայի առկայությունը կապվում է այլ մարդկանց ընկալման յուրահատկությունների հետ, սակայն այն ոչ թե ուղիղ համեմատական է այլ մարդկանց բացասական ընկալման հետ, այլ ավելի շուտ հակառակը՝ նշանակալի ուրիշների դրական ընկալման հետ: Մենք ենթադրում ենք, որ վերջին հանգամանքը նեգատիվ ազդեցություն է թողնում սեփական անձի դրական ընկալման վրա:

Դեռահասաների շրջանում կատարված հետազոտությունները վկայում են **սուիցիդալ վարքի հավանականության և բնավորության շեշտվածության** որոշ տիպերի միջև կապվածության մասին: Աուտոագրեսիվ վարքի հավանականությունը բարձր է բնավորության շեշտվածության հետևյալ տիպերի մոտ:

- **Ցիկլոիդ տիպ:** Սուիցիդալ գործողությունները հիմնականում կատարվում են սուբդեպրեսիվ փուլում: Սուիցիդի տանում է հրապարակայնորեն հասցված վիրավորանքը, ստորացումը, անհաջողությունների շղթան, ինչը դեռահասին բերում է իր անպետքության, անլիարժեքության զգացման:

- **Հուզական-լաբիլ տիպ:** Սուիցիդալ գործողություններն իրականացվում են ինտրապոնիտիվ տիպի սուր աֆեկտիվ ռեակցիաների ժամանակ: Սուիցիդալ վարքը աֆեկտիվ է, որոշման ընդունումը և նրա իրագործումը շատ արագ են կատարվում, որպես կանոն նույն օրը:

- **Հիստերոիդ տիպ:** Նրանց բնորոշ են ցուցադրական և ցուցադրական-շանտաժային սուիցիդալ փորձերը:

Վ. Պ. Սամոխվալովի նկարագրում է աուտոագրեսիվ սկտիվության դինամիկան, որը ներառում է առնվազն երկու փուլ՝ **ինիցիալային և դեստրուկտիվ:** Փուլերից յուրաքանչյուրին մի կողմից համապատասխանում է ոչ վերքալ վարքի կոնկրետ տեսակներ, մյուս կողմից՝ որոշակի վերքալ դրսևորումներ:

1. Ինիցիալային փուլ

Վարքի տարրական միավորները.

- **Միմիկա.** տետողական կոնտակտից խուսափում, հայացք պատուհանից դուրս կամ ձեռքերի ուսումնասիրում, այտերի և շրթունքների ուռեցում, բերանի եզրերի իջեցում, հոնքերը օթախժոտ են՝ կամ կուտակված, հոնքերի ներքին եզրը բարձրացված է, ճակատի վրա հորիզոնական կնճիռներ, այքի խնձորակները խամրած են, տրանզիտորային տարրեր են առկա. արցունքներ, լացի միմիկա: Ընդհանրացված բնութագիրը՝ դեպրեսիայի, տառապանքի, ենթարկման միմիկա:

- **Դիրքեր.** նստած դիրքերում - գլուխն իջած է, ձեռքերը հետ են տարված, ուսերը նեղացած են, ոտքերը խաչվում են՝ որպես փակվելու նշան: Կանգնած՝ հակվածություն դեպի ծնկների ծալում և գլխի հետագա իջեցում: Ընդհանուր բնութագիրը՝ ենթարկման դիրքեր:

- **Ժեստեր.** հնազանդության ժեստեր՝ ձեռքը սեղնված է կրծքին կիսախոնարհումով և գլխի իջեցումով, պախի փակում ձեռքերով, թաքնված տազնապի ժեստեր՝ ձեռքը տրորում է պարանոցը, պարանոցը ձգվում է:

- **Խոսքի ոչ վերբալ բաղադրիչներ.** ձայնը ցածր է, տեմբրը թույլ. խոսքային շփման ընթացքում դադարների տևականությունը մեծանում է, որպես ինֆորմացիան և նպատակները թաքցնելու միտում, ձայնավորները երկարացնելու միտում, խոսքային սիստեմի թվի մեծացում, խոսքային ստերեոտիպերի աստիճանական աճ ամբողջ կոնտակտի ընթացքում:

- **Վարքի պարզ բարդույթներ:** Անհատական տարածության մեծացման ձգտում, կոնտակտի ընթացքում կողմնորոշում ֆոտոտաքսիզմի տեսքով՝ խոսելու ընթացքում շրջվում է՝ ուղղվելով լույսի աղբյուրին, դրսևորվում են ինքնաբերելավման (աուտոգրումինգ) աուտոագրեսիվ ձևեր՝ օնիխոֆագիա և տրիխոտիլումանիա:

- **Վարքի բարդ բարդույթներ.** քունը խանգարվում է, քայլվածքը դանդաղ է, հնազանդության դիրքերի պահպանումով, մարմնի և հագուստի մաքրության պահպանման վարքի ապակառուցում, փնտրողական և հետազոտական վարքի վերացում, դեռահասաների մոտ՝ իմիտատիվ վարքի իրականացում Վերթերի ախտանիշի զարգացման ռիսկով, սննդային վարքում՝ անորեքսիա, ընտանեկան-դերային ֆունկցիաների խաթարում, հրաժարում սեռական կոնտակտներից և խաղային ակտիվությունից:

Խոսքային մակարդակում աուտոագրեսիայի ձևավորման ինիցիալային մակարդակին համապատասխանում է մենախոսական խոսքի տեսակը:

2. Դեստրուկտիվ փուլ

Միմիկայի, դիրքերի, ժեստերի տարրական միավորներում, վարքի բարդ ու պարզ բարդույթներում ենթարկման և հնազանդության նշանները արտահայտվում են շրջապատողների հետ ցանկացած տիպի կոնտակտներից խուսափելու արտահայտված, կայուն, գերակայող նշանների կողմից՝ տեսողականից մինչև մարմնական: Հետազոտական վարքը հանգում է այնպիսի տարածության և միջոցների փնտրմանը, որոնք հարմար են աուտոագրեսիվ նպատակների իրականացման համար, աուտոդեստրուկտիվ գործողությունները (մեխանիկական, ֆիզիկական, քիմիական ինքնամասնամներ) կարող են բազմաթիվ լինել, ընդ որում հանդիսանալով կամ ինքնապատակ, կամ նախապատրաստական սուիցիդից առաջ՝ ինքնասպանություն:

Խոսքային մակարդակում դեստրուկտիվ փուլին համապատասխանում է մուտիզմը:

Այս ախտանշանները, ուսումնասիրվելով էթոլոգիական ախտորոշման տեսանկյունից, հնարավորություն են տալիս առանձնացնել աուտոագրեսիայի օբյեկտիվ նշանները այժմ և այստեղ սկզբունքով և կանխատեսել նման վարքը [5.6]:

Այսպիսով, կարելի է փաստել, որ սուտագրեսիվ ակտիվությունը կարող է պատճառաբանվել կենսաբանական, հոգեբանական և սոցիալական գործոններով: Այն հիմնականում հանդես է գալիս որպես ներանձնային կոնֆլիկտի հաղթահարման մեխանիզմ: Գրեթե բոլոր հետազոտողները գտնում են, որ այն կրում է նպատակահարմար, ադապտացիոն, պաշտպանական վարքի բնույթ: Աուտագրեսիան սերտորեն կապված է սոցիալական բնագոյների ոչ համարժեք իրացման հետ, այն ինքնապահպանման բնագոյի աղավաղված դրսևորում է հանդիսանում: Աուտագրեսիվ գործողության կատարման համար անհրաժեշտ է առնվազն երեք բաղադրիչների առկայություն՝ գործունեության սուբյեկտ, իրադրություն և չիրականացած սոցիալական սպասում: Աուտագրեսիվ գործողություններ դրսևորվում են երկու դեպքում՝ երբ մարդու մոտ այդ միտքը ծագում է իմպուլսիվորեն և իրականացվում շատ արագ, և երբ մարդը գտնվելով տևական հոգեդարձման ազդեցությունների ներքո, աստիճանաբար հարմարվում է ինքնավստահության կամ ինքնապահպանման մտքի հետ: Աուտագրեսիան կորելյացիոն կապի մեջ է գտնվում մարդու մի շարք հոգեկան որակների հետ, դրանք են ցածր ինքնագնահատականը, ինտրովերսիան, պեդանտությունը, դեպրեսիվությունը, ամոթխածությունը, սոցիալական ադապտացիայի անկարողությունը, մեղքի և ամոթի զգացումը, նյարդայնությունը, հուզական անկայունությունը, սեփական բացասական հույզերն արտահայտելու անկարողությունը:

Այսպիսով, սուտագրեսիաների առաջացումը պայմանավորված է օբյեկտ (պարտադիր) և ֆակուլտատիվ (լրացուցիչ, բայց ոչ պարտադիր) գործոններով: Նրա գործընթացին և իրականացմանը մասնակցում են ժառանգական նախատրամադրվածությունը, անձի բնավորության շեշտվածությունը, անոմալ (պսիխոպաթիկ) զարգացումը, անձը հյուծող (ապթենիզացնող) մի շարք իրադարձություններ: Այստեղից հետևում է, որ սուտագրեսիան մոնոկաուզալ (մեկ պատճառով պայմանավորված), մոնոպաթոգենետիկ (մեկ մեխանիզմով պայմանավորված) երևույթ չէ, նրա զենեզին մասնակցում են բազմաթիվ գործոններ, ուստի այն պետք է դասվի պոլիգենիաների դասին (բազմաթիվ պատճառներով պայմանավորված):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վ. Ե. Վարդանյան <Անձի հոգեբանական առանձնահատկությունների դերը սուիցիդիալ վարքի պատճառականության շրջայում> Ե. Դավիթ Թագավոր 2008թ., էջ 15
2. Г.Я.Пулягина “К вопросу о клинко патогенетической типологии аутоагрессивного поведения” Таврический журнал психиатрии, 2000г Т.4 №1, стр. 22-24
3. К. Бютнер “Насилие в фантазиях // Психология человеческой агрессивности” Москва 2001г, стр. 48, 40-53.
4. М.Ф.Андрейко, Н.А.Шатайло “Некоторые психологические особенности мотивации суицидального поведения// Медицинские исследования” Москва 2001г, стр. 108-109.
5. В.П.Самохвалов “История души и эволюция помешательства” Сургут 1994г, стр. 286
6. Eibl Eibesfeldt “Human Ethology” New-York 1989y., p.1108.

РЕЗЮМЕ

ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ ИССЛЕДОВАНИЯ АУТОАГРЕССИВНОГО ПОВЕДЕНИЯ ЛИЧНОСТИ

Д. Г. МАРКОСЯН

В статье автор предпринял попытку проанализировать аутоагрессию и ее крайнее проявление: психологические механизмы самоубийства.

Актуальность исследования особенно проявляется в контексте наблюдающегося в настоящее время роста самоубийств.

SUMMARY

PSYCHOLOGICAL ASPECTS REVIEW OF HUMAN BEHAVIOUR

D.H. MARKOSYAN

In the current article the author tried to observe the psychological mechanisms of autoaggressiveness and its extreme forms of expression i.e. suicides. The contemporaneity of the observation is much more outlined in the today's context of increased number of suicides.

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 1(18) 2013 Гуманитарные науки

ՀՏԴ 159.9 : 301.151

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

¹ԱՍՔԱՐԻ ԱՍՂԱՐԻ ԳԱՆՁԻ, ²Կ. Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

¹ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ուսումնագիտական
կենտրոն

² Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան

Ընտանեկան և ամուսնական հիմնախնդիրներն այնքան հին են, որքան ինքը՝ ընտանիքը: Ոչ մի փոխհարաբերության պահպանումը թերևս այնքան բարդ ու դժվարին գործ չէ, որքան ամուսնական փոխհարաբերությունը: Պատմության ընթացքում մասնագետները տարբեր ելքեր ու միջոցներ են առաջարկել ամուսինների բազմաբնույթ դժվարությունների լուծման համար: Քեռոն և Ռիդլին այդ դժվարությունների արմատը գտնում են մանկության շրջանում ձևավորված պահանջ-մոտրքների և ակնկալիքների մեջ [1]: Մտեյրի կարծիքով ընտանեկան բարդությունների մեծ մասը հետևանք են քայքայող ու սավերիչ հարաբերությունների, իսկ սավերիչ հարաբերությունները կնոջ և տղամարդու մանկության շրջանում ստացած դաստիարակության և ներկայիս անիրատեսական ու չարտահայտված ակնկալիքների արդյունք են [2]:

Բարքերի կարծիքով ամուսնական և ընտանեկան կյանքի շատ դժվարությունների պատճառը հայրական տնից հոգեբանորեն չբաժանվելու և ինքնուրույն չլինելու գործոնն է [3]:

Ըստ ռացիոնալ-հուզական տեսության՝ ամուսնական զույգերի կոնֆլիկտների և հակադրությունների պատճառները ոչ տրամաբանական կարծիքներն ու պատկերացումներն են: Երբ զույգերից մեկը կամ երկուսը ոչ տրամաբանական ու անիրատեսական պատկերացումներ ու կարծիքներ են ունենում իրենց փոխհարաբերությունների մասին, ցուցաբերում են բացասական և հիվանդագին հակազդեցություններ: **Էլիսի** տեսության համաձայն՝ ամուսնական զույգերի միջև ծագող տարաձայնություններն ու ընդհարումները պայմանավորված են նրանց ոչ

տրամաբանական ընկալումներով և պատկերացումներով: Դժվարությունները հարթելու ամենսարդյունավետ ուղին՝ ամուսինների ոչ տրամաբանական համոզմունքների և կարծիքների փոփոխությունն է [5]:

Գլասերի տեսության համաձայն՝ անսովոր վարքը առաջանում է սեփական վարքը ճիշտ գնահատելու անկարողությունից և մշտապես անցանկալի ու վատ հետևանքներ ունեցող վարքագծերի ընտրությունից: Գլասերը կարծում է, որ ամուսինների ընդհարումները առաջանում են սխալ և անպատասխանատու վարքի ընտրությունից: Գլասերն այն կարծիքին է, որ գույգերի պահանջմունքների միջև անհամապատասխանությունը, այդ պահանջմունքների իրատեսական չլինելը և սեփական վարքի գնահատման անկարողությունը հրահրում են ամուսինների միջև ծագող խնդիրները: Նա գտնում է, որ դժվարությունները նվազեցնելու լավագույն ուղին վարքագծի փոփոխությունն է ճիշտ և օգտակար արարքների ընտրության միջոցով: Փոփոխությունը կարելի է իրականացնել ընտրելով այնպիսի վարքեր, որոնք բարելավում են ամուսինների փոխհարաբերությունները [6]:

Այս հոդվածը նպատակ ունի հստակեցնել հոգեբանական տարբեր տեսությունների մոտեցումներն ու պատասխաններն այս հարցին՝ իհարկե, շեշտը դնելով Էլիսի և Գլասերի տեսությունների գուգահեռ համեմատության վրա:

Հոգեվերլուծական տեսությունը ամուսնական կյանքի դժվարությունների արմատները փնտրում է մանկության շրջանից մնացած ակնկալիքների և սպասելիքների հիշողության մեջ: **Քրոն և Ռիդլին**, ելնելով հոգեվերլուծական հոգեբանության դրույթներից, ենթադրում են, որ ամուսնությունն իր էությանը երկու հարթություն ունի՝ գիտակցական և անգիտակցական: Անգիտակցական մակարդակը ծնվում է ամուսինների մանկության շրջանի սկզբնական փորձից և մանկության շրջանի անգիտակցական կողմերից: Հոգեվերլուծության տեսանկյունից, վաղ մանկության շրջանում մանկան անգիտակցականում ձևավորվում է ծնողական սիրո և գուրգուրանքի նախնական մի պատկեր կամ մոդել, որը հետագայում փոխանցվում է նրա հասուն տարիքի սիրային կապի և ամուսնական կյանքի մեջ [1]:

Հոգեվերլուծական տեսության առանցքային բառերը «**կապվածություն**» և «**կորցնել**» հասկացություններն են: **Բալերիի** համոզմամբ երկկողմանի տազնապալի կապվածություն ունեցող մարդիկ հետագայում իրենց փոխհարաբերությունների մեջ ավելի հաճախ են ունենում անհաջողություններ ու անսխալտություններ [7]:

Վալն այն կարծիքին էր, որ ամուսինների վատ վերաբերմունքի պատճառներից մեկը չարտահայտված զգացումները, խեղդված հույզերը և գուգրնկերոջ հետ չլիավելն է: Դա գուցե մանկության շրջանից եկած ու

ձևավորված սովորությունն և վարք է, որ մեկ այլ կերպով արտահայտությունն է գտնում ամուսնական կյանքում: Օրինակ, տղամարդն իրեն թույլ չի տալիս իր բարկությունն ու բողոքն արտահայտել իր կնոջը՝ աշխատանքով կամ կարիերայով չափազանց տարվելու և աշխատանքի պատճառով ամուսնուն բավականաչափ ուշադրություն չտրամադրելու կապակցությամբ: Այդ չարտահայտված զգացումները թաքնված ու պասսիվ կերպով կուտակվում կամ էլ հանկարծակիորեն պայթում են, ուժգնությամբ դուրս թափվում:

Վարքային տեսությունը հիմնական շեշտը դնում է ամուսնական հարաբերության կիրառական ու գործնական կողմի վրա, ինչպես օրինակ, իրավունքների և պարտավորությունների բաշխում, երկխոսելու կամ զրուցելու կարողություն, հստակ ու արդյունավետ փոխհարաբերություն[1]: Վարքային մոտեցման համաձայն՝ ամուսնական տարաձայնություններն ու կոնֆլիկտները մեծ մասամբ բնութագրվում են իբրև գույգերի կողմից միմյանց նկատմամբ կատարվող պարզևատրման կամ պատժի գործընթաց: Վարքային տեսության մոտեցմամբ ամուսնությունը պայմանական մի իրավիճակ է, որտեղ կինն ու տղամարդն ունեն որոշակի պարտավորություններ և սկնկալիքներ: Երբ ամուսիններն զգում են, որ իրենց վարքագիծը համատեղ կյանքում չի արժանանում գուզընկերոջ հովանավորմանն ու գնահատանքին, սկսում են իրար մեղադրել և ճնշում բանեցնել միմյանց նկատմամբ:

Ըստ ճանաչողական-վարքային տեսության՝ ամուսնական կյանքի դժվարությունները սկսվում են գույգերի բացասական մտքերից, թյուր հիմնավորումներից և անտեղի սկնկալիքներից, ուստի հոգեբանը ամուսիններին օգնում է տեսնել և հաղթահարել սեփական սխալ ճանաչողությունը, ընկալումները և անտեղի սպասելիքները: Ամուսինների հետ տարվող համաժամանակյա ճանաչողական աշխատանքը երեք հիմնական փուլից է բաղկացած՝ 1. ամուսինների անտեղի և անիրատեսական սպասելիքների որոշարկում և բարեփոխում, 2. երկու կողմերի սխալ փաստարկումների և հիմնավորումների շտկում, 3. սպակառուցողական ու ավերիչ փոխհարաբերություններից խուսափելու նպատակով ճիշտ վարքագծի ուսուցում [7]:

Բանական-հուզական (ռացիոնալ-հուզական) տեսության համաձայն՝ ամուսնական կոնֆլիկտների գլխավոր դրդապատճառը անիրատեսական և ոչ տրամաբանական կարծիքներն ու համոզմունքներն են [8]: Ամուսինների փոխհարաբերություններում լուրջ դժվարությունների ու խանգարումների առաջացման կարևոր գործոններից մեկը նրանց սխալ պատկերացումներն ու կարծիքներն են ամուսնության և սիրո մասին, որոնք ամուսինների մոտ ձևավորում են անիրական, անձկուն և վնասակար մտքեր ու մոտեցումներ այդ երկու հասկացությունների վե-

րաբերյալ: **Էլիսի և Հարփերի** տեսակետից, «պիտիները» հոգեբանական խանգարումների անբաժանելի մասն են կազմում: Դժվարություններ հարուցող «պիտիները» երկու խմբի են բաժանվում՝ 1. ես պիտի ամբողջովին և կատարյալ ձևով բարոյական վարվեմ 2. ուրիշներն էլ պիտի ամբողջովին և կատարելապես բարոյական նորմերով վարվեն:

Առաջին խմբի անիրատեսական «պիտիները» անձի մոտ առաջացնում են մեղքի, տագնապայնության և թերահավատության զգացումներ, իսկ երկրորդ խմբի «պիտիները» կասկածամտություն, թշնամանք, ուրիշների դատապարտում և իրեն ճիշտ համարելու համոզմունք: Մարդիկ հաճախ այս երկու խումբ պիտիները ներմուծում են իրենց նախամոմսական և հետամոմսական կապերում, որի արդյունքում, ինչպես և կարելի է սպասել, հասնում են սեփական անձի և միմյանց հանդեպ ստեղծության զգացումի [5]:

Փորձարարական-հումանիստական տեսությունը շեշտը դնում է մտքում ձևավորված կաղապարների ու փորձի, հատկապես նախնական կամ առաջնային հույզերի արտահայտման ու արտագատման վրա: Ամուսինները անապահովության զգացումի պատճառով իրար նկատմամբ պաշտպանական դիրքորոշում են կիրառում: Երևացող ու արտահայտվող հույզերը երկրորդական հույզերն են, այսինքն պաշտպանական հուզական ռեակցիաներ են: Այս տեսությունը փորձում է ամուսիններին իրազեկ դարձնել այդ թաքնված հույզերին և դրանով իսկ փոխել երկու կողմերի փոխհարաբերության էությունը:

Համակարգային տեսությունը (ամբողջ ընտանիքի խորհրդատվությունը) իր աշխատանքներում ներգրավում է ընտանիքի բոլոր անդամներին և ընտանեկան բոլոր կապերը, որոնց գլխավոր բաղադրամասն են համարվում ամուսինների փոխհարաբերությունները: Այլ խոսքով, ընտանեկան խորհրդատվության գործընթացում ընտանիքը դիտվում է իբրև մեկ ամբողջական համակարգ: Եթե ընտանիքում տիրում է որոշակի հավասարակշռություն, ապա ընտանիքն ի գործ է արտաքին խանգարիչ միջամտության կամ տարբեր տեսակի սպառնալիքների դեպքում վերահաստատել նախկին հաշվեկշիռը [3]:

Ընտրության տեսությունը առաջադրվել է **Գլասերի** կողմից 1995-1998 թթ.: Այն զգալիորեն նպաստեց մարդկային վարքը տարբեր պայմաններում և իրավիճակներում ճանաչելու գործին: Այս տեսությունը բացատրում է, թե մենք ինչպե՛ս և ինչն՝ ենք կատարում մեր կյանքի բախտորոշ ընտրությունները: Ըստ ընտրության տեսության՝ մեր վարքը մեր իսկ վերահսկողության տակ է գտնվում: Գլասերի կարծիքով մարդկանց և նրանց վարքագծի վերահսկման հնարավորությունը «**կոնտրոլի հոգեբանության**» հետևորդների տեսակետն է: Ըստ Գլասերի՝ ուրիշ մարդկանց

վերահսկելու և կառավարելու ձգտումը կարող է տարբեր դժվարություններ առաջացնել մարդկային փոխհարաբերություններում [9]:

Այլ կերպ ասած, «**Ընտրության հոգեբանությունը**» բարեփոխում ու կրճատում է «**Վերահսկման (Կոնտրոլի) հոգեբանության**» հետևանքով առաջացող վնասները:

Ընտրության տեսության համաձայն՝ մենք ենք ընտրում մեր բոլոր գործողություններն ու հոգեվիճակները, դրանց թվում նաև դժբախտ լինելու զգացումը: Ուրիշները ո՛չ կարող են մեզ երջանկացնել, ո՛չ էլ դժբախտացնել: Մենք ընդամենը ուրիշներից վերցնում կամ ուրիշներին տալիս ենք տեղեկատվություն: Մակայն դա ինքնին և ինքնաբերաբար չի կարող մեզ մղել որևէ գործ կատարելու կամ զգացողություն ունենալու: Մենք ենք ընտրում, թե ինչպե՛ս վերաբերվենք այդ տեղեկատվությանը, նաև մենք ենք ընտրում, թե ինչպիսի՛ և ի՛նչ ծավալի տեղեկատվություն ենք տրամադրում ուրիշներին: Մենք պատասխանատու ենք միայն մեր ընտրությանը կատարած գործերի համար: Որքան փոխենք սեփական վարքը և խուսափենք ուրիշներին իրենց չսիրած գործերը պարտադրելուց, այդքան ավելի լավ փոխհարաբերություններ կկառուցենք մարդկանց հետ [6]:

Գլխաւերը ամուսնական գույգերի հետ հոգեբանական-խորհրդատվական աշխատանքը զուգահեռաբար է անցկացնում՝ նպատակ ունենալով կրճատել գույգերի վերահսկողությունը միմյանց նկատմամբ և նրանց ուշադրությունը ուղղորդել սեփական անձի վերահսկման կողմը: Ամուսինների հետ զուգահեռ ու համատեղ բուժում իրականացնելով՝ Գլխաւերն իր առջև նպատակ է դնում գույգերի մոտ կրճատել արտաքին վերահսկողության հոգեբանությունը և խթանել ներքին վերահսկողության հոգեբանությունը: Այս մեթոդով ամուսինները կարող են լուծել իրենց կոնֆլիկտները և հասնել ամուսնական կյանքի առավել բավարարվածության [9]:

Ամուսնական գույգերի դժվարությունների լուծման գործում **Էլիսի ճանաչողական տեսության և Գլխաւերի ընտրության տեսության ազդեցության համեմատությունը** մատնանշում է նրանց միջև առկա որոշակի նմանություններ և տարբերություններ: Ինչպես ասվեց, **Էլիսի տեսակետից** ամուսնական կյանքի հսկողությունների հիմնական պատճառը ամուսինների ոչ տրամաբանական ընկալումներն ու կարծիքներն են, մինչդեռ **Գլխաւերի համոզմամբ** ամուսնական կյանքի դժվարությունների պատճառը ամուսիններից մեկնումեկի կամ երկուսի կողմից միմյանց հանդէպ վերահսկողություն բանեցնելու փորձերն են: Դժվարությունների կրճատման համար Էլիսը կենտրոնանում է գույգերի ոչ տրամաբանական համոզմունքներն ու ընկալումները փոխելու հարցի վրա, իսկ Գլխաւերը նույն նպատակով առաջարկում է սրոյունաւետ ու դրական վարքերի (փոխհարգանք, հանդուրժողականություն, բարեկամություն, հովանավորում, քաջաւերանք, երախտագիտություն, երկխոսու-

թուն, միևնույն լսելու կարողություն և այլն) ընտրության մեթոդը, որոնք պիտի փոխարինեն անարդյունավետ ու բացասական վարքերին (քննադատություն, նախատում, բողոքում, գանգատում, սպառնացում և այլն): Էլիսը ձգտում է մտքի ու մտածողության միջոցով, այսինքն տրամբանական մտածողության խթանմամբ լուծել ամուսինների դժվարությունները, իսկ Գլասերը փորձում է խթանել ամուսինների ներքին վերահսկման և սեփական անձի վարքագծերի ընտրության գործունը: Գլասերը փոփոխությունն սկսում է սեփական վարքի գնահատմամբ ու նոր վարքի ընտրությամբ, իսկ Էլիսը այդ փոփոխությունն սկսում է մտքից, ձևավորված ընկալումներից ու կարծիքներից:

Ամուսնական զույգերի հիմնախնդիրների կրճատման ու բարելավման ուղղությամբ կարելի է առաջադրել մեկ այլ մեթոդ, այսինքն վերը նշված երկու մեթոդների **համադրված մեթոդը**, որտեղ հոգեբանը փորձում է փոխել ոչ տրամաբանական մոտեցումներն ու ընկալումները՝ միաժամանակ շեշտելով արդյունավետ վարքի ընտրության անհրաժեշտությունը: Այսպիսով՝ փորձ է արվում ամուսինների ուշադրությունը հրավիրել և՛ սեփական ընկալումների ու համոզմունքների վրա, և՛ վարքագծերի ու դրանց արդյունավետության վրա:

Ելնելով յուրաքանչյուր մարդու առանձնահատկություններից՝ փոփոխությունը պետք է սկսել այն կետից, որն ավելի հեշտ ու սահուն է տվյալ անձի համար: Այս մեթոդում համադրվում են վերոնշյալ երկու մեթոդների տեխնիկաներն ու ձևերը: Համադրված մեթոդում կարևորվում են և՛ Էլիսի տեսության, և՛ Գլասերի տեսության դրույթները, այսինքն և՛ մտքերի ու ընկալումների փոփոխությունը, և՛ սեփական վարքի գնահատումը: Համադրված մեթոդի մեջ կիրառում ենք թե՛ Էլիսի տեսության դրույթն առ այն, որ անտրամաբանական մտքերն ու ընկալումներն են ամուսնական կյանքի հակադրությունների պատճառը, և թե՛ Գլասերի տեսության դրույթն առ այն, որ յուրաքանչյուր անձ ունի իր հատուկ պահանջները, որոնց հասնելու համար ընտրում է որոշակի վարք, և ինքն է ընտրում ու վերահսկում իր վարքը: Այսպիսով՝ ամուսնական կյանքի հակադրությունները արդյունք են մի կողմից՝ անարդյունավետ կամ անպատասխանատու ընտրության, և մյուս կողմից՝ երկրորդ կողմին վերահսկելու փորձերին, հետևաբար, համադրված մեթոդում անտրամաբանական մտքերը փոխելու նպատակով Էլիսի տեսությունից վերցնում ու կիրառում ենք ճանաչողական-հուզական տեխնիկաները, իսկ սեփական վարքի գնահատման և առավել արդյունավետ վարքի ընտրության նպատակով Գլասերի տեսության հիման վրա այլանավորում ենք արդյունավետ վարքի ընտրությունը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ արձանագրում ենք, որ այս ուսումնասիրության արդյունքները և խորհրդատու-հոգեբանի աշխա-

տանքային պրակտիկայում մեր սեփական դիտարկումներն ու փորձը մեզ թույլ են տալիս եզրակացնելու, որ հոգեբանական բոլոր մոտեցումները նվազ կամ ուժեղ արդյունաբերությամբ, այս կամ այն կերպ նպաստում են ամուսնական կյանքի հիմնախնդիրների լուծման և ամուսինների փոխհարաբերությունների բարելավման գործին:

Մեր ուսումնասիրություններն ու կլինիկական պրակտիկան մասնանշում են, որ ամուսինների հետ զուգահեռ բուժումներ անցկացնելու Գլասերի մեթոդը ավելի արդյունավետ է գործում Էլիսի ճանաչողական տեսության տեխնիկաների համեմատությամբ: Թերևս այս փաստի պատճառը Գլասերի կողմից սեփական ընտրության և անձի դերակատարության շեշտադրումն է: Երբ ամուսնական զույգերից մեկը կամ երկուսը հասնում են այն համոզմունքի, որ իրենք են տնօրինում իրենց վարքը և ամեն ոք ինքը պետք է աշխատի իր ամուսնական կյանքի պահպանման համար, այդ գիտակցությունը հրաշալի ազդեցություն է թողնում և զգալի կերպով խթանում հիմնախնդիրների կրճատման ու լուծման աշխատանքները: Մեր հոգեբանական-խորհրդատվական պրակտիկ փորձում մենք բազմաթիվ անգամ արձանագրել ենք այս փաստը:

Մյուս կողմից, այս երկու մեթոդների համադրված տարբերակը կարողանում է ավելի արդյունավետ գործել: Ինչպես իրավամբ նկատել են **Սինդերը** և **Շնայդերը**, տարբեր տեսությունների դրույթների և տեխնիկաների ճիշտ համադրումը հաճախ ավելի է մեծացնում նրանց արդյունավետությունը, քանի որ մի քանի տեսության կիրառումը հնարավորություն է տալիս ավելի արդյունավետորեն որոշարկել, նախատեսել և վերահսկել խնդիրները: Յուրաքանչյուր տեսություն մասնագետ-հոգեբանին տալիս է երևույթը որոշարկելու, սահմանելու, միջառարկայական կապերը գտնելու և վերահսկելու կարողություն: Ուժեղ է այն տեսությունը, որը հնարավորություն է տալիս առավելագույնը գտնել ու հստակեցնել խնդիրների փոխադարձ կապերը և առաջադրել գործնական ուղիներ ու միջոցներ: Եթե խնդրի լուծման համար առաջնորդվենք միայն մեկ տեսության դրույթներով, ավելի փոքր թվով լուծումներ ու միջոցներ կունենանք: Այս պատճառով, երբ խորհրդատու-հոգեբանը զուգահեռաբար կիրառում է մեկ կամ մի քանի տեսության հիմնադրույթները, կարողանում է գործնական միջոցներ առաջարկել տարբեր իրավիճակներում գտնվող իր դիմորդներին: Այսպիսով՝ արդյունավետորեն համադրված տեսությունները խորհրդատուին հնարավորություն են տալիս առավել բարձր արդյունքներ արձանագրել ամուսնական դժվարությունների հաղթահարման գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Քրո, Մայքել, Ռիդլի, Չին, Վանուսական գույգերի հետ թերապևտիկ գործնական աշխատանք համակարգային-վարքային մոտեցմամբ, թարգմ. Աշրաֆ սլ-Սադաթ Մուսալի, Թեհրան, Քալյան հրատարակչություն, 2005, էջ 40-42:
2. Փարքեր, Ֆիլիպ, Ընտանիք-թերապիա, թարգմ. Մոհսեն Դեհղանի և Ջոհրե Դեհղանի, Թեհրան, Ռոշդե հրատարակչություն, թարգմ. Ջավադ Թահուրյան, Թեհրան, 1996, էջ 201-205:
3. Թամպսոն, Չարլզ, Ռոդոլֆ Լինդալի, Խորհրդատվական աշխատանք երեխաների հետ, թարգմ. Ջավադ Թահուրյան, Թեհրան, Ռոշդե հրատարակչություն, 2005, էջ 302-305:
4. Bradbury, T.M. & Frincham, E.D. (1990) , Preventing marital disfunction: Rewiew and analysis in E. D., Fincham & T.N., page 207-209:
5. Էլիս, Ալբերտ, Հարփեր, Ռաբերթ, Հաջող ամուսնության ուղեցույց, թարգմանիչ Էլիսա Շաֆիի, Ռասսե հրատարակչություն, 2008, էջ 45-49:
6. Գլասեր, Վիլիամ, Ընտրության տեսություն, թարգմ. Մեհրդատ Ֆիրուզբախտ, Թեհրան, Ռասսե հրատարակչություն, 2005, էջ 22-28:
7. Թադ, Ջոդիթ, Սի, Արթուր, Հարթ, Բո, Հոգեբանության և խորհրդատվության հիմունքներ, թարգմանիչ՝ Մեհրդատ Ֆիրուզբախտ, Թեհրան, Ռասսե հրատարակչություն, 2008, էջ 303-307:
8. Քարի, Ջարալե, Խորհրդատվություն և հոգեբուժում. Տեսություն և պրակտիկա, թարգմ. Յահիա Սեյդ Մոհամմադի, Թեհրան, Արասբարանե հրատարակչություն, 2006, էջ 28 և 205:
9. Գլասեր, Վիլիամ, Գլասեր, Քարլին, Վանուսական՝ առանց ձախողման, թարգմ. Սոմայիա Խոշ Նիսթ և Հոդա Բարազանդե, Թեհրան, Մոհալեղ հրատարակչություն, 2005, էջ 46, 55:

РЕЗЮМЕ
РАЗНЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К РЕШЕНИЮ
БРАЧНЫХ КОНФЛИКТОВ
АСКАРИ АСХАРИ ГАНДЖИ, К. Е. ВАРДАНЯН

В статье обсуждаются влияние и эффективность разных психологических подходов в вопросе решения брачных конфликтов. На основе результатов наших исследований можно заключить, что все психологические подходы в той или иной мере эффективны в вопросе сокращения брачных проблем, а методы, предложенные Гласером, связанные со своевременными дискуссиями, веденными с брачной парой, действуют еще более эффективно. С другой стороны, метод Гласера более эффективен, чем техники познавательной теории Элиса. Совмещенное и взаимодействующее применение этих двух методов дает более высокие результаты.

SUMMARY
THE EFFECT OF PSYCHOLOGICAL APPROACHES IN
IMPROVING MATRIMONY PROBLEMS
ASKARI ASGHARI GHANJI, K. E. VARDANYAN

Through comparative analysis of Ellise's Cognitive and Glaser's Choice theories, the present research has considered the effects of psychological approaches in improving matrimony problems. The research results showed that all psychological approaches have differently reduced and improved the matrimony problems. Moreover, the results of comparison between Ellise's Cognitive and Glaser's Choice theories revealed that marriage therapy techniques of Glaser are more effective than Ellise's Cognitive techniques. In the other hand, syncretic method of the two theories is more effective than each theory alone.

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՄԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ № 1(18) 2013 Гуманитарные науки

ՀՏԴ 159.9 : 373

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՄՏԱՎՈՐ ՀԵՏԱՄՆԱՑ
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐՈՑԱԿԱՆ ՊԱԿՏԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ա.Վ. ՅԱՅԼՈՅԱՆ

*Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական
ինստիտուտ*

Հավաստիացնող գիտափորձի առաջին խնդրին համապատասխան (օգնություն և ապրումակցում ցույց տալու արարքների բացահայտում ու վերլուծություն)՝ մենք պետք է ուսումնասիրենք ավագ նախադպրոցական տարիքի մտավոր հետամնաց երեխաների բարոյական պատկերացումները (ապրումակցման և փոխօգնության դրսևորման դեպքում):

Նախքան մեր կողմից հետազոտվողների բարոյական պատկերացումների հետազոտության անցնելը, մենք կարևորեցինք հետևյալ խնդիրները.

1. Բացահայտել մտավոր հետամնաց նախադպրոցականների բարոյական պատկերացումների առկայությունը և բովանդակությունը (կարեկցանքի և փոխօգնության արտահայտման դեպքում):
2. Բացահայտել բարոյական պատկերացումների պայմանավորվածությունը առկա անբարենպաստ իրադրության արտահայտման աստիճանից և ընկալման միջոցից:
3. Համեմատել ստացած տվյալները նախադպրոցական տարիքի բնականոն զարգացող երեխաների բարոյական պատկերացումների հետ և դրա հիման վրա բացահայտել մտավոր հետամնաց նախադպրոցականների բարոյական պատկերացումների առանձնահատկությունները:

Առաջադրված խնդիրների լուծման համար մեր կողմից կիրառվել են հետևյալ մեթոդիկաները.

1. Բարոյական բնույթի իրադրության պայմաններում վարքագծի ընտրություն
2. Բարոյական բովանդակության նկարների բնութագրում

3. ոչ վատ արտահայտված բարոյական պատմվածքի ընկալում:

Բարոյական բնույթի պայմանական իրադրություններում վարքագծի որոշման համար փորձարկվողներին անհատական գիտափորձում առաջարկվեց երեք պարզ բարոյական իրադրություն:

1. Պատկերացրու՝, որ դու տուն ես կառուցում: Քո կողքին տուն է կառուցում նաև հարևանդ: Նրան աղյուսը չի բավարարում: Ի՞նչ կանես...

2. Եթե դու ինչ-որ մեկի հետ զբոսնես, և նա ընկնի ու վնասի ոտքը, ի՞նչ կանես դու:

3. Ի՞նչ կանեիր, եթե տեսնեիր , որ քո խմբի մի աղջիկը լաց է լինում:

Բոլոր իրադրությունները մոտ էին մտավոր հետամնաց նախադրոցականների փորձին, սակայն միմյանցից տարբերվում են իրենց բովանդակությամբ, հետևաբար պահանջում էին օգնության ցուցաբերման տարբեր միջոցներ: Առանձին իրադրությունը ենթադրում էր վարքի գծերի ընտրություն այն պայմաններում, երբ երեխաներից մեկի մոտ խաղային նյութի՝ աղյուսի ավելացում է , իսկ մյուսի մոտ՝ պակաս: Երկրորդ իրադրության ժամանակ երեխաները պետք է օգնեն իրենց հասակակիցներին զանազան իրադրությունների ժամանակ՝ ընկալվ, վնասեց ոտքը և այլն: Երրորդ իրադրության ժամանակ երեխաները պետք է նեցուկ լինեն հոգեկան անհարմարության մեջ գտնվող իրենց ընկերոջը (լաց է լինում, տխրում է):

Հավաստիացնող գիտափորձին մասնակցում էին քառասուն մտավոր հետամնաց ավագ նախադրոցական տարիքի երեխա: Գիտափորձը անցկացվում էր 2005 թվականի ապրիլ-հունիս և սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Արձանագրության մեջ նշվում էր երեխաների հակազդման բնույթը և պատասխանների բովանդակությունը:

Հավաստիացնող գիտափորձերի արդյունքները և ստացած տվյալների վերլուծությունը վկայում են այն մասին, որ մտավոր հետամնաց երեխաները պատկերացնում էին իրենց ներկայացվող իրադրությունը և նրանում գործելու անհրաժեշտությունը: Այսպես, օրինակ, նրանք ստում էին. <Կտամ իմ աղյուսները>, <Կտամ խաղալիքներս> և այլն:

Երեխաների պատասխաններն ըստ բնույթի մենք խմբավորել ենք հետևյալ կերպ.

- հրաժարվում է օգնություն ցույց տալուց,
- պատասխաններ, որոնք չեն ենթադրում օգնության ցուցաբերում,
- պատասխաններ, որոնք ներառում են օգնության ցուցաբերման միջոցներ:

Յուրաքանչյուր իրադրության ժամանակ պատասխանների բնույթի մասին քանակական տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակից երևում է, որ ըստ նախադպրոցականների պատասխանների բավականին մեծ տոկոս (20,8%) են կազմում որևէ օգնության ցուցաբերման առաջարկից հրաժարվողները: Այն արտահայտվում էր կամ պատասխանին որևէ հակազդման բացակայությամբ կամ <չգիտեմ> արտահայտությամբ:

Աղյուսակ 1

Պայմանական իրադրության ժամանակ մտավոր հետամնաց նախադպրոցականների վարքային դրսևորումների ընտրման դեպքում պատասխանների բնույթը

| Իրադրություն | Փորձարկվողների քանակը | Օգնության ցուցաբերման որոշակի միջոցներ պարունակող պատասխաններ | | Պատասխաններ, որոնք չեն պարունակում օգնության ցուցաբերման միջոցներ | | Հրաժարվում են օգնություն ցուցաբերել | |
|--------------|-----------------------|---|------|---|------|-------------------------------------|------|
| | | բաց. | % | բաց. | % | բաց. | % |
| I | 40 | 14 | 35 | 19 | 47,5 | 7 | 17,5 |
| II | 40 | 20 | 50 | 15 | 37,5 | 5 | 12,5 |
| III | 40 | 10 | 25 | 17 | 42,5 | 13 | 32,5 |
| Ընդամենը | 40 | 44 | 36,7 | 51 | 42,5 | 25 | 20,8 |

Հրաժարվելը կարող էր պայմանավորված լինել տարբեր պատճառներով: Այսպես, պատճառներից մեկը կարող էր լինել այն, որ մտավոր հետամնացը չէր կարող պատկերացնել նկարագրված իրադրությունը, որում գտվում էր իր ընկերը:

Մյուս պատճառը կարող էր պայմանավորված լինել մտավոր հետամնաց նախադպրոցականների խոսքի զարգացման առանձնահատկություններով: Քանի որ (1) տվյալների համաձայն՝ մտավոր հետամնացների մեջ նկատվում է սահմանափակ բառապաշար, հատկապես ակտիվ բառապաշարը ուշ է ձևավորվում, շրջակա միջավայրի խոսքը դժվարությամբ են ընկալում: Այդ ամենի արդյունքում կամ չեն հասկանում հարցի բովանդակությունը, կամ չեն կարողանում ձևակերպել պատասխանները:

Երրորդ պատճառը կարող է լինել այն, որ մտավոր հետամնաց նախադպրոցական տարիքի երեխաների մեջ բացակայում են տվյալ իրադրությունում իրենց պրակտիկ գործողությունների և դրանց կատարման, հմտությունների մասին պատկերացումները:

Բացի այդ, հրաժարվելը կարող է պայմանավորված լինել նաև նրանով, որ մտավոր հետամնացներին բնորոշ է դժվարություններից խուսափելը: Նրանք չեն ցանկանում կատարել այնպիսի հանձնարարություններ, որոնք պահանջում են որևէ ջանք:


Հետաքրքիր է նշել, որ ավելի շատ են հրաժարվել օգնություն ցույց տալ երրորդ իրադրությունում (32,5%), քան՝ մյուս երկու իրադրություններում. համապատասխանաբար 17,5 և 12,5%:

Մտավոր հետամնաց նախադպրոցականների տված պատասխաններից 42,5%-ը չէին պարունակում անբարենպաստ պայմաններում հայտնված իրենց տարեկիցներին օգնություն ցուցաբերման որևէ միջոց: Հաճախ նրանք պատասխանում են այսպես. <Չկան աղյուսներ>, <Ինձ էլ են դրանք պետք>, <Ես չգիտեմ՝ ինչու է նա լաց լինում> և այլն:

Թեև այդ պատասխաններում չկան օգնության ցուցաբերման միջոցների առաջարկներ, այնուամենայնիվ, դրանք վկայում են ինչպես իրադրության բովանդակության խոսքային նկարագրության, այնպես էլ՝ բարոյական ընկալման մասին: Մակայն այդ պատասխանները, ինչպես նաև հրաժարվելը, թույլ չեն տալիս մեզ հատուկ կարծիք կազմել մտավոր հետամնաց նախադպրոցականների բարոյական պատկերացումների մասին:

Փորձարկվողների բարոյական պատկերացումների բովանդակության մասին մենք դատում ենք այն պատասխաններով, որոնք պարունակում էին օգնության ցուցաբերման որոշակի միջոցներ: Դրանք, ինչպես երևում է աղյուսակից, այնքան էլ շատ չեն, ընդամենը՝ 36,7%: Ի դեպ, մտավոր հետամնաց նախադպրոցականները առավելապես դժվարանում էին պատասխանել հատկապես երրորդ իրադրության ժամանակ: Այստեղ պատասխանների միայն 25% էին պարունակում օգնության ցուցաբերման որոշակի միջոցներ, այն դեպքում, երբ փորձարկվողների 75%-ը կամ հրաժարվում էին օգնության ցուցաբերման առաջարկից կամ նրանց պատասխանները չէին պարունակում օգնության ցուցաբերման միջոցներ (Նկար 2):


1. Եթե դու կառուցեիր տուն և կողքին ինչ-որ մեկն էլ կառուցեր, ու նրան չբավարարեր խորանարդներ, ապա ի՞նչ կանեիր դու:
2. Եթե դու ինչ-որ մեկի հետ զբոսնես, և նա ընկնի ու վնասի ոտքը, ապա ի՞նչ կանեիր դու:
- Ի՞նչ կանեիր. եթե տեսնեիր, որ խմբում աղջիկը լաց է լինում



Նկար 2. Պայմանական իրադրություններում հետազոտվողների վարքագծի ընտրության պատասխանների բնույթը

Պայմանական իրավիճակներ

■ Պատասխաններ, որոնք պարունակում են օգնության ցուցաբերման որոշակի միջոցներ



■ Պատասխաններ, որոնք պարունակում են օգնության ցուցաբերման որոշակի միջոցներ, ինչպես նաև խորանարդներ, ինչպես նաև խորանարդներ և հաղորդակցման հաստատում /կիսադարձվերոջ հետ, միջափն կկառուցեն/

■ Պատասխաններ, որոնք պարունակում են օգնության ցուցաբերման որոշակի միջոցներ, ինչպես նաև խորանարդներ և հաղորդակցման հաստատում /կիսադարձվերոջ հետ, միջափն կկառուցեն/ և մեծերին դիմել օգնության համար /դիմել դաստիարակյին, կանչել բժշկին/:

Աղյուսակ 2

Մտավոր հետամնաց նախադպրոցականներին առաջարկվող օգնության ձևերը պարզ բարոյական իրավիճակների լուծման դեպքում

| Օգնության ձևերը | | | | | | | | | | | | | |
|-----------------|-----------------------|----------------------------|------|--------------------------------------|------|---------------------------|-----|--|----|--------------------------------------|------|-------------|------|
| Իրավիճակ | Փորձարկվողների քանակը | Տարրական իրական օգնություն | | Նյութական արտահայտությամբ օգնություն | | Պրակտիկ հատուկ օգնություն | | Օգնություն, որն արտահայտվում է բարոյապես | | Հասակակցի հետ հաղորդակցման հաստատում | | Դիմել մեծին | |
| | | Բաց | % | Բաց | % | Բաց | % | Բաց | % | Բաց | % | Բաց | % |
| I | 40 | - | - | 31 | 77,5 | - | - | - | - | 9 | 22,5 | - | - |
| II | 40 | 7 | 17,5 | - | - | 4 | 10 | - | - | 5 | 12,5 | 24 | 60 |
| III | 40 | - | - | 11 | 27,5 | - | - | 6 | 15 | 2 | 5 | 21 | 52,5 |
| Ընդ. | 120 | 7 | 5,8 | 42 | 35 | 4 | 3,3 | 6 | 5 | 16 | 13,3 | 45 | 37,6 |

Նշված իրավիճակներում մտավոր հետամնաց երեխաների օգնության ցուցաբերման միջոցների վերլուծությունը վկայում է, որ փորձարկվողների մեծամասնությունը (37,6%) խորհուրդ են տալիս օգնություն խնդրել մեծերից, երեխաների 35%-ի օգնությունը կրում էր նյութական բնույթ, այսինքն՝ նրանք պատրաստ էին կիսել իրենց խորանարդների մի մասը և տալ ընկերներին: Մտավոր հետամնաց նախադպրոցականների պատասխանների միայն 3,3% և 5% դեպքերում

նշվում էր որոշակի գործնական կամ բարոյական օգնություն: Փորձարկվողների 13,5% ձգտում էին հաղորդակցվել իրենց տարեկիցների հետ:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ մտավոր հետամնաց նախադպրոցականների միայն որոշ մասն է պատրաստ գործնական կամ բարոյական օգնություն ցույց տալ իրենց տարեկիցներին, որոնք հայտնվել էին անբարենպաստ պայմաններում, և մեծամասամբ խորհուրդ էին տալիս դիմել մեծերի օգնությանը: Դա ավելի ակնառու է երևում տարբեր իրավիճակներում մտավոր հետամնաց երեխաների կողմից առաջարկվող օգնության ցուցաբերման միջոցների վերլուծման դեպքում:


Այսպես, պատասխանների գերակշիռ մասը առաջին իրավիճակի լուծման դեպքում (Առաջադրանք N1) գրեթե չեն տարբերվում մեկը մյուսից: Պատասխանների բովանդակությունը վկայում է այն մասին, որ փորձարկվողների 77,5%-ի դեպքում պատրաստակամ են խորանարդները կիսել իրենց տարեկիցների հետ. <Կտայի մեկ խորանարդ> Ռաֆիկ Կ., <Կարող եմ կիսվել խորանարդով> Արաքսյա Մ., <Եթե ցանկանում է, թող վերցնի երկու խորանարդ> Տիգրան Ն.:

Համաձայն գրականության տվյալների (2), (3), (4)և այլն, այսպիսի օգնությունը, որն ունի նյութական արտահայտում, բնորոշ չէ նորմալ զարգացող նախադպրոցականներին: Նրանց կողմից ավելի դյուրին են յուրացվում օգնության ցուցաբերման միջոցները, որոնք չեն դիպչում սեփական հետաքրքրություններին: Մեր փորձարկվողների այսպիսի պատրաստակամությունը բացատրվում է երեխաների պատասխաններով. <Ես նրան կտամ, ես ունեմ խորանարդ> Կարեն Բ., <Ես կտամ խորանարդը, ինձ կվերցնեմ մյուսները> Սիմա Ե.: Այս և մյուս օրինակները վկայում են այն մասին, որ մտավոր հետամնաց նախադպրոցականները պատրաստակամ են կիսվել խորանարդներով, քանի որ առօրյա կյանքում չունեն դրանց պակաս, իսկ օգնության այս ձևի արդյունքը չի վնասի հետաքրքրությունները:

Բացի այդ, այս երևույթը կարող է լինել վաղ անցկացված նպատակաուղղված մանկավարժական ներազդեցության արդյունք, որը համապատասխանում է ծրագրային պահանջներին՝ սովորեցնել երեխաներին խաղալ իրար կողքի, փոխանակվել խաղալիքներով:


Պատասխանների մեծ մասը (22,5%) համարվում է տարեկիցների հետ հաղորդակցման հաստատման առաջարկ (<Արի՛ դու էլ մասնակցիր> Էդուարդ Օ., <Արի իրար հետ խաղանք> Լիանա Կ.): Այս տիպի պատասխանները վկայում են օգնության ցուցաբերման ավելի կատարելագործված միջոցների յուրացման մասին: Մակայն մեր հետազոտությունների համար այսպիսի արտահայտումները բնութագրական չեն:

Երկրորդ իրավիճակը տարբերվում էր առաջինից առաջարկվող օգնության բազմազանությամբ: Փորձարկվողների 60%-ը խորհուրդ են տալիս դիմել մեծերին, եթե երեխաներից մեկը ընկել է և կտորել ծունկը, միայն 17,5% և 10% երեխաները պատրաստ են ցույց տալ տարրական և որոշակի օգնություն (Նկար 3):




Իրավիճակ 1:

Եթե դու կառուցելիք տուն, և կողքին ինչ-որ մեկն էլ կառուցեր ու նրան չհերիքեր խորանարդներ, ապա ի՞նչ կանեիր դու:



Իրավիճակ 2:

Եթե դու ինչ որ մեկի հետ զբոսնես, և նա ընկնի ու վնասի ոտքը, ապա ի՞նչ կանեիր դու:
 Ի՞նչ կանեիր, եթե տեսնեիր, որ խմբում մի աղջիկը լաց է լինում:



Իրավիճակ 3:

Նկար 3: Տարբեր իրավիճակներում օգնության ցուցաբերման հիմնական ձևերը:

Իրավիճակի լուծումը շրջակա միջավայրի վրա ազդեցություն թողնելու պատկերացումները՝ <Ասել դաստիարակին> (Համբարձում Կ.), <Դաստիարակը կօգնի> (Կարեն Բ.), հիմնված են երեխաների անձնական փորձի վրա և համարվում են նրանց անհիմնադրույթության, մեծերից կախվածության արդյունք:

Երեխաները 27,5% դեպքերում շատ հստակորեն պատկերացում են իրենց դերը տվյալ իրավիճակի լուծման ժամանակ: Իրենց առաջարկվող օգնությունը կարող է բաժանվել տարրական իրականի և հատուկ՝ բժշկականի: Առաջարկվող տարրական իրական օգնությունը (17,5%) ուղղված է տարեկցի անհաջողությունների արտաքին պատճառների վերացմանը՝ <Օգնիր վեր կենալ>, (Վազգեն Ա.), <Բարձրացնել, թափ տալ>, (Մարինե Ա.):

Հատուկ՝ բժշկական, օգնության ցուցաբերումը (10%) ենթադրում է ընկնելու հետևանքների վերացումը <Կկապել վիրակապով>, (Աննա Ա.):

Սակայն այս իրավիճակում անհրաժեշտ սպրումակցում մտավոր հետամնացները չեն առաջարկում: Դա մեզ հավաստիացնում է, որ մտավոր հետամնաց նախադպրոցականներն առանձնանում են օգնության ցուցաբերման միայն արտաքին՝ պրակտիկ տեսանկյունով, այն դեպքում, երբ հասակակիցների հուզական, անձնային սպրումները նրանց կողմից չեն գիտակցվում:

Երրորդ իրավիճակում (<Ի՞նչ կանեիր, եթե տեսնեիր, որ իմբում մի սղջիկ լաց է լինում>), սպասվող օգնության բնույթը համարվում է առավել մեծ քանակակազմի համար ավելի բարդ, քանի որ այդ իրավիճակում երեխաներն ունեն բարոյական օգնության կարիք:

Բարոյական օգնությունը կարող է արտահայտվել խոսքերով, ժեստերով, ունենալ նյութական արտահայտություն (տալ խաղալիք, տիկնիկ և այլն):

Հետազոտվողների 35,5%-ի դեպքում երեխաներն իրենց տարեկիցներին առաջարկում են խաղալիք (տիկնիկ, մեքենա, գնդակ): Այսպիսի առաջարկները կարող են դիտվել որպես կարեկցման միջոց, որն ունի նյութական արտահայտում: Մակայն պետք է նշել, որ ինչպես առաջին իրավիճակում, օգնությունը, որն ունի նյութական արտահայտում, չի ենթադրում սեփական հետաքրքրությունների խոցում, քանի որ փորձարկվողները ենթադրում են տալ ոչ թե սեփական խաղալիքը, այլ այն խաղալիքները, որոնք խմբում շատ են: Պատասխաններ, որոնք պահանջում են խոսքերով, ժեստերով ասարմանկցում (5%), հիմնականում պարզ են. <Խղճացի>, (Մարինե Դ.), <Կհանգատացնեմ>, (Տիգրան Ս.): Միայն որոշ պատասխաններում է նկատվում կարեկցման կոնկրետ միջոցներ՝ <Կասեի մի լացիր> (Հասմիկ Ս.), <Մայրիկը կգա> (Կարո Կ.), <Եթե լաց է լինում, թող ասեն դաստիարակչուհուն> (Թորգոմ Դ.): Երեխաներն առաջարկում են հաստատել հաղորդակցում հասակակիցների հետ 13,3% դեպքում՝ <Կխսեցի նրա հետ> (Անդրանիկ Բ., Հասմիկ Գ.):

Այսպիսով, գիտափորձի արդյունքները թույլ են տալիս մեզ նշել, որ մտավոր հետամնաց նախադասականներն առաջարկում են հիմնականում տարեկիցներին ոչ համարժեք օգնության ցուցաբերում: Մեծամասամբ դա մեծահասակների օգնությանը դիմելն է, խաղալիքի ներկայացումը կամ տարեկիցների հետ հաղորդակցման հաստատումը: Եվ միայն 5%-ի դեպքում օգնությունն արտահայտվում է բարոյական ասարմանկցումով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Кузнецова Г.В. Особенности понимания речи окружающих взрослых умственно отсталыми дошкольниками.- Дефектология, 1978, N2, с. 67
2. Пеньевская Л.А. Взаимопомощь детей старшего дошкольного возраста и ее воспитательное значение.- В кн.: Формирование коллективных взаимоотношений детей старшего дошкольного возраста.- М., Просвещение, 1967, С. 133-204
3. Пеньевская Л.А. Воспитание отзывчивости и развитие простейших форм взаимопомощи у детей 4-го и 5-го года жизни.- В кн.: Нравственное воспитание дошкольников /Под ред. В.Г. Нечаевой.-М., Педагогика, 1972, с. 112-156
4. Титаренко Т.М. Функции эмоций в нравственном развитии дошкольника: Автореф. дис. канд. психол. наук.- Киев, 1979. -25с

РЕЗЮМЕ
ОСОБЕННОСТИ МОРАЛЬНЫХ ПРЕДСТАВЛЕНИЙ УМСТВЕННО
ОТСТАЛЫХ ДЕТЕЙ ДОШКОЛЬНОГО ВОЗРАСТА В
ПРАКТИЧЕСКИХ СИТУАЦИЯХ
А.В. ЯЙЛОЯН

В статье представлены практические ситуации, где выявляются моральные представления умственно-отсталых детей дошкольного возраста. Наши исследование говорят о том, что умственно отсталым дошкольником предлагается иная помощь, чем своим ровестником, и суть этой помощи заключается в том, что такие дети обращаются за помощью к взрослым, или ищут пути общения с ровестниками. Сложившиеся практические ситуации стимулируют развитию у умственно-отсталых детей дошкольного жозраста чувств взаимопомощи и сопереживания.

SUMMARY
MENTALLI DISABLE PRE-SCHOOL CHILDREN'S CHARACTERISTICS
OF MORAL IMAGINATIONS IN PRAETICAL SITUATIONS
A. V. YAYLOYAN

In this article practical situations are represented, in which mentally disabled pre-shcool children's moral fantasies are discovered. The resarches carried out by us suggest that these children display inadequate help to those who are of the same age. In most cases its revealed turning to the adults for help or esfablishing communication with those of the same age. These real practical situations will help to create mentally disable pre-school children.

**Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հասարակական գիտություններ № 1 (18) 2013 Гуманитарные науки

ՀՏԴ 30 : 32.019.5

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՈՒՅԹԻ ԲԱՆԱՎՈՐ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՏԵՍԱԿ**

Է. Մ. ԱՎԱԳՅԱՆ

Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Քաղաքական խոսույթի տեքստերի հանդեպ հետաքրքրությունը վերջին տարիներին, բացատրվում է ինչպես լեզվաբանական տեսության ներքին պահանջով, այնպես էլ քաղաքական մտածողության ուսումնասիրության քաղաքագիտական խնդիրներով, հասարակական գիտակցության մեջ դրսևորվող միտումների սահմանման նպատակով, ինչպես նաև քաղաքական տեքստերի վերլուծության մեթոդների մշակման անհրաժեշտությամբ: Կարևոր գործոն է նաև սոցիալական պատկերը, որն ուղղված է քաղաքական հաղորդակցությունը հասարակական գիտակցության ձեռնարկություններից ազատելուն: Վ. Դեմյանկովը հետաքրքիր համեմատություն է անցկացնում քաղաքական խոսույթի և Մաք Դոնալդսի ֆաստֆուդի միջև: Նա նշում է. <Այդպիսի խոսույթը պետք է հեշտությամբ մարավի և արագ ազդեցություն գործի, ինչպես և ցանկացած ֆաստֆուդ՝ հնարավորություն տալով աննկատ կերպով ղեկավարել լսարանի գիտակցությունը> [1]:

Քաղաքական խոսույթը, օգտագործելով բնական լեզու, ավելի ճիշտ՝ դիմակավորվելով բնական լեզվի տակ, ենթադրում է խոսույթի մեկնաբանման տարբեր օրենքներ և գործողություններ:

Որպես արդյունավետ խոսքային ազդեցություն, անհրաժեշտ է, որ այն համապատասխանի երկու հիմնական պայմանների. <Հասնում է խոսողի կողմից դրված խոսքային և ոչ խոսքային նպատակներին և հավասարակշռություն է պահպանում մասնակիցների շփման մեջ, այսինքն՝ հասնում է հաղորդակցության նպատակին: Հաղորդակցության նպատակը ապահովում է հենց շփման ընթացքում երկխոսության ներկայացված կանոնների, շփման ոճի որոշակի իրավիճակի համար ընդունված համապատասխանությունը> [2]:

Ուսումնասիրելով մի շարք լեզվաբանների աշխատություններ՝ պարզ է դառնում, որ քաղաքական խոսույթը չի սահմանափակվում միայն նրանով, թե ինչ է ասված, այլև հաշվի է առնում հետևյալ հանգամանքները. ո՞վ է ասել, երբ՝ է ասել, որտեղ է ասել և ինչպես է ասել: Այլ կերպ ասած՝ քաղաքական խոսույթի վերլուծության համար իմաստաբանական տեսության վերաբերական գործոնը բավարար չէ, դրան պետք է հավելվեն այնպիսի գործաբանական տեսություններ, ինչպիսիք են, օրինակ, խոսքային ակտերի և կատարողական բայերի տեսությունները: Ըստ խոսքային ակտերի տեսության՝ քաղաքական խոսույթի շրջանակներում պետք է 3 խոսքային ակտ դիտարկվի՝ լուրուտիվ, իլուրուտիվ և պեռլուրուտիվ, այսինքն՝ քաղաքական խոսույթը ոչ միայն խոսք է կամ իրականության նկարագրություն, այլև գործողություն, այսինքն՝ քաղաքական խոսույթի ընդհանուր իմաստն ու նշանակությունը գոյանում են ասվածի, ինչպես նաև ասվածի հետևանքով տեղի ունեցածի իմաստային բաղադրիչների հիման վրա:

Մի շարք գիտնականների կարծիքով՝ քաղաքական խոսույթը երկու հիմնական ձև ունի՝ կոնֆլիկտային և կոնսենսուսային, որոնք իրականում փոխկապակցված են:

Քաղաքական բանավեճերը հատկապես գտնվում են կոնֆլիկտային խոսույթի դաշտում, իսկ համաձայնության խոսույթին են պատկանում բանակցությունները, կլոր սեղանները, դաշինքները և այլն: Կոնֆլիկտները հակասության բաց ձևեր են, մինչդեռ քաղաքական խոսույթը գործնականում ապահովում է այդ հակասության կողմերի միջև հաղորդակցությունը: Չ.Քուլին այդ առումով նշել է. <Որքան շատ ես մտածում, այնքան լավ ես հասկանում, որ կոնֆլիկտն ու համագործակցությունն առանձին տարրեր չեն, այլ և մեկը, և մյուսը ներառող միևնույն գործընթացի փուլեր> [3]:

Ըստ Ն. Չոմսկու՝ մարդկանց մտածելակերպը ղեկավարելու միջոցներից մեկը քաղաքական բանավեճ կազմակերպելն է, որն այնպիսի տպավորություն է թողնում, թե իբր ներառում է տարբեր կարծիքներ, բայց իրականում մնում է նեղ սահմանների շրջանակներում. <Եվ մենք ստիպված համոզվում ենք, որ բանավեճող երկու կողմերն ընդունում են որոշ ենթադրություններ, որոնք կազմում են պրոպագանդայի հիմքը> [4]: Ռուսական լեզվագիտական հանրագիտական բառարանում բանավեճը կապակցված տեքստ է՝ կոնկրետ իրադրության մեջ, արտալեզվական, գործաբանական, հանրամշակութային, հոգեբանական և այլ գործոնների հետ միասին, այն բանավոր խոսք է, նպատակաուղղված որևէ սոցիալական գործողության, որպես մարդկանց փոխհարաբերություններում հանդես եկող կարևոր գործոն:

Եթե պարզեցնենք, ապա բանավեճը ներառում է <բանավոր փոխազդեցության բոլոր ձևերը, պաշտոնական և ոչ պաշտոնական, ինչպես նաև բոլոր տեսակի գրավոր տեքստերը> [5]:

<Խոսք> և <տեքստ> տերմինները հանդիսանում են փոխկապակցված <բանավեճ> տերմինի հետ, ընդ որում ընդգծվում է բանավեճ հասկացության ընդհանրացնող բնույթը և վերացվում է բանավոր/գրավոր, մենախոսություն/երկխոսություն նշանների ցանկացած երկակի սահմանափակումը: Բանավոր խոսքը ինքնաբերաբար է, ոչ նորմատիվ, երկխոսային է, այն դեպքում երբ տեքստը պատրաստված է, նորմատիվ է, բացված է, մենախոսություն կամ երկխոսություն է և խոսքից տարբերվում է լեզվական նյութի գրաֆիկական վերարտադրմամբ: Բանավեճը այսպիսի ընկալմամբ միացնում է բոլոր չափորոշիչները, որոնք բնորոշ են ինչպես խոսքին, այնպես էլ տեքստին:

Տեքստն ու բանավեճը փոխկապակցված հարաբերությունների մեջ են, բանավեճն իր դրսևորումն է գտնում տեքստում, <բանավեճն առաջանում և դրսևորվում է տեքստում և տեքստի միջոցով: Միաժամանակ այս հարաբերությունը միանշանակ չէ. ցանկացած տեքստ կարող է լինել մի քանի, երբեմն մրցակցող և հակադիր բանավեճերի ռեալիզացիա: Յուրաքանչյուր կոնկրետ տեքստ որպես կանոն կրում է բանավեճի մի քանի տեսակների գծեր> [6]:

Բանավեճ հասկացությունը կարգավորվում է հանրալեզվաբանության տեսանկյունից, այն դեպքում, երբ տեքստը պատկանում է լեզվաբանության ոլորտին [6]: Տեքստը սահմանվում է որպես հաղորդակցական իրադարձության վերբալ ներկայացում <բառային գրառում> [7], իսկ բանավեճը՝ որպես < տեքստ իրադարձային տեսանկյունից>, <կյանք ընկղմված /կյանքի կոչված/ խոսք>, <լեզվի գործունեություն կենդանի շփման մեջ>, <խոսողներին վերագրված լեզու> [8,9]: Բանավեճի մեջ գործունեությունը <նեղացված է մինչև նրա սոցիալական ուղղորդման բանավոր դրսևորումները: Իր հերթին դիտարկելով բանավեճը որպես գործունեության արդյունքում առաջացած ֆենոմեն, շեշտադրվում է, որ դա սոցիալական ուղղությամբ բանավոր գործունեության ֆենոմեն է /սոցիոլոգիական փաստաթուղթ/, <ընթերցված> միայն այս տեսանկյուններից>:

Բանավեճը և տեքստը հակադրվում են նաև <իրականության/ վերացականության> հակադրության ժամանակ: Բանավեճը դիտարկվում է որպես իրական բանավոր իրադարձություն, որպես բանավոր խոսքով կյանքի կոչվող կապակցված տեքստ: Տեքստը չունի խիստ կապակցվածություն իրական ժամանակի հետ, այն իրենից ներկայացնում է վերացական մտավոր կառույց, որը իրականացվում է բանավեճի մեջ [10]:

Բանավեճի էական առանձնահատկություններից է նրա չբաժանված, չտարանջատված կառուցվածքը, որը ենթադրում է, որ բանավեճը չի սահմանափակվում առանձին հաղորդակցային իրադարձություններով: Բանավեճը անընդհատ է, չունի սկզբի և ավարտի ժամանակային սահմաններ, անհնար է որոշել, երբ ավարտվեց առաջին բանավեճը և սկսվեց մյուսը: Միաժամանակ բանավեճը, իհարկե, բաժանված է անդամների իմաստով, նրա բաժանման և վերլուծության միավորներն են հաղորդակցության ընթացքը, մեջբերումը, փոխանակումը, արձանագրությունը: Դրա հետ կապված առանձնացվում են կառուցվածքային տեքստը՝ արտադրանքը /text-as-product/ և ֆունկցիոնալ բանավեճը՝ գործընթացը /discourse-as-process / [11]:

Բանավեճի միանշանակ սահմանումը, որը ներառում է գիտելիքների վերարտադրումը, սերտորեն կապված է գիտելիքների սոցիոլոգիայի հետ, այդ թվում նաև սոցիալական գիտելիքների կառուցման հետ: Այս փոխհարաբերությունը կարևոր դեր է խաղում, քանի որ գիտելիքների սոցիոլոգիան շատ առումներով կազմում է սոցիալական կառուցողականության տեսական հիմնավորումը: Դրա հետ կապված կարելի է ասել, որ բանավեճի ուսումնասիրությունը հանդիսանում է սոցիալական երևույթների ուսումնասիրության առավել ակնհայտ միջոց:

Ի. Պ. Մուսովը [12] նշում է, որ բանավեճի կառուցվածքները փոխկապակցված են գործունեության և գիտակցության կառուցվածքների հետ, որոնք պայմանավորված են արտալեզվական գործոններով: Նույն տեսանկյունից են բանավեճը դիտարկում նաև Ռ. Վոդակը և Ն. Ֆեյրկլաֆը [13], ովքեր բանավեճը վերլուծում են որպես գիտելիքների վերարտադրման առանձնատարր կ' ձև (production of knowledge):

Բանավեճը հակադրված է բանավոր խոսքին: Բանավոր խոսքն ընկալվում է երկակի՝ ինչպես խոսելու բուն ընթացք /բանավոր գործունեություն/, այնպես էլ որպես դրա արդյունք /բանավոր ստեղծագործություն, որը ամրագրվում է հիշողությամբ կամ գրավոր տարբերակով/: Երկու երևույթների գլխավոր տարբերությունը կայանում է <սոցիալական/անհատական> հակադրության մեջ: Բանավեճը դասվում է <սոցիալական> հասկացության շարքին, նրան բնորոշ են շփման տիպային իրավիճակները բանավոր գործողությունների նորմատիվ ամրագրված հաջորդականությամբ /շփման ինստիտուցիոնալ ձևեր/[14]: Խոսքի կարևորագույն դրսևորումը նրա անհատական բնույթի մեջ է /տեմայ, տևողություն, տեմբր, բարձրություն և այլն/:

Խոսույթը միշտ հարաբերակցվում է այն արտահայտողներին, ըստ այդմ՝ հստակ իրականացվում է սեփական վերաբերմունքի արտահայտումն ասածին և տրվում է խոսակցի արձագանքը: Մակայն խոսույթը չի կարող հեղինակ ունենալ, դա է նրա տարբերությունը

հեղինակային տեքստից: Այն միշտ վերաբերում է, սակայն, քաղաքական գործընթացի որոշակի դրվագների. օրինակ՝ քաղաքական բանավեճը, որի մասնակիցներից ոմանք ինչ-որ խոսք են արտահայտում այդ համատեղ խոսույթում, իսկ ամբողջն էլ կարծես թե անկանխատեսելիորեն ստացվում է տարբեր իմաստների համադրումից: Դրանից հետևում է, որ խոսույթը հեղինակների բազմության արտադրանք է, հաճախ կոնֆլիկտային հարաբերություններում գտնվող մարդկանց արտադրանք, այսինքն՝ բոլոր հաղորդակցվող սուբյեկտները համարվում են իրենց միավորող խոսույթների համահեղինակներ:

Ուշադրություն դարձնելով բանավեճի սահմանման տարբեր մոտեցումներին, մենք <բանավեճ> տերմինը դիտում ենք լայն իմաստով որպես բանավոր հաղորդակցական մշակույթում իրականացված գործողություն՝ ձայնային, գրաֆիկական կամ էլեկտրոնային վերարտադրմամբ, ներառված լայն սոցիալական, հոգեբանական, գործնական և այլ համատեքստերում: Քաղաքական բանավեճն ուսումնասիրող աշխատություններում միանշանակ առանձնացվում է քաղաքական բանավեճի տարբերակման խնդիրը բանավեճի այլ տեսակներից (իրավաբանական, մանկավարժական, գովազդային, ռազմական և այլն): Քաղաքական բանավեճը բանավեճի մյուս տեսակների համեմատ սոցիումում ունի առավել մեծ հաճախական դրսևորում:

Քաղաքական բանավեճը հանդիսանում է բարդ սոցիալական երևույթ, ինչի սպացույց են այս հասկացության տարատեսակ մեկնաբանությունների մեթոդաբանությունը և այն վերլուծելիս տարատեսակ մեթոդաբանական մոտեցումները:

Ինչպես նշում է Գ. Սայդելը [15], քաղաքական բանավեճը միաժամանակ պետք է իրականացնի շատ գործառույթներ և ռեպլիկացնի շատ շարժառիթներ:

Մեր կարծիքով, քաղաքական բանավեճի գործառույթների հատկեցումը կարևոր նշանակություն ունի բանավեճերի այլ տեսակների նկատմամբ նրա տարբերակիչ հատկանիշների վեր հանման գործում: Բանավեճի գործառույթային սահմանումը պայմանավորված է լեզվի՝ որպես նշանների համակարգի սեմիոտիկ ընկալմամբ, որը ծառայում և կիրառվում է որևէ նպատակի հասնելու համար, այլ կերպ ասած գործառույթի իրականացում: Գործառույթային մեթոդոլոգիան ենթադրում է լեզվի կառուցվածքի և գործունեության ուսումնասիրություն նրանց միջև համապատասխանությունների դուրս բերման նպատակով: Տեսականորեն գործառույթային մեթոդաբանությունը հիմնվում է ձևի և գործառույթի միջև փոխկապվածության ընդունման վրա՝ լեզվի օգտագործման ազդեցությունը նրա կառուցվածքային բնորոշումների հաշվառմամբ: Հարկ է նշել, որ կառուցողական գործառույթների իրագործման

աստիճանը բանավեճի տարբեր տեսակներում որոշիչ գործոն է դրանց դասակարգման համար:

Ընդհանրապես, քաղաքական հաղորդակցության սահմանման համար կարևորվում է <իշխանության համար պայքար> թեմատիկ և նպատակային գործառույթների հատկեցումը [16]: Ելնելով նպատակային ուղղորդումից՝ քաղաքական բանավեճի հիմնական գործառույթ կարելի է համարել նրա կիրառումը որպես քաղաքական իշխանության գործիք /իշխանության համար պայքար, իշխանության տիրում, պահպանում, իրականացում, կայունացում կամ վերաբաժանում/:

Այսպես, կուսակցական ծրագիրը կոչված է համոզելու, կոչ անելու, քարոզելու /պերուսազիվ գործառույթ/, ընդ որում ծրագրի յուրաքանչյուր կոնկրետ կետի և տվյալ կուսակցության կամ խմբի համոզիչ գաղափարախոսության միջև անհրաժեշտ կապը ակնհայտ է, այն է՝ յուրաքանչյուր պահանջ, յուրաքանչյուր քայլ հիմնավորված և կապված է արժեքների, ավանդույթների և գաղափարախոսության հետ /հիմնավորվածության գործառույթ/:

Իշխանության մարտավարությունները ձևավորվում են որպես հաղորդակցական գործողություններ ուղղված հաղորդակցական այնպիսի միջավայրի կազմակերպմանը, որի հաղորդակցական գործընթացը պայմանավորված կլինեք բանավեճի իմաստավորման կանոններով և սահմաններով:

Այսպիսով, հիմք ընդունելով քաղաքական բանավեճի վերոնշյալ վերլուծությունները, ինչպես նաև Օ. Ռոզենշտոկ- Հյուսի, Է. Բենվենիստի խոսույթի սահմանումը, համաձայն, որի խոսույթը ակտուալ գործընթաց է, վերաբերում է մարդակային գործունեության լեզվահասարակական ոլորտին, պարունակում է երկխոսություն և դրսևորվում միայն բանավոր մակարդակում, ապա կարող ենք եզրակացնել, որ հողվածում բերված բոլոր հատկանիշները հատուկ են հատկապես բանավեճին որպես խոսույթի բանավոր հաղորդակցության տարատեսակ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Демьянков В.З. Интерпретация политического дискурса в СМИ // Язык СМИ как объект междисциплинарного исследования: Учебное пособие /Отв. ред. М.Н. Володина.-М.: Изд-во МГУ, 2003. - С. 116-133.
2. Стернин И.А. Коммуникативное поведение в структуре национальной культуры // Этнокультурная специфика языкового сознания/Отв. ред. Н.В.Уфимцева. М.,2000. - С. 97-113.
3. Cooley Ch.H. Social Process. Scribner's.Sous.reedition. New York,1998-309p
4. Chomsky N.Propaganda, American style 1987 // <http://www.zpub.com/un/chomsky.htm>

5. Potter, J. and M. Wetherell 1987. Discourse and social psychology: beyond attitudes and behaviour. London: Sage.p7
6. Kress G. Ideological Structures in Discourse // Handbook of Discourse Analysis, Vol.IV. – London: Academic Press, 1985. – P. 27-41.
7. Михальская А. К. Педагогическая риторика: история и теория. – М.: Изд. центр «Академия», 1998. – 432 с.
8. Арутюнова Н.Д. Дискурс //Лингвистический энциклопедический словарь. М., : Сов. энциклопедия, 1990. С. 136-137.
9. Бенвенист Э. Общая лингвистика.- Москва. Прогресс , 1974- с 229
10. Schiffrin D. Approaches to Discourse – Oxford (UK) and Cambridge (Mass.):Blackwell, 1994. – 470
11. Brown G., Yule G. Discourse Analysis. – Cambridge: Cambridge Univ.Press, 1983. – 288 p.
12. Сусов И.П. Деятельность, сознание, дискурс и языковая система // Языковое общение: процессы и единицы
13. Fairclough N., Wodak R. Critical discourse analysis // Discourse as social interaction. – London: Sage Publications, 1997. – P. 258-284.
14. Попова Е.А.Культурно-языковые характеристики политического дискурса (на материале газ. интервью): Дис. ... канд. филол. наук. – Волгоград, 1995. – 250 с.
15. Seidel G. Political discourse analysis // Handbook of Discourse Analysis, Vol.IV. – London: Academic Press, 1985. – P. 43-60.
16. Schudson M. Sending a Political Message: 1790s // Media, Culture and Society. — 1997, Vol.19, № 3. – P. 311-330.

РЕЗЮМЕ
ПОЛИТИЧЕСКИЕ ДЕБАТЫ КАК ВИД УСТНОЙ КОММУНИКАЦИИ
ДИСКУРСА
Э. М. АВАГЯН

В связи с возросшим в теории языка интересом к политическому дискурсу в статье рассматривается: политический дискурс как сложное лингвистическое явление, сущность понятия коммуникации; толкование и сопоставление понятий «дискурс– текст- дебат»; их взаимодействие и соотнесённость в политической сфере жизни общества. Дискурс рассматривается как реальное речевое событие дискурс- процесс (discourse-as-process), текст - продукт (text-as-product) и дебат как специфическая форма политического дискурса для производства знаний (production of knowledge).

SUMMARY
POLITICAL DEBATE AS A FORM OF DISCOURSE ORAL
COMMUNICATION

E. M. AVAGYAN

Due to increased interest in the theory of language in political discourse, the article discusses: the political discourse as a complex linguistic phenomenon, the essence of the concept of communication, interpretation and comparison of the concepts of "discourse-text-debate", their interaction and correlation. Discourse is regarded as a real speech event discourse process (discourse-as-process), the text - product (text-as-product), and the debate as a form of political discourse for knowledge production (production of knowledge).

ԲՆԻԿ ԵՎ ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐԸ ԵՄԱՅԻ ՂՐԻՄԵՑՈՒ
<ՏՈՒՄԱՐ ԱՐԵԳԱԿԱՆ ԵՎ ԼՈՒՍՆԻ> ԵՐԿՈՒՄ

Ն. Վ. ՊԱՐՈՆՅԱՆ
Երևանի պետական համալսարան

XV դարի առաջին կեսին Ղրիմի Անտոնի վանքում սալրել և ստեղծագործել է միջնադարյան հայ մատենագրության նշանավոր դեմքերից մեկը՝ տոմարագետ-աստղագետ Եսայի Ղրիմեցին: Իր ժամանակի համար նա եղել է բազմակողմանի զարգացած անձնավորություն, որին հավասարապես հետաքրքրել են թե՛ աստվածաբանական, թե՛ փիլիսոփայական և թե՛ երաժշտական գործեր: Ղրիմեցին տիրապետել է նաև օտար լեզուների, որի վառ վկայությունն են <Տոմար Արեգական և Լուսնի> երկում եղած արաբական տերմինները, ինչպես նաև աշխատության առաջին էջում ներկայացված մոլորակների և կենդանակերպերի հինգ լեզուներով (հայերեն, արաբերեն, պարսկերեն, հունարեն, լատիներեն) անվանումները: Չի բացառվում, որ արաբական աղբյուրների հետ Ղրիմեցին ծանոթացած լինի դրանց լատիներեն թարգմանությունների շնորհիվ:

Թեև Ղրիմեցին միջնադարյան հեղինակ է, սակայն նրա երկը գրված է գրաբարով: Որքան էլ հեղինակը հարազատ է մնացել դասական հայերենին, նրա երկում կան միջինհայերենյան բառակազմական և ձևաբանական իրողություններ (թեև սակավաթիվ):

Հոդվածում ներկայացված է Ղրիմեցու երկում առկա բնիկ և փոխառյալ բառերը: Հայերենի բնիկ բառերը հնդեվրոպական նախահինք լեզվից ժառանգված բառերն են:

Բնիկ բառաշերտը լինելով ամենահինը, շատ կայուն է. նրա մեջ մտնող բառերը դժվար են դուրս գալիս գործածությունից՝ վերածվելով հնաբանությունների (հնաբառեր, պատմաբառեր) [5]: Այդ բառերը վերանում են այն դեպքում, երբ կամ հասկացությունն է վերանում, կամ այդ հասկացությանը տրվում է նոր անվանում: Հայերենում բնիկ բառերի թիվը հաշվվում է 927, որից 713-ը արմատներ են [2]:

Այս բառաշերտում ընդգրկված բառերը Հր. Աճառյանը բաժանում է 22 իմաստային (թեմատիկ) խմբերի [2], իսկ Գ. Ջահուկյանը՝ 23 [9]: Այդ խմբերը հետևյալն են՝ ա) ֆիզիկական աշխարհ, բ) մարդկություն, սեռ, տարիք, գ) կենդանիներ, դ) մարմնի մասեր, մարմնական գործառու- թյուններ, ե) ուտելիք և ըմպելիք, կերակրի պատրաստում, զ) հագուստ, անձնական զարդարանք և խնամք, է) բնակարան, կահ-կարասի, ը) երկրագործություն և բուսականություն, թ) ֆիզիկական տարբեր գործողություններ ու սրանց հարաբերությունը առանձին արհեստների ու արվեստների հետ, ժ) շարժում, տեղափոխություն... ժա)ունեցվածք, սեփականություն, առևտուր, ժբ) տարածական հարաբերություններ, ժգ) քանակ և թիվ, ժդ) ժամանակ, ժե) զգայական ընկալումներ, ժզ) զգացմունք, իստոնվածքային, բարոյական և գեղագիտական ըմբռնումներ, ժե) մտածո- դություն, միտք, ժը) ձայնական արտահայտություն, իտսք, ընթերցանու- թյուն, գիր, ժթ) տարածքային, հասարակական և քաղաքական բաժանում- ներ..., ի) ռազմական գործ, իա) օրենք, իբ) կրոն և նախապաշարումներ, իգ) դերանվանական և սպասարկու բառեր, մասնիկներ:

Եսայի Ղրիմեցին իր ԾՏումար Արեգական և Լուսնի Երկում օգտագործել է 253 բնիկ բառ: Այդ բառերից 43-ը (թվով ամենաշատը) դերանվանական և սպասարկու բառերի ու մասնիկների իմաստային խումբն են կազմում. ամենայն(75) (այսուհետ փակագծերում կնշենք Ղրիմեցու երկերում գործածված բառերի էջը), այլ(78), այլև(87), այն(73), այս(75), անդ(72), անտի(76) (կազմված է այն + տեղ (2)), առ(93), բոլոր(79), դու(75), ես(53), զի(52), զկնի(80), ընդ(72), ըստ(53), թե(85), թեպետ(80), ի(75), իբրև(75), ինչ(75), իսկ(52), իւր(53), մեք(86), մեջ(75), նա(80) որ(52), որ(86), սա(76), վերայ(75), քան(80), ինքն(75)...: Քանի որ Ղրիմեցու երկը տոմարագիտական է, հետևապես հաջորդ իմաստային խումբը, որն իր բառաքանակով երկրորդ տեղում է, քանակի, թվի խումբն է(30 բառ).

առաջին(52), առաւել(80), բազում(53), երեք (78), երկուսասան(52), երկրորդ(52), երրորդ (52), եռակի (79), եօթներորդ (52), ինն (80), իններորդ (52), կրկին(72), մէկ (52), միակ (77), ութներորդ(52), ութնապատիկ (80), վեցեկին (76), վեցերորդ (52), տասներորդ (52), քանակ (79)....:

Թվում էր, թե այս իմաստային խմբից հետո պետք է, որ ժամանակ ցույց տվող բառերը լինեին թվով ավելի շատ, սակայն քննությունից պարզ- վեց, որ ֆիզիկական տարբեր գործողությունների իմաստային դաշտը երրորդ տեղում է իր թվաքանակով(25 բառ). առնել(81), արարիլ(78), բեռ- նել(86), գոյութիւն(79), գործ(75), դադարել(93), դառնալ(52), եղանակ(93), եմ(52), կենալ(85), հաստատել(75), հեղուլ(86), տալ(53), փորձ(78)....:

Տարածական հարաբերությունների իմաստային դաշտը իր բառա- քանակով գրեթե չի զիջում նախորդին(23 բառ). բարձրութիւն(54),

դիրք(ք)(53), երկար(75), ընդդեմ(79), կողմն(80), հեռի(72), ներքոյ(93), անգլիսի (անկլուն) (72), տեղ (76) և այլն:

Քանի որ Ղրիմեցին քննել է մոլորակների շարժումները, Արեգակի, Լուսնի դիրքերը, հետևապես շարժում, տեղափոխություն, փոխադրում իմաստային դաշտը իր բառաքանակով(20բառ) հինգերորդ տեղում է. անկում(75), անցանել(53), աստիճան(53), էլ(153), ընթանալ(86), ընթաց(ք)(80), ընկենուլ(85), հեռանալ(80), հետևիլ(80), մերձենալ(74), մնալ (85) :

Զգայական ընկալումների իմաստային դաշտից 16 բառ ենք հանդիպել. անզգայ(75), բարի(75), բքայոյդ(բուք)(86), գէջ(81), գոլ(80), գոլորշի(80), դեղնագոյն(80), հով(85), մեղմիկ(86), չորութիւն(80), ջերմութիւն(80), տեսանել(72), ցուրտ(80)...:

Ֆիզիկական աշխարհի իմաստային խումբն ընդամենը մեկ բառով է զիջում նախորդին. ակն (80), ամպ (86), անձրև (86), աստղ (52), արեգակն (52), Երևակ (54), Լուսին (52), Հրատ (54), մոլորակ (79), քար (75), օդ (86) :

Ահա այս խմբին է հաջորդում ժամանակի իմաստային դաշտը (13բառ). ամ (52), ամառն(80), ամիս(52), գարնանային (56), գիշեր(81), երեկոյ (53), երբեք (81), ձմեռն(80), տիւ(87), օր (52):

Բնիկ բառերի մեջ քանակով իններորդ տեղում է (11բառ) ձայնական արտահայտություն, խոսք, ընթերցանություն և գիր իմաստային խումբը. անբան(75), ասել(75), բանականութիւն(86), բառ(78), բարբառել(86), գիր(53), ընթերցող(79), կոչել(81) :

Սրան հաջորդում է միտքը, մտածողությունը բնորոշող դաշտը(9բառ). անգիտութիւն(87), գէտ(53), լուծումն(87), ճանաչել(52), ուսել(86), հմտութիւն(86)...:

Կրոն և նախապաշարունք խմբից երկում կա վեց բառ՝ կրանաւոր(53), ողորմել(53), սուրբ(75), օծվիլ(85), հաւատ(76), անհաւատութիւն(76): Նույնքան բառ ենք հանդիպել զգացմունքի, խառնվածքի, բարոյական և գեղագիտական ըմբռումների դաշտից՝ աստելութիւն(76), խնդութիւն(75), խանձել(86)(□խանդ□ արմատից է առաջացել (2)), մեղ(ք)(76), սէր(75), տրտմութիւն(77):

Կենդանիների իմաստային դաշտից ունենք կենդանակերպերի երեք անուն՝ ձուկն (55), ցուլ (57), առիծ (60), և անկենդան (75), ձագ (80) բառերը:

Մյուս իմաստային խմբերից կան շատ քիչ բառեր: Դիցուք՝ մարմնի մասերից, մարմնական գործողություններից երես (86), երկունք (93), ծնունդ (52) բառերն են, երկրագործության, բուսականության դաշտից՝ աճումն (81), ձէթ(85), սերմն (81), ունեցվածք, սեփականություն, առևտուր խմբից՝ առնուլ(86), ընծայ(53), ունենալ(52), մարդկություն՝ սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություններից մարդ (80), սեռ (79) բառերն են, ուտելիքի, ըմպելիքի, կերակրի պատրաստման, ամանեղենի խմբից ունենք լիանալ (81), ուտել (85), կերակուր (85): Մեկական բառ կա

հագուստ, անձնական զարդարանք, խմամք (գոտի (53)), բնակարան, տուն, կահկարասի(հարկ (79)), ռազմական գործ` (աղեղնաւոր (75) [1]) խմբերից:

Եսայի Ղրիմեցու երկում հանդիպել ենք հասարակական և քաղաքական, տարածքային բաժանումներ, հարաբերություններ (տեղ(86)), բայց օրենք իմաստային խմբից չկա, որի իսպառ բացակայությունը կապված է երկի բովանդակության հետ:

Այժմ անդրադառնանք փոխառություններին: Լեզուն զարգացող երևույթ է և ժամանակի ընթացքում լեզվի փոփոխության գործընթացը տեղի է ունենում այնպես, որ սպասեմքի սերունդների հաղորդակցումը: Սակայն այս դրույթից չի կարելի հետևություն անել, թե լեզվի փոփոխությունը մշտական և համաչափ փոփոխությունների շղթա է, նաև չի կարելի ասել, որ այդ փոփոխությունները տեղի են ունենում մինչև այդ եղածի (արդեն որպես նոր գործող) միանշանակ մոռացմամբ:

Պետք է ենթադրել, որ կար ժամանակ, երբ նախահիմք լեզվի բառերը լիովին բավարարում էին հաղորդակցումը [9]. ավելորդ բառերի, ավելի ճիշտ` անտեղի փոխառությունների կարիք չէր զգացվում:

Ժամանակի ընթացքում, երբ որևէ լեզվի բառապաշարը այլևս չի կարողանում բավարարել տվյալ լեզվով խոսող-անհատի ամբողջական հաղորդակցման և խոսակից-անհատի լիովին ընկալման միայնաց հետ փոխկապակցված պահանջները, երբ նոր ստեղծված հասկացությունների ու երևույթների անվանակոչության կարիք է զգացվում, լեզուն կամ եղած բառերի բառաբարդմանն ու ածանցմանն է դիմում, կամ ընդունում և յուրացնում է արդեն այլ լեզվի կողմից ստեղծված անունը` դարձնելով իր սեփականությունը:

Լեզվի հարստացման այս ձևը այլ լեզվից կատարված փոխառություններն են, որոնք լեզվի մեջ ընդունվում են առաջին հերթին որպես օտարաբանություններ [5] և միայն որոշ ժամանակ անց այդ բառերը, եթե ամբողջությամբ համապատասխանում են մեր արտասանական սպարատին, կամ էլ չեն հակասում մեր լեզվամտածողությանը, մտնում են մեր լեզվի հիմնական բառաֆոնդի մեջ որպես փոխառություն, իսկ երբ այդ փոխառությունները չեն ընդունվում կամ էլ ստեղծվում են հայերեն համարժեքները, այդ բառերը դառնում են օտարաբանություններ [5]:

Եսայի Ղրիմեցու երկում առկա են իրանյան, հունալատինական, ասորական և այլ փոխառություններ: Ներկայիս տվյալներով իրանյան փոխառությունների թիվը 1411-ն է [3], որի մեջ մտնում են տարժամանակյա քննության բոլոր հավաստի տվյալները, այսինքն` քննության է ենթարկված և սպացուցված փոխառու լեզվի` պարսկերենի փուլերը` հին, միջին (պահլավերեն), նոր:Պարսկերենի երեք փուլերի փոխառություններից էլ առկա են այս երկում, քանի որ Ղրիմեցին միջնադարի վերջին շրջանի հեղինակներից է (15-րդ դար): Ի տարբերություն բնիկ բառերի իրա-

նական փոխառությունների մեջ ֆիզիկական տարբեր գործողություններ ինաստային խմբի բառերն իրենց քանակով(10բառ) դերանունների ինաստային խմբից(4բառ՝ դէմ (76), վասն (81), կարի (80), յոյժ (75)) շատ են ազդել (81), աւարտել (77), շինել (93), պատկեր (77), պղինձ (81), քարշել (80), սպառել (72) և այլն: Երկում իրենց քանակով նշված խմբին հավասար է տարածական հարաբերությունների ինաստային դաշտը. Բաժին (74), բաժանել (78), բնական (52), սոստապես (81) և այլն: Զգայական ընկալում ինաստային խմբում ունենք ութ բառ(երաշտ (86), կարմրանալ (86), գոյն (81) (երանգ), խաւարումն(80) և այլն), սրանից ընդամենը մեկ բառով պակաս է ունեցվածք,սեփականություն խումբը. անարժան (53), պարտ(ք) (85), վնաս (80), օգնել (70) և այլն, ինչպես նաև տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ խումբը. ազգ (78), թագաւոր (78), իշխել (81), հրաման (86), պատուական (75), սահման (75), տաճիկ (93): Սրան հաջորդում է ռազմական գործ խումբը(6բառ). զէն (85), զօր(ք) (75), զորաւոր (81), զորութիւն (81), նահանջ (93), պատերազմ (80): Ժամանակ ինաստային դաշտից էլ ունենք հինգ բառ. ժամ (52), հանապազ (93), միշտ (81), յաւիտեան (86), պատրաստ (85):Մտածողություն,միտք ինաստային խմբից երկում հանդիպել ենք երեք բառ(վարդապետ (76), յիշել (53), գուշակել (86)):Նույնքան փոխառյալ բառ ունենք զգացմունք,խառնվածք, բարոյական ըմբռնումներ(կամիլ (78), փառաւորութիւն (77), փառ(ք) (86)),մարմնի մասեր(ախտ (81), աշխատութիւն (53), մահ (75)) ինաստային դաշտերում:Ֆիզիկական աշխարհից ունենք երկու բառ(աշխարհ (53), բնութիւն (75)), այդքան էլ՝ քանակ,թվից(համար(ք)(93), համարիլ (86)), իսկ կենդանիներ (վիշապ (58)), բուսականություն(խաշխաշ (75)) և շարժում, տեղափոխություն(գաւազան (52),(անասուն քշելու փայտ[2]) ձայնական արտահայտություն(պատասխանի(86)) խմբերից՝ մեկական բառ:Երկում բացակայում են հետևյալ ինաստային խմբերը՝ մարդկություն, սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություն, ուտելիք, ըմպելիք, կերակրի պատրաստում, ամանեղեն, հագուստ, անձնական զարդարանք և խնամք, բնակարան, տուն, կահկարասի, օրենք, կրոն և նախապաշարմունք:

Չնայած հունական փոխառությունները փոքրաթիվ են, այնուամենայնիվ, փոխառված բառերի մեծ մասը, դասվելով հնագույն փոխառությունների շարքը, մինչև այժմ էլ շարունակում են իրենց գործածությունը [9]: Ակադեմիկոս Գ.Ջահուկյանը հունական փոխառությունների մասին գրում է. <Հունական փոխառությունները ըստ կենսունակության բաժանվում են 3 խմբի. 1) բառեր, որոնք մինչև այժմ շարունակում են գործել ժամանակակից գրական լեզվում... 2) բառեր, որոնք դուրս են եկել և ապա շրջակա լեզուների ազդեցությամբ վերակենդանացել.... 3) բառեր, որոնք դարձել են անգործածական> [9]:

Վերը առանձնացված խմբերից էլ հանդիպել ենք օրինակներ և որպեսզի ասվածը ակնառու լինի, բերենք երկուս առկա փոխառությունների իմաստային խմբերը, որոնք ութն են՝ ա)մտածողություն, միտք՝ դիպեթիքոս (80), փիլիսոփայ(80), բ)ժամանակ՝ կիրակի (53), բույե (73), գ)կենդանիներ՝ թոն (ձկան տեսակ) (86), դ) մարմնի մասեր՝ ստամոքս (ստամոքս) (85), ե) բնակարան, տուն՝ կամար (76), զ)ֆիզիկական գործողություններ՝ բանալ (75), է)խոսք, գիր՝ տումար (տումար) (52), ը)սպասարկու բառեր՝ բաց (53):

Հռոմեացիների հետ շուրջ 400 տարի տևած սերտ շփումները հայոց լեզվի համար օգտավետ էր այնքանով, որ ավելացվեցին քաղաքական և մշակութային ոլորտի բառերի քանակը: Երկուս լատինական փոխառությունների ընդամենը երկու իմաստային խումբ ունենք՝ ա) ընկերիք՝ խմել (85) (նախնական ձևը եղել է հումել (9)), բ)ժամանակ սպրիլ (57), դեկտեմբեր (65), հոկտեմբեր (69), մայիս (53), մարտ (53), յուլիս (60), յունիս (59), յունուար (53), նոյեմբեր (64), սեպտեմբեր (62), փետրուար (նախնական ձևը փեբրուարիոս [9] (53), օգոստոս (61):

Հայերենը ասորերենից ևս կատարել է փոխառություն: Այս փաստը կապված է այն հանգամանքի հետ, որ ժամանակին Հայաստանը և Ասորեստանը եղել են սահմանակից երկրներ:

Ասորերենից փոխառված ընդհանուր բառերի իմաստային խմբերը ուսումնասիրելիս պարզ երևում է որոշակի խմբերի համեմատաբար ավելի շատ բառերի առկայությունը, օրինակ՝ կենդանիներ, ունեցվածք, սեփականություն և առևտուր, ընթերցանություն և գիր, կրոն և նախապաշարմունք: Հայերը շփվել են ասորիների հետ ավելի շատ սոցիալական, մշակութային (գիտություն) և կրոնական ասպարեզներում: Ղրիմեցու երկուս ասորական փոխառությունների վեց իմաստային խումբ կա՝ ա) ունեցվածք, առևտուր՝ փոխ (81), բ) կրոն, նախապաշարմունք՝ արեղայ (53), ծոմ(85), գ)ժամանակ՝ շաբաթ(52), դ)խոսք, գիր՝ թարգմանել(78), է)հասարակական հարաբերություններ՝ հրեայ (78), գ)ռազմական գործ՝ բերդ (75):

Բացի վերը քննված փոխառություններից, կան նաև փոյուզիական, ասուրական, վրացական, ինչպես նաև փոքրասիական լեզուներից, որոնց օրինակները սակավ են: Երկուս հանդիպել ենք մեկ փոյուզիական փոխառություն՝ Աստուած (86) (կրոն և նախապաշարմունք): Ասուրական փոխառություններից հանդիպել ենք 2 օրինակ: Դրանք են՝ կշիռ (62), փոխել (86):

Կովկասյան լեզուներից ունենք 3 փոխառություն՝ բակ (86), մշակ (86), խռովութիւն(86), իսկ փոքրասիական լեզուներից հանդիպել ենք 2 փոխառություններ՝ կարիճ (63), աղիւսակ (78):Ե. Ղրիմեցու երկուս առկա է 2 վրացական փոխառություն, որոնք, ինքնին հասկանալի է, ավելի ուշ

շրջանի փոխառություններ են՝ տուտ (76) (հաստ ճյուղ), վաղվնկուց (85) (վաղ):Կա ևս 2 բառ, որոնց փոխատու լեզուն Հր. Աճառյանը չի նշում՝ կա (80), գրգռիլ(80)(որն առաջացել է անծանոթ գիտ արմատից (1)):

Արաբերենից, 12-րդ դարից սկսած, կատարվել են շատ արժեքավոր թարգմանություններ գիտության տարբեր բնագավառներին վերաբերող գրականությունից: Ղրիմեցու երկում արաբական փոխառությունները հիմնականում տոմարական բնույթ ունեն և ավելի շատ տերմիններ են: Ֆիզիկական աշխարհին վերաբերող բառերը հինգն են՝ Ջօհալ (Երևակ) (75), Ջօհրայ (Լուսնաբեր) (75), Մառէխ (Հրատ) (75) , Մուշթարի (Լուսնթագ) (75), Օտարիտ (Փայլածու) (75):Բնականաբար ժամանակի իմաստային դաշտը ընդամենը մեկ բառով է պակաս նախորդից՝ դալիթայ (վայրկյանի 1/60-րդ մասը)(75), դավալիթ (վայրկյանի 1/3600-րդ մասը) (75), սանխայ (վայրկյան) (75), մարգազ(հայկական տոմարի 11-րդ ամիսը) (92): Հաջորդ իմաստային խումբը քանակ,թիվն է(3բառ)՝ թագլիթ(եռյակ) (72), թարպեղ (քառյակ) (72), թասդիս (վեցյակ) (72):Երեք բառ էլ կրոն, նախասպաշարմունք խումբն ունի՝ մուդարինա(մերձենայ)(72),շարաֆ պատիվ, բարձրություն) (54), տալեղ (ճակատագիր) (75): Շարժում, տեղափոխությունից երկու բառ է՝ հպութ (անկում) (55), մուդասիլա (դեմառդեմ լինել) (72): Ունեցվածք իմաստային դաշտից երկու մեկ բառ կա՝ մահր (օժիտ փեսայից հարսնացուին) (92),նույնքան բառ էլ՝ տարածական հարաբերություն(խասիպթ (հատկություն) (75)) և ռազմական գործ(պուրճ (89) (կենդանակերպ) իմաստային խմբերից: Մանրակրկիտ ուսումնասիրելով Ղրիմեցու □Տումար Արեգական և Լուսնի□ երկի բառապաշարը՝ կարող ենք իրականացնել վիճակագրություն:

| անվանում | բնիկ բառ | փոխառյալ բառեր | | | | | |
|----------|----------|----------------|----------|--------|-------|---------|----------|
| | | իրանյան | հունական | լատին. | ասոր. | այլ փոխ | արաբական |
| տեսակ | - | | | | | | |
| քանակ | 253 | 75 | 9 | 13 | 7 | 12 | 20 |

Ինչպես արդեն նշել ենք, Ե. Ղրիմեցին իր երկի առաջին էջում նեկայացրել է մուդրակների և կենդանակերպերի անվանումները հինգ տարբեր լեզուներով (ղրիմեցին արաբերենի փոխարեն գրում էլարապկերեն,իսկ լատիներենի փոխարեն՝ հռոմայեցերեն):

ա)Մուդրակների անունները.

| հայերեն | արաբերեն | պարսկերեն | հունարեն | լատիներեն |
|----------|----------|-----------|----------|------------|
| Երևակ | Ջօհալ | Ջրուան | Կոնոսու | Մաթունփուս |
| Լուսնթագ | Մուշթարի | Տէրրնջ | Ջևսի | Ճուպիդեո |
| Հրատ | Մառէխ | Մարգ | Արէս | Մարս |
| Արեգակն | Շամա | Խօրսեմ | Ելիօս | Սօլ |

| | | | | |
|-----------|---------|--------|----------|--------------|
| Լուսնաբեր | Զօհրա | Տնահատ | Ափրոդիտե | Վէնուս |
| Փայլածու | Աւտարիտ | Տոճ | Երմուս | Մեղզուոհիուս |
| Լուսին | Ղամար | Մանգ | Մելինե | Լունա |

բ) 12 կենդանակերպերի անունները. (անվանումները ներկայացնում ենք բնագրի ուղղագրությամբ)

| հայերեն | արաբերեն | պարսկերեն | հունարեն | լատիներեն |
|-----------|----------|-----------|-----------|--------------|
| Խոյ | Համալ | Վարբակ | Կոիոս | Արիէս |
| Յուլ | Թաւր | Կաւէ | Դաւրօս | Տաւրուս |
| Եկաւոր | Ճաւզա | Դուիպաքար | Տիտուս | Ճէմինի |
| Խեցգետին | Սարաթան | Գոզանդ | Կարկինօս | Գանցեռ |
| Առիւծ | Ասաթ | Շէր | Լէօ | Լեօն |
| Կոյս | Սմպուլա | Դօսիճակ | Պարթէնօս | Վիոզօ |
| Կշիռ | Միզան | Դարազու | Զիդօս | Լիպրա |
| Կարիճ | Ադրապ | Գրէժում | Ըսկօրբիօս | Սկօրբիուս |
| Աղեղնաւոր | Ղաւս | Նէմասպա | Տոքստիօս | աճիդարիուս |
| Այծեղջիւր | Ճաղի | Բզասար | Երօկերօս | աբրիգոռնիուս |
| Զրիռ | Դալու | Դուլ | Ետիքէս | Ագուատիուս |
| Չուկն | Հութ | Մահի | Եիդիս | Բիսիս |

Նշենք, որ Ղրիմեցին իր երկում ներկայացրել է աղյուսակներ, որոնք իր կատարած դիտումների արդյունքներն են ամփոփում: Հետաքրքիր է, որ Լուսնի և Արեգակի փոխադարձ դիրքերի վերաբերյալ աղյուսակը տրված է արաբերեն և հայերեն լեզուներով ու վերնագրված է. <Հայեցք Լուսնի ընդ Արեգական յարապկերեն և հայերեն>: Աղյուսակներում երբեմն հայերենի փոխարեն տրված են արաբական համարժեքները, ինչպես պուրճ(կենդանակերպ), դարաճայ(աստիճան), սանիա(վայրկյան) և այլն:

Այսպիսով, Ղրիմեցու երկի բառապաշարի քննությունից պարզվում է. 1. Բնիկ բառերի մեջ առաջին տեղում է դերանվանական և սպասարկու բառեր ու մասնիկներ իմաստային խումբը(43 բառ), երկրորդ տեղում է քանակի և թվի իմաստային խումբը(30 բառ), երրորդ տեղում է ֆիզիկական տարբեր գործողությունների իմաստային խումբը (25 բառ), իսկ տարածական հարաբերությունների իմաստային խումբը բնիկ բառերի մեջ չորրորդ տեղում է(23 բառ), որին հաջորդում են շարժման, տեղափոխության (20 բառ), զգայական ընկալումների (16 բառ), ֆիզիկական աշխարհի (15 բառ), ժամանակի (13 բառ) իմաստային խմբեր:

2. Ի տարբերություն բնիկ բառերի, որոնք ընդգրկում են 22 իմաստային խմբեր, փոխառյալ բառերն ավելի քիչ են ընդգրկում (իրանյանը՝ 17, արաբականը և հունականը՝ 8, ասորականը՝ 6, ասուրականը՝ 5, լատինականը՝ 2):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, մաս I, Երևան, 1940, էջ 3, 108-112, 183, 604 մաս II, Երևան, 1951, էջ 328:
2. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հատոր Ա, Երևան, 1971, էջ 525, 403, հ. Բ, Ե., 1973, հ. Գ, 1977, հ. Դ, Երևան, 1979, էջ 493:
3. Դիլբարյան Ն., Խաչատրյան Ա., Բնիկ հայերեն և փոխառյալ բառերը, Երևան, 2007, էջ 79:
4. Եսայի Ղրիմեցի , Տումար Արեգական եւ Լուսնի, Երևան, 1990, էջ 52-93, 153:
5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2007, էջ 125, 127, 148, 150:
6. Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, հ. Ա-Բ, Երևան 1987-1992:
7. Սալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. I-IV, Երևան, 2010:
8. Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1873:
9. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախազրային ժամանակաշրջան, Երևան, 1987 էջ 29, 76, 204-214, 628:

РЕЗЮМЕ

ИСКОННЫЕ И ЗАИМСТВОВАННЫЕ СЛОВА В ТРУДЕ ЕСАИ КРЫМЕЦИ “КАЛЕНДАРЬ СОЛНЦА И ЛУНЫ”

Н. В. ПАРОНИЯ

Есаи Крымeci является одним из лучших представителей средневековых календароведов. Он родился в начале XV века в Крыму. Из трудов автора до нас дошел „Календарь Солнца и Луны”.

Крымeci в своем труде употребил 253 исконных слов. Из заимствованных слов самый большой слой – это иранизмы (75), на втором месте арабизмы (20), латинские заимствования- 13 слов, греческие 9, ассирийские 7, остальные заимствования очень малочисленны: кавказские 3, асурийские, ма-лоазийские и грузинские по 2, фригийские 1.

SUMMARY

NATIVE AND BORROWED WORDS IN „CALENDAR OF THE SUN AND THE MOON” BY YESAYI CRIMETSY

N. V. PARONYAN

Yesayi Crimetsy is on outstanding figures of Armenian Medieval literature. He lived and worked in the Crimea in the fifteenth century. He used 253 native words in this work. Most of the borrowed words 75 were from Persian. 20 words were borrowed from Arabic. There were 13 borrowed words from Latin, 9 words were borrowed from Greek, 7 words from Assyrian. The least words were borrowed from Caucasian(3words), 2 words were borrowed from Surian, Small – Asian and Georgian. Only 1 word was borrowed from Frugian.

**TOPICAL ISSUES OF INTERNATIONAL HUMANITARIAN LAW
REGULATIONS CONCERNING THE CONDUCT OF HOSTILITIES**

L. A. EREMYAN
Russian-Armenian University

Elaboration of current program has an aim to promote specialized studies within the framework of International Humanitarian Law (“IHL”) in the higher educational institutions. Under the provisions of the Geneva Conventions of 1949, to which the Republic of Armenia is a party, states have an obligation to disseminate the text of the Conventions, including by elaboration of study programs in civil institutions if possible.¹ Teaching specialized courses in IHL seems to be of a specific importance for the Republic of Armenia due to the tensioned relations between the countries in the region. We believe that higher educational institutions in Armenia should pay a greater attention in terms of working out specialized courses in the field of IHL. Current study program is developed specifically as a teaching course for LL.M. students.

Introduction to the Subject

The scope of the subject is designed to cover the contemporary debates of special significance with regards to the conduct of hostilities within the framework of International Humanitarian Law. International-legal provisions governing the conduct of hostilities constitute the major part of the Law of Armed Conflicts. International Humanitarian Law regulations on the conduct of hostilities envisage legal restrictions on the way the wars are waged by the parties to the conflict, stipulate prohibitions and restrictions on various means and methods of warfare. These rules are designed to draw a balance between humanitarian considerations and military necessity. The course will focus on the current challenges to International Humanitarian Law regulations concerning the conduct of hostilities.

The Aims of the Course

By the end of the Course “Topical Issues of IHL Regulations concerning the Conduct of Hostilities” the student will be expected to gain sufficient knowledge and understanding of IHL rules and principles concerning the conduct of hostilities, as well as to develop necessary skills and attitude towards application of the knowledge gained.

¹ See 1949 Geneva Convention I, article 47; 1949 Geneva Convention II, article 48; 1949 Geneva Convention III, article 127; 1949 Geneva Convention IV, article 144

The Objectives of the Course

- Explain IHL rules and principles governing the conduct of hostilities
- Discuss the correlation of International Human Rights Law and International Humanitarian Law
- Discuss new challenges imposed to IHL regulations governing the conduct of hostilities within the framework of existing Law of Armed Conflicts (*lex lata*)
- Evaluate the effectiveness of IHL rules governing the conduct of hostilities and discuss possible modifications desired for the future (*lex ferenda*)
- Apply IHL rules and principle concerning the conduct of hostilities within the framework of case-studies, problem questions and role playing
- Develop presentation and argumentation skills

The Outline of the Course

Topic 1: Introduction to the subject

- a) Brief history of development of regulations governing the conduct of hostilities
- b) Modern rules governing the conduct of hostilities: main sources
- c) Practical importance of understanding IHL regulations on the conduct of hostilities in general, and such importance for the Republic of Armenia in particular

Topic 2: The Issue of Qualification of the Situation as an Armed Conflict

- a) Legal basis for classification of armed conflicts
- b) International Armed Conflicts and applicable IHL provisions
- c) Non-international Armed Conflicts and applicable IHL provisions
- d) The issue of internationalization of non-international armed conflicts
- e) Challenges caused by the so-called “war on terror” for application of IHL rules and principles

Topic 3: Problems of Correlation between International Human Rights Law (IHL) and International Humanitarian Law (IHRL)

- a) Main differences between IHL and IHRL
- b) Building “bridges” between the two separate branches of Public International Law, namely: IHL and IHRL
- c) *Lex specialis* doctrine and problematic aspects of its application
- d) Application of IHRL with regard to the right to life during armed conflicts.
- e) The effectiveness and competency of IHRL institutional framework when making decisions taking into account the existence of an armed conflict

Topic 4: Cardinal Principles of IHL and other Customary IHL Rules Governing the

Conduct of Hostilities

- a) The principle of discrimination
- b) The principle prohibiting unnecessary suffering and superfluous injury
- c) Military necessity
- d) The rule of proportionality
- e) Precautions in attacks and against the effects of such

Topic 5: The Problems of Identifying Individual Status in the Conduct of Hostilities

- a) The status of Combatants
- b) The status of Civilians
- c) The status of the members of organized armed groups. Problematic aspects of the concept of “direct participation in hostilities”
- d) The legal meaning of the term “unlawful combatant”
- e) Targeted killings

Topic 6: International Legal Limitations on Means and Methods of Warfare

- a) Bases for prohibition of weapons, means or methods of warfare
- b) States’ obligation to conduct legal review of weapons, means and methods of warfare
- c) Restrictions or prohibitions of certain weapons
- d) Legality of nuclear weapons
- e) General principles of IHL setting limitations on means and methods of warfare vs explicit conventional prohibitions of certain weapons: the debate concerning the effectiveness of the way of envisaging restriction/prohibition

Topic 7. Cyber Warfare

- a) Military Use of Cyberspace. Can Cyber Attacks Amount to Armed Conflict?
- b) Principle of Discrimination in the Light of Cyber Attacks
- c) Proportionality in the Context of Cyber Attacks
- d) Precautionary Measures and State’s Obligation to Protect Civilians. Militarization of civilians
- e) Legal Framework on Cyber Warfare

Topic 8. Robotic Warfare

- a) Unmanned Combat Vehicles
- b) Debate on the legality of Unmanned Combat Air Vehicles
- c) Legality of fully autonomous robots
- d) Moral, ethical and psychological aspects of using robotic technologies as means of warfare
- e) Debate concerning the need for new IHL regulations in the light of development of new robotic technologies

Approximate topics of presentations and essays

1. Challenges for application IHL regulations created by internationalization of non-international armed conflicts
2. The effectiveness of *lex specialis* doctrine as a tool to explain the nature of IHL-IHRL correlation
3. The effectiveness of the cardinal principle of IHL on Prohibition of unnecessary suffering and superfluous injury
4. “Unlawful combatants”: a new status in IHL?
5. Problems of implementation of specific mechanism for conducting legal review of new weapons, means and methods of warfare
6. Legality of the use of nano-technologies for military purposes

7. Explaining the difference between the indiscriminate use of lawful weapons and weapons which by their nature inherently indiscriminate or have indiscriminate effects
8. The status of employees of private military and security companies under IHL
9. Arguing the importance of development of the Law of Armed Conflicts for the republic of Armenia
10. A case study: analysis of the Nagorno-Karabakh conflict in the light of IHL regulations
11. A case study: analysis of Israeli-Palestinian conflict in the light of IHL regulations

Questions for independent research

1. IHL and IHRL regulations on the development and use of Non-lethal weapons
2. Perfidy under the Law of Armed Conflicts
3. Improper use of emblems and uniforms as a method of warfare
4. Espionage: problems of legal definition
5. Rules and principles governing the conduct of hostilities aiming at protection of the environment
6. War crimes
7. Individuals and objects entitled to special protection for attacks

Reading Materials

Main books

Marco Sassòli, Antoine A. Bouvier, Anne Quintin, *How Does Law Protect in War* (2011) ICRC

Yoram Dinstein, *The Conduct of Hostilities under the Law of International Armed Conflict* (2010) Cambridge University Press

Jean-Marie Henckaerts and Louise Doswald-Beck, *Customary International Law, Volume 1: Rules* (2005) Cambridge University Press

Primary Sources

i) Treaty Instruments

1. Convention (IV) Relative to the Protection of Civilian Persons in Time of War (1949) Geneva;
2. Convention (III) Relative to the Treatment of Prisoners of War (1949) Geneva;
3. Protocol Additional to the Geneva Convention of 12 August 1949, and relating to the Protection of Victims of Non-International Armed Conflicts, 8 June 1977;
4. Protocol Additional to the Geneva Conventions of 12 August 1949, and relating to the Protection of Victims of International Armed Conflicts, 8 June 1977;
5. European Convention on Human Rights, 1950;
6. International Covenant on Civil and Political Rights, UN, 1966;
7. UN Human Rights Committee ('HRC'), General Comment No. 31 [80], 2004;

8. Convention on Cluster Munitions (2008);
9. Convention on the prohibition of the development, production, stockpiling and use of chemical weapons and on their destruction, Paris (13 January 1993);
10. Convention on the Prohibition of the Development, Production and Stockpiling of Bacteriological (Biological) and Toxin Weapons and on their Destruction (1972);
11. Convention on the Prohibition of the Use, Stockpiling, Production and Transfer of Anti-Personnel Mines and on their Destruction, (1997);
12. Convention Respecting the Laws and Customs of War on Land and its annex: Regulations concerning the Laws and Customs of War on Land, (1907) Hague;
13. United Nations Convention on Prohibitions or Restrictions on the Use of Certain Conventional Weapons which may be deemed to be Excessively Injurious or to have Indiscriminate Effect (1980);
14. Declaration to Prohibit, for the Term of Five Years, the Launching of Projectiles and Explosives from Balloons, and Other Methods of Similar Nature (1899) The Hague;
15. Protocol on Blinding Laser Weapons (1995);
16. Protocol on Explosive Remnants of War (2003);
17. Protocol on Non-Detectable Fragments (1980);
18. Protocol on Prohibitions or Restrictions on the Use of Incendiary Weapons (1980) Geneva;
19. Protocol on Prohibitions or Restrictions on the Use of Mines, Booby-Traps and Other Devices (1980) Geneva;
20. Protocol for the Prohibition of the Use of Asphyxiating, Poisonous or Other Gases, and of Bacteriological Methods of Warfare (1925).

ii) Cases

1. Advisory Opinion on the Legality of the Threat or Use of Nuclear Weapons, ICJ, 1996;
2. Advisory Opinion on the Legal Consequences of the Construction of a Wall in the Occupied Palestinian Territory, ICJ, 2004;
3. Armed Activities on the Territory of the Congo (Democratic Republic of the Congo v. Uganda), ICJ, 2005;
4. Case Concerning Military and Paramilitary Activities in and Against Nicaragua (1986) ICJ;
5. Decision on the Defence Motion for Interlocutory Appeal on Jurisdiction, Prosecutor v. DuskoTadic, ICTY, 1995;
6. Loizidou v. Turkey (Preliminary Objections), ECHR (23/03/1995);
7. The Public Committee against Torture in Israel v. Government of Israel et al. (2006) H.C.J. 769/02.
8. Juan Carlos Abella v. Argentina, Case 11.137, Report no 55/97, IACHR (1997);

Secondary Sources

1. Noam Lubell, *Extraterritorial Use of Force against Non-State Actors* (2010) Oxford University Press;

2. A.P.V. Rogers, *Law on the Battlefield* (2004) 2ndedn., Cambridge University Press
3. Judith Gardam, *Necessity, Proportionality and the Use of Force by States* (2004) Cambridge University Press;
4. Alexander Gillespie, *A History of the Use of War: Volume 3* (2011) Hart Publishing
5. P. W. Singer, *Wired for War* (2009) The Penguin Press;
6. Nils Melzer, *Targeted Killing in International Law*, (Oxford Scholarship Online 2009) ;
7. Armin Krishnan, *Killer Robots: Legality and Ethicality of Autonomous Weapons*, (2009) APL;
8. Commentaries for Article 2 of the Geneva Conventions: Pictet, J., *Commentary of the First Geneva Convention*, Geneva, ICRC (1952);
9. International Committee of the Red Cross (“ICRC”), “How is the Term “Armed Conflict” Defined in International Humanitarian Law?”, *Opinion Paper* (2008);
10. Hays Parks, “Part IX of the ICRC “Direct Participation in Hostilities” Study: No Mandate, No Expertise and legally Incorrect”(ILP 2010);
11. Nils Melzer, *Interpretive Guidance on the Notion of Direct participation in Hostilities under International Humanitarian Law* (ICRC 2009);
12. Yvez Sandoz et al., *ICRC, Commentaries to Additional Protocol I*;
13. Noam Lubell, *Challenges in Applying Human Rights Law to Armed Conflict*, 2005, 87 *International Review of the Red Cross* 737 – 754;
14. Françoise J. Hampson, *The Relationship between International Humanitarian Law and Human Rights Law from the Perspective of Human Rights Treaty Body*, 2008, 90 *International Review of the Red Cross*, 549 – 572;
15. NanciePrud'homme, ‘LexSpecialis: Oversimplifying a More Complex and Multifaceted Relationship?’ (2007) 40 *ISR. L. REV.* 356 – 394;
16. Transcript: Condoleezza Rice on Fox News Sunday, November 11, 2002;
17. White House, *Statement by the Press Secretary on Geneva Convention* (May 7, 2003);
18. Monica Whitlock, ‘Legal limbo of Guantanamo's prisoners’;
19. Antonio Cassese, “Weapons Causing Unnecessary Suffering: are they Prohibited?”(1975) *Rivista di diritto internazionale*;
20. Department of Defense, Office of General Counsel, “An Assessment of International Legal Issues in Information Operations” (1999);
21. Discussion Paper, Article 36, “Anti-vehicle mines, victim-activation and automated weapons” (2012);
22. *Cyber Warfare: Newly Nasty* (24 May 2007) *The Economist*;
23. Isabelle Daoust et al., “New Wars, New Weapons? The Obligation of States to Assess the Legality of Means and Methods of Warfare” (2002) *IRRC*;

24. ICRC, "A Guide to the Legal Review of New Weapons, Means and Methods of Warfare: Measures to Implement Article 36 of Additional Protocol I of 1977" (2006) 88 IRRC;
25. Eric Rosenberg, "Pentagon Defends attacks / It says Predator Drone Bombed an "Appropriate Target"" (12.02.2002) Hearst Newspapers A3;
26. Louise Doswald-Beck, "International humanitarian law and the Advisory Opinion of the International Court of Justice on the legality of the threat or use of nuclear weapons", (1997) 316 IRRC;
27. Nils Melzer, "Cyber Operations and Jus in Bello" (2011) Disarmament Forum;
28. Nils Melzer, "Cyber War and International Law" (2011) UNIDIR Resources;

Additional reading materials

Primary Sources

i) Treaty Instruments

1. International Covenant on Social, Economic and Cultural Rights, UN, 1966;
2. Statutes of the ICRC, Geneva 1986, amended in 1991 and 2006;
3. Draft Article on Responsibility of States for Internationally Wrongful Acts, ILC (2001);
4. Hague Declaration Concerning Asphyxiating Gases (1899);
5. Rome Statute of the International Criminal Court (1999);
6. Vienna Convention on the Law of Treaties, UN, 1969;
7. Convention (II) with Respect to the Laws and Customs of War on Land (1899) The Hague;
8. Declaration Renouncing the Use, in Time of War, of Explosive Projectiles Under 400 Grammes Weight (1868) Saint Petersburg.

ii) Cases

1. Prosecutor v. Dario Kordic and Mario Cerkez, ICTY, 2004;
2. The Prosecutor v. Akayesu, case no. ICTR-96-4-T (1998);
3. Prosecutor v. Fatmir Limaj, Judgment (2005) ICTY;
4. Prosecutor v. Kupreskic et. al., Judgment (Jan.2000) ICTY;
5. Prosecutor v. Stanislav Galic, Judgment, Case No. IT-98-29-T (2003).

Secondary Sources

1. Cordula Droege, Elective Affinities? Human Rights and Humanitarian Law, 2008, 90 International Review of the Red Cross 501 – 548;
2. Jean Pictet, *Development and Principles of International Humanitarian Law*, (Martinus Nijhoff Publishers, 1985);
3. William Abresch, A Human Rights Law of Internal Armed Conflict: The European Court of Human Rights in Chechnya, CHR/GJ Working Paper No. 4, 2005;

4. David E. Graham, 'The Law of Armed Conflict and the War on Terrorism' (2006) 80 ILS 331;
5. Jelena Pejic, 'Unlawful/Enemy Combatants: Interpretations and Consequences' 15 IHLS 235;
6. M. Dennis, 'Application of Human Rights Treaties Extraterritorially to Detention of Combatants and Security Internees: Fuzzy Thinking All Around?' (2006) 12 ILSA J.I.C.L.;
7. Robert K. Goldman and Brian T. Titemore, "*Unprivileged Combatants and the Hostilities in Afghanistan: Their Status and Rights Under International Humanitarian and Human Rights Law*" (ASIL 2002);
8. Kenneth Watkin, "Opportunity Lost: Organized Armed Groups and the ICRC "Direct participation in Hostilities" Interpretive Guidance", (2010) ILP
9. Alain De Neve, "Military Uses of Nanotechnology and Converging Technologies: Trends and Future Impacts" Focus Paper 8, Royal High Institute for Defense Center for Security and Defense Studies;
10. Alexandra Miller et al. "Preconceptional paternal exposure to radiation or heavy metals like cadmium can induce cancer in unexposed offspring";
11. Bradley Graham, "Cyber-war: A New Weapon Awaits a Set of Rules; Military, Spy Agencies Struggle to Define Computers' Place in U.S. Arsenal" Wash. Post, AL;
12. Christopher Drew, "Human Rights Group Says 29 Civilians Were Killed by Israeli Air Attacks in Gaza" (2009) NYT;
13. David Fidler, "The Meaning of Moscow: "Non-lethal" Weapons and International Law in the Early 21st Century" (2005) IRRRC;
14. David Hambling, "Cancer Worries for New U.S. Bombs" (2009);
15. David Isenberg, "'Non-lethal' Chemicals that Kill" (01.04.2003) Asia Times;
16. Erik Sofge, "America's Robot Army: Are Unmanned Fighters Ready for Combat?" (2009);
17. Instructions for the Government of Armies of the United States in the Field (1863);
18. Jane Mayer, "The Predator War. What are the risks of the C.I.A.'s covert drone program?" (26 October 2009);
19. Jeffrey K. Walker, "The Demise of the Nation-State, The Dawn of New Paradigm Warfare, and a Future for the Profession of Arms" (2001);

20. Julian Assange, "US Violates Chemical Weapons Convention" Wikileaks report;
21. Jurgen Altmann, *Millimetre Waves, Lasers, Acoustics for Non-lethal Weapons? Physics Analyses and Inferences* (2008);
22. Kevin Poulsen, 'Cyberwar' and Estonia's Panic Attack (2007);
23. Lawrence Greenberg et al, "Information Warfare and International Law" (1998) NDUP;
24. Lord Bingham Interview (transcript) with Joshua Rozenberg on "Rule of Law" (2009);
25. Mark Wheelis and Malcolm Dando, "A Case Study of the Imminent Militarization of Biology" (2005) IRRC;
26. *Matthew Bolton, Thomas Nash and Richard Moyes, "Ban Autonomous Armed Robots" (05.03.2012) Article 36;*
27. Michael Vassar and R. Freitas, "Lifeboat Foundation Nano-Shield Version 0.90.2.13";
28. NATO Cooperative Cyber Defence Centre of Excellence Tallinn, Estonia ("CCDCOE");
29. NATO Policy on Non-lethal Weapons (1999);
30. NATO, "The Human Effects of Non-Lethal Technologies"(2006) RTO report;
31. Philip Alston, "Study on Targeted Killings" (28.05.2008) UN A/HRC/14/24/Add.;
32. Philip Spoerri, Conclusions of the 34th Round Table on Current Issues of IHL, "IHL and New Weapon Technologies" (Sept. 2011);
33. P.W. Singer, "Military Robots and the Future of War" TED talk (2009);
34. RiaNovosti, "Terrorist act at Dubrovka: the chronology of the events" (23.10.2010) (*РИА Новости, "Терактна Дубровке ("Норд-Ост"): хроника событий"*)
35. Richard B. Jackson and Jason Ray Hutchison, "Lasers Are Lawful as Non-Lethal Weapons" (2006) Army Law;
36. Steven Hildreth, CRS Report for Congress on Cyberspace (2001);
37. UK Government, "A Strong Britain in an Age of Uncertainty: The National Security Strategy" (2010);
38. United Nations "Human Rights in Palestine and other Occupied Arab Territories, Report of the United Nations Fact Finding Mission on the Gaza Conflict" (2009) A/HRC/12/48;
39. United States Department of Defence Directive No. 3000.3, "Policy for Non-Lethal Weapons" (1996);

40. Vicki Brower, 'Is Nanotechnology Ready for Primetime?' (2006) Vol.98 Journal of the National Cancer Institute;
41. William Clinton, Message to the Senate on the Impact of the Chemical Weapons Convention on the Use of Riot Control Agents, 23.06.1994;
42. William Lynn, III, Remarks at USAF-Tufts-Institute for Foreign Policy Analysis Conference (21.01.2010).

ԱՄՓՈՓՈՒՄ
ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
Լ. Ա. ԵՐԵՄՅԱՆ

“Ռազմական գործողությունների վարման վերաբերյալ ՄՀԻ կարգավորումների արդի հիմնախնդիրները” ծրագրի մշակման նպատակն է իրականացնել միջազգային հումանիտար իրավունքի (“ՄՀԻ”) շրջանակներում մասնագիտացված ծրագրերի դասավանդումը բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հայաստանի Հանրապետության անդամակցած 1949 թվականի Ժնևյան Կոնվենցիաների համապատասխան դրույթների համաձայն պետությունները ստանձնել են պարտավորություն հնարավորին չափ լայնորեն տարածել Կոնվենցիաների տեքստերը իրենց երկրներում ոչ միայն պատերազմի, այլև խաղաղ ժամանակ, հնարավորության դեպքում, նաև քաղաքացիական կրթության ծրագրերում համապատասխան դասընթացների ներառման միջոցով: ՄՀԻ շրջանակներում մասնագիտացված ծրագրերի դասավանդման առանձնահատուկ կարևորությունը Հայաստանի Հանրապետության համար պայմանավորված է նաև տարածաշրջանում երկրների միջև լարված հարաբերություններով:

РЕЗЮМЕ
АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ РЕГУЛЯЦИЙ
МЕЖДУНАРОДНОГО ГУМАНИТАРНОГО ПРАВА ОТНОСИТЕЛЬНО
ВЕДЕНИЯ ВОЕННЫХ ДЕЙСТВИЙ
Л.А. ЕРЕМЯН

Программа “Актуальные проблемы регуляций МГП относительно ведения военных действий” разработана с целью стимулирования преподавания специализированных курсов в рамках международного гуманитарного права (“МГП”) в высших учебных заведениях. В соответствии с положениями Женевских Конвенций 1949 года, членом которых является и Республика Армения, государства обязуются в максимальной степени распространять в своих странах тексты Конвенций как в мирное, так и в военное время, в том числе путем включения, если возможно, соответствующих курсов в учебные программы гражданского образования. Преподавание специализированных курсов в рамках МГП представляется в особенности важным для Республики Армения с учетом напряженных отношений между государствами в регионе. Данная программа разработана, в частности, как учебно-методический материал для студентов магистратуры высших учебных заведений.

**РУССКИЕ ФРАЗЕОЛОГИЗМЫ КАК СРЕДСТВО РАЗВИТИЯ
ЛИНГВОСТРАНОВЕДЧЕСКИХ ЗНАНИЙ УЧАЩИХСЯ АРМЯН**

А. Ю. ЕРИЦЯН

Армянский государственный педагогический университет им. Х Абовяна

Язык является важнейшим средством человеческого общения, орудием передачи мыслей.

Изучение иностранного языка как средства общения невозможно без одновременного изучения культуры народа страны изучаемого языка. Лингвострановедческий аспект преподавания русского языка иностранцам рассматривает пути и способы обучения, благодаря которым можно ознакомить иностранного учащегося с историей и культурой - России через посредство русского языка и в процессе его изучения, Лингвострановедческие материалы не только знакомят с культурой изучаемого языка, но и путем сравнения выделяют особенности национальной культуры, знакомя с общечеловеческими ценностями. Это путь к осуществлению иноязычного диалога культур, обладающего большими возможностями для создания социокультурного контекста развития личности ученика. Все это повышает познавательную мотивацию учащихся и формирует способность к общению на иностранном языке. Содержание данных текстов должно быть доступным и значимым для школьников, иметь определенную новизну при описании реалий страны изучаемого языка. Лингвострановедческие тексты дают возможность реализовать воспитательные, образовательные и развивающие цели урока, помогают такой организации учебного процесса, который максимально отвечает интересам и потребностям учащихся. Национально-культурная семантика присутствует на всех уровнях языка; и в морфологии, и в синтаксисе, и в фонетике. Однако наиболее ярко она проявляется в строевых единицах языка, которые непосредственно и прямо отражают внеязыковую действительность особенности русского фольклора, искусства, быта и обычаев русского народа. К числу строевых единиц языка принадлежат слова, фразеологизмы и языковые афоризмы (пословицы, поговорки и крылатые выражения).

Остановимся на фразеологизмах. Фразеологизм - это особое сочетание слов, общее значение которого не выводится из самостоятельных значений каждого слова.

Русские фразеологизмы имеют страноведческую ценность, фразеологизмы способны сыграть ознакомительно- познавательную роль в практике преподавания русского языка иностранцам. Приведем пример работы над фразеологизмом. Для того чтобы учащиеся сумели отличить фразеологизм от пословицы, поговорки, следует указать основные различительные признаки фразеологизма. Например, если о ком-то сказано, что «он работает плохо», то смысл словосочетания вытекает из отдельных смыслов слов «работать» и «плохо». Если же перед нами фраза «он работает спустя рукава», то слова во фразеологическом сочетании не складывают смыслов, не прибавляют их один к другому, а производят общий смысл всего словосочетания. Это свойство фразеологизма называется идиоматичностью. Фразеологизм-это идиоматичное словосочетание. Другим важным свойством фразеологизма является его воспроизводимость. Известно, что мы большинство сочетаний слов строим непосредственно в процессе речи. Например, если какой-либо человек кажется нам очень умным, мы можем сказать: «ясная голова», «великолепно мыслит», «чрезвычайно умен» и т. д, а если скажем «он семи пядей во лбу», то выражение это создано не в момент речи путем комбинирования самостоятельных слов, а извлечено из памяти. Фразеологизм-это воспроизводимое словосочетание.

Языковые афоризмы, (пословицы, крылатые выражения) имеют синтаксическую форму фразы («сам кашу заварил-сам и расхлебывай»-это пословица); фразеологизмы имеют синтаксическую форму словосочетания. Так, приведенная пословица разделяется на два фразеологизма: «заварить кашу»- затеять неприятное дело;«расхлебывать кашу»-распутывать сложное дело. Что касается слов, то слова синтаксической формы членности на полнозначные элементы вообще не имеют (заварить каша, сам расхлебывать). Итак фразеологизмы синтаксически членимы. Фразеологизм-это самостоятельная (не сводимая ни к словам, ни к языковым афоризмам) языковая единица, обладающая синтаксически членимой формой, формой словосочетания, и исполняющая во фразе единую синтаксическую функцию, функцию члена предложения; фразеологизму присуща семантика лексического характера, причем речь идет об идиоматичной семантике, не выводимой из семантики каждого словосочетания -

Целесообразно представить следующие виды работ с фразеологизмом. В основном фразеологизмы отбираются учащимися из текстов художественной литературы.

Задание 1.

Выберите из приведенных фразеологизмов, подходящие к теме

- Бить баклуши
- Лодыря гонять
- Плевать в потолок
- Сидеть сложа руки
- Считать ворон

- Набрать в рот воды
- Отправиться на тот свет

Задание 2.

Передайте смысл русских фразеологизмов на армянском языке, используя самые близкие соответствия в армянском языке,

- Играть в кошки-мышки- խաղալ սև և սպիտակ խաղալ
- Намотать на ус (себе) - սկսել իր օրը
- Пристать как банный лист – սոսիսի կտրել
- Молодо-зелено- խաղալ է
- Гнуть спину(шею) – լիզել ծնկ
- Положить руку на сердце- ձեռք դնել սրտի վրա
- Показывать пальцем- ցույց դնել

Задание 3.

Найдите и соедините линиями начало и конец фразеологизмов.

- 1) ловить рыбу на неделе
- 2) семь пятниц в кошки-мышки
- 3) играть в мутной воде
- 4) бросать камешек с краю
- 5) моя хата в огороде
- 6) денег колесо в телеге
- 7) шпое ... куры не клюют

Задание 4.

Вспомните фразеологизмы, в которых употребляются выделенные слова,

- Мерить-аршин (мерить на свой аршин)
- Вода-трава(тише воды; ниже травы)
- Гусь-вода(как с гуся вода)
- Сыг-горло(сыг по горло)
- Сор-изба (выносить сор из избы)

Задание 5.

Найдите лишний фразеологизм.

- Втирать очки
- Заговаривать зубы
- Пускать пыль в глаза
- Водить за нос
- Мороз по коже
- Морочить голову

Задание 6.

Восстановите исходный текст фразеологизмов.

- Колесе как в белка вертеться
- Вода киселе на седьмая
- Хлеба с на перебиваться квас
- Четыре все на стороны
- У оказаться корыта разбитого
- Не бывало ни как в чем

- Бить колокола все во
Задание 7.

К данным ниже словам подберите синонимы-фразеологизмы, образуйте синонимический ряд,

- Запомнить-....
- Испугаться.....
- Мало-.....
- Быстро-...
- Знать хорошо-
- Беспокоиться, волноваться-....
- Болеть душой принимать близко к сердцу, во весь дух, как свои пять пальцев, знать как облупленного, сломя голову, как угорелый, во всю прыть, поджилки трясутся, капля в море, намотать на ус, кот заплакал, зарубить на носу, мороз по коже, душа уходит в пятки, своробьиный нос.
- Большой интерес для учащихся представляет этимология фразеологизмов, (изначальное значение). Так, например, на занятиях проводится объяснение значений следующих фразеологизмов.
- Умывать руки (связано со значением «снять с себя ответственность за что-нибудь, объявить о своем неучастии в деле»). Начало его лежит в древневосточном обычае, известном нам из Библии и Евангелия: человек, не виноватый в преступлении, омывал водой руки и во всеуслышание заявлял: "Я не повинен в сем" или "Руки мои чисты", что равнялось торжественной клятве.
- На лбу написано. Выражение означает: сразу видно по выражению лица. Происходит это сочетание слов от зверского обычая клеймить преступников раскаленным железом. При царе Алексее Михайловиче «бунтовщикам» клеймили лица, а позднее клеймо переносили на лоб, «чтобы они (преступники) от прочих добрых и неподозрительных людей отличны были». Таким образом, у этих несчастных всегда «на лбу было написано» их горькое прошлое
- Пускать пыль в глаза (разг.). Значение выражения связано с традиционными кулачными боями, которые проводились на Руси. В официальном документе от 1726 года формулируется конкретное наставление любителям кулачных поединков. Этот документ запрещал бить тех, кто упадет (лежащего не бьют), кроме этого, запрещены были те бои, в которых бойцы с ножами гонялись друг за другом, кидали песок в глаза. - Употребляется также в значении «обманывать кого-то, поступать с кем-то нечестно».
- Водить за нос (разг.) обманывать, вводить в заблуждение, обещая что-либо, не выполняя обещанного. Данное выражение возникло от буквальной формы, когда животному в ноздрю продето кольцо, к которому привязана веревка и его ведут за нос. Животное идет послушно, потому что не идти не может, его все равно заставят.

Изучение фразеологизмов способствует обогащению лексического запаса учащихся, развитию интереса учащихся к данному языку. Таким образом,

выполняя задания и активно участвуя в работе с текстом, учащиеся получают новые страноведческие знания, а также расширяют свою лингвострановедческую компетенцию, получают новые фоновые знания, расширяют лексический запас, совершенствуют умения и навыки восприятия речи, что помогает им в создании высказываний в устной и письменной форме.

ЛИТЕРАТУРА

1. А.М. Бабкин Русская фразеология, ее развитие и источник. Л., 1970г, 371с
2. Е. М. Верещагин, В. Г. Костомаров /Под ред. М.Верещагина Национально-культурная семантика русских фразеологизмов(Сб. статей), 1982 г, 315с.
3. Е. М. Верещагин, В. Г. Костомаров Отбор и семантизация фразеологизмов в учебном лингвострановедческом словаре (Сб. статей) Под. ред. Е.М. Верещагина, М, 1988г, 234с.
4. А. И. Молотков Основы фразеологии русского языка Л., 1977г., 156с.
5. В. П. Фелицына, В. М. Мошенко Русские фразеологизмы: "Лингвострановедческий словарь" Под ред. Е. М. Верещагина, Б. Г. Костомарова М. Рус. Язык, 1990г., 220 с.

ԱՄՓՈՓՈՒՄ

ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԼԵՉՎԱԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ Ա. ՅՈՒ. ԵՐԻՅՅԱՆ

Օտար լեզվի ուսուցումը որպես շփման միջոց հնարավոր չէ միաժամանակ առանց տվյալ ժողովրդի մշակույթի ուսուցման: Լեզվա-երկրագիտական տեքստերը հնարավորություն են տալիս իրականացնել դասի դաստիարակչական, կրթական և զարգացման նպատակները, օգնում են այնպիսի ուսումնական դասընթացի կազմակերպմանը, որը առավելագույնս պատասխանում է սովորողների հետաքրքրություններին և պահանջներին:

Ազգա-մշակութային իմաստը առկա է լեզվի լեզվի բոլոր մակարդակներում: Մակայն ավելի արտահայտիչ դրսևորվում է լեզվի շարքային միավորներում, որոնք անմիջականորեն արտացոլում են ռուսական բնահյուսության հատկությունները, ռուս ժողովրդի կենցաղն ու սովորույթները: Դրանց թվին են պատկանում դարձվածաբանությունները և լեզվի աֆորիզմները (ասացվածքները, շուտասելուկները, թևավոր խոսքերը):

Դարձվածաբանությունների ուսուցումը նպաստում է սովորողների հարստացմանը, սովորողների հետաքրքրության զարգացմանը տվյալ լեզվի հանդեպ:

SUMMARY
PHRASEOLOGY AS MEAN OF DEVELOPMENT OF A STUDENT
KNOWLEDGE OF A LANGUAGE COUNTRY STUDYING
A. Y. YERITSYAN

Foreign language learning as a means of communication isn't possible without learning people's culture.

The language country studying texts enable us to carry out teaching, learning and developmental goals, helping to organize such training courses, which responds to the maximum of student's interests and needs.

National-cultural meaning of language exists at all levels. But more impressive is displayed in language of ordinary units which directly reflects the properties of Russian folklore, the Russian people's life and habits.

Among them are phraseology, language aphorisms (proverbs, sayings, winged expression).

The studies of phraseology contributes to the enrichment of students' vocabulary, the language development of students' interest towards.

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ № 1(18) 2013 Гуманитарные науки

ՀՏԴ 911 : 378

**<ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ> ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

Ն. Ի. ՄԱՄՎԵԼՅԱՆ

***Խ. Արուսյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան***

Ռեկրեացիոն գործունեությունը (լեռ. recreacia - հանգիստ, լատ. recreatio - վերականգնում) արդի համաշխարհային տնտեսության ամենից արագ զարգացող բնագավառներից է: Տնտեսության այս ճյուղի զարգացումը պայմանավորված է, մի կողմից, բնակչության արտասաշխատանքային հանգիստը կազմակերպելու, մարդկանց ֆիզիկական ուժերը վերականգնելու և հոգեկոր պահանջումները բավարարելու հասարակական պատվերով, մյուս կողմից՝ ռեկրեացիոն նպատակներով տարածքների համալիր օգտագործման սոցիալ-տնտեսական և էկոլոգա-բնապահպանական հիմնախնդիրները լուծելու անհրաժեշտությամբ:

Մարդկային հասարակության պատմական զարգացումն այնպիսի ընթացք է ունեցել, որ միայն 20-րդ դարի երկրորդ կեսին նպաստավոր պայմաններ ստեղծվեցին իրագործելու արտասաշխատանքային ազատ ժամանակը ֆիզիկական և հոգևոր ուժերի վերականգնմանը տրամադրելու մարդկանց վաղեմի ձգտումը: Աշխատանքային և կենցաղային պայմանների բարդացման, արտադրության ինտենսիվացման հետևանքով՝ նյարդային լարվածության մեծացման պայմաններում, մարդու ֆիզիկական վիճակի և, ընդհանրապես, օրգանիզմի վրա բարեբար ազդեցություն է թողնում ակտիվ հանգիստը:

Վերջին մի քանի տասնամյակներում գիտությունների տարբեր ճյուղերում կիրառական նպատակներով տարվող գիտական հետազոտությունների ընթացքում հստակ ուրվագծվեցին զանգվածային հանգստի կազմակերպման հետ կապված բազում հիմնախնդիրներ: Դրա հետ մեկտեղ, ակնհայտ դարձավ այդ հիմնախնդիրների <աշխարհագրականությունը>՝ ռեկրեացիոն գործունեության պլանավորման տարածական ասպեկտներն ու կապն աշխարհագրական միջավայրի լանդշաֆտային

պայմանների հետ: Ռեկրեացիոն տնտեսության կազմակերպման և տարածքային պլանավորման աշխատանքներում ի հայտ եկան աշխարհագրական-էկոլոգիական բազմաբնույթ հիմնահարցեր, որոնք ընդգրկվեցին մի շարք գիտական ճյուղերի (ֆիզիկական աշխարհագրություն, սոցիալ-տնտեսական աշխարհագրություն, բնակչության աշխարհագրություն, ռեսուրսագիտություն, բժշկական աշխարհագրություն, երկրագրություն) հետազոտությունների ոլորտում: Ռեկրեացիոն հիմնախնդիրների միջճյուղային գիտական ուսումնասիրությունները՝ գիտական գիտելիքների ինտեգրման պայմաններում նպաստեցին աշխարհագրական նոր գիտության՝ ռեկրեացիոն աշխարհագրության ձևավորմանը:

Աշխարհագրական գիտությունների համակարգում ռեկրեացիոն աշխարհագրությունը երիտասարդ գիտություն է և, որպես գիտական ուղղություն, ձևավորվել է 20-րդ դարի 60–70-ական թթ՝ կապված գիտության մեջ <ռեկրեացիոն տարածքային համակարգեր>-ի (ՌՏՀ) մասին ուսմունքի մշակման հետ: Այդ գործում ծանրակշիռ սվանդ ունեն Վ. Ս. Պրեբրաժենսկին, Յու. Ա. Վեդենինը, Ա. Ա. Մինցը, Լ. Բ. Մուխինան, Ի. Վ. Ջորինը, Ն. Ս. Միրոնենկոն, Ի. Տ. Տվերդոխլեովը, Պ. Վ. Բոլշանիկը, Դ. Վ. Նիկոլայենկոն, Ա. Ս. Կուսկովը և ուրիշներ: Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ռեկրեացիոն աշխարհագրությունը վերածվեց ուսումնասիրության իր ուրույն օբյեկտը, առարկան և մեթոդաբանությունն ունեցել ինքնուրույն գիտության, իսկ տնտեսության սպասարկման ոլորտի այս բնագավառը դարձավ հասարակական կյանքի տարածքային կազմակերպման կարևորագույն գործոններից մեկը:

Ռեկրեացիոն աշխարհագրությունն այսօր հսկված է լուծելու արդյունավետ բնօգտագործման և բնապահպանական հնչեղության մի շարք գործնական խնդիրներ: Դրանք առնչվում են ՌՏՀ – երի կազմակերպման տեղավայրերի ճիշտ ընտրության, բնասոցիալ տնտեսական կոնկրետ պայմաններում դրանց արդյունավետ պլանավորման, բնական ռեսուրսների ռեկրեացիոն գնահատման, ռեկրեացիոն շրջանագոյացման գործոնների ուսումնասիրման, ռեկրեացիոն շրջանացման տարբեր կարգի միավորների կարգաբանության, ռեկրեացիոն շրջանացման սկզբունքների և մեթոդների մշակման, ռեկրեացիոն շրջանների և այդ նպատակով առանձնացված տարածքների անթրոպոգեն ծանրաբեռնման սահմանային մակարդակների որոշման, ինչպես նաև ռեկրեացիոն բնօգտագործման էկոլոգիապես հիմնավորված ձևերի նախագծման հետ:

Ռեկրեացիոն աշխարհագրության ուսումնասիրության օբյեկտի և առարկայի նպատակային գործառույթներն, ըստ էության, կանխորոշվում են հասարակական պատվերով և ունեն սոցիալ-տնտեսական ուղղվածություն: Ուստի ռեկրեացիոն աշխարհագրությունն իրավամբ ընդունված է դասել հասարակական աշխարհագրական գիտությունների

շարքին, որոնք ռեկրեացիան դիտում են որպես տնտեսության ճյուղ, իսկ ՌԲՏՀ-երը՝ արտադրա-տարածքային համալիրի բաղադրամաս: Հասարակական աշխարհագրական գիտություններից առանձնապես սերտ են ռեկրեացիոն աշխարհագրության կապերը սոցիալ-տնտեսական աշխարհագրության, բնակչության աշխարհագրության, ռեսուրսագիտության, բժշկական աշխարհագրության հետ: Սոցիալ-տնտեսական աշխարհագրությունն, օրինակ, ուսումնասիրում է ռեկրեացիայի ազդեցությունը երկրի կամ շրջանի տարածքային կառուցվածքի վրա, զբաղվում է ռեկրեացիոն ռեսուրսների տնտեսական գնահատման խնդիրներով, հիմնավորում դրանց տնտեսական արդյունավետությունն ու օգտագործման նպատակաուղղվածությունը, զբաղվում է ռեկրեացիոն շրջանագոյացման և շրջանացման հարցերով:

Սակայն ռեկրեացիոն գործունեության կազմակերպման և այդ նպատակով տարածքի օգտագործման հիմնախնդիրներն իրենց բնույթով ու բովանդակությամբ ուղղակիորեն առնչվում են նաև ֆիզիկաաշխարհագրական գիտությունների հետ [1]: Ֆիզիկաաշխարհագրական ուսումնասիրություններում կիրառվող համալիր (կոմպլեքսային) հետազոտության մեթոդը, հնարավոր է տալիս պարզել լանդշաֆտի բնական բաղադրիչների միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապերը և ելնելով դրանից՝ ապահովում բնատարածքի լանդշաֆտա-էկոլոգիական առարձնահատկություններին համապատասխան ռեկրեացիոն գործունեության ձևերի արդյունավետ պլանավորում, ռեկրեացիոն ռեսուրսների հաշվենկատ օգտագործում ու պահպանում: Ֆիզիկական աշխարհագրությունը որոշում է բնատարածքային համալիրների (լանդշաֆտների) կայունության աստիճանն ու ռեկրեացիոն ծանրաբեռնման սահմանային մակարդակը, ուսումնասիրում է ԲՏՀ-ների ռեկրեացիոն հարմարավետությունն ու տարողությունը: Բացի այդ, ելնելով արդյունավետ բնօգտագործման կազմակերպման լանդշաֆտա-էկոլոգիական ասպեկտներից, ֆիզիկական աշխարհագրությունը մշակում է գիտականորեն հիմնավորված միջոցառումներ՝ ուղղված ռեկրեացիոն արդյունավետ բնօգտագործման, բնական լանդշաֆտների բարելավման ու պահպանման խնդիրների լուծմանը: Ֆիզիկական աշխարհագրության կառուցողական նոր ուղղությունները՝ կիրառական լանդշաֆտագիտությունը, անթրոպոգեն լանդշաֆտագիտությունը, լանդշաֆտային էկոլոգիան, լանդշաֆտային պլանավորումը զբաղվում են բնասնթրույթ են տարածքային համալիրների, այդ թվում և ռեկրեացիոն լանդշաֆտների ձևավորման տարածական օրինաչափությունների բացահայտման, անթրոպոգեն ներգործության նկատմամբ դրանց էկոլոգիական կայունության աստիճանի գնահատման, ինչպես նաև բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռության պահպանման խնդիրներով [2]:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի <Աշխարհագրություն> մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման երկրորդ կուրսի ուսումնական առարկաների ծրագրում <Ռեկրեացիոն աշխարհագրություն> ընտրովի դասընթացի ընդգրկումն ու ուսուցման անհրաժեշտությունը հիմնավորվում է, մի կողմից նրանով, որ ռեկրեացիան և բնակչությանը տրամադրվող ռեկրեացիոն ծառայությունները գտնվում են արդի ինդուստրիալ հասարակության առաջնահերթ պահանջումների շրջանակներում, իսկ սնտեսության սպասարկման ոլորտի այս բնագավառը՝ հանգստի և զբոսաշրջության ինդուստրիան՝ դարձել է հասարակական կյանքի տարածքային կազմակերպման կարևորագույն գործոններից մեկը, մյուս կողմից՝ դասընթացի գիտակրթական նշանակությամբ:

Ռեկրեացիոն գործունեության տարբեր կողմերի ուսումնասիրությամբ զբաղվում են նաև ոչ աշխարհագրական շատ գիտություններ: Մասնավորապես, ռեկրեացիոն աշխարհագրությունն իր ուսումնասիրություններում օգտագործում է սոցիոլոգիայի, սոցիալական հոգեբանության, ընդհանուր հոգեբանության, մարդու ֆիզիոլոգիայի, տնտեսագիտության և այլն, հետազոտությունների արդյունքները: Հետևաբար, դասընթացի արդյունավետ յուրացումը ուսանողներից պահանջում է հիմնարար գիտելիքներ, ինչպես սոցիալ-տնտեսաաշխարհագրական և բնասաաշխարհագրական, այնպես էլ բուհում դասավանդվող մանկավարժա-հոգեբանական գիտություններից: Ռեկրեացիոն աշխարհագրության գիտական ուսումնասիրությունների մեթոդաբանական հիմքում ընկած է համակարգային մոտեցման սկզբունքը, որը միավորում է թե աշխարհագրական գիտություններում, և թե բնահասարակական այլ գիտությունների հետազոտություններում օգտագործվող գիտական տեղեկությունների ու փաստերի ստացման բազմազան մեթոդներ ու եղանակներ:

<Ռեկրեացիոն աշխարհագրություն> բուհական դասընթացի նպատակն է ընդլայնել ուսանողների՝ սպազա ուսուցիչների աշխարհայացքը՝ հասարակական գործունեության սպասարկման ոլորտում ընթացող արդի զարգացումները, աշխարհագրական թաղանթի տարբեր տեղամասերի ռեկրեացիոն հարմարավետությունը, դրանց ռեկրեացիոն ներուժը ճիշտ գնահատելու և անհրաժեշտ ուղղությամբ օգտագործելու հարցերում, ինչպես նաև գիտա-ալրակտիկ վերլուծություններ, համեմատություններ, համադրումներ և գիտական ընդհանրացումներ կատարելու հմտությունների ու կարողությունների ձևավորումը:

Դրված նպատակը առաջադրում է դասավանդվող առարկայի հետևյալ խնդիրները.

1. ուսանողների մոտ ձևավորել պատկերացումներ արդի հասարակության կյանքում ռեկրեացիայի դերի ու նշանակության, ռեկրեացիոն ռեսուրսների տեսակների և դրանց նպատակային օգտագործման, ռեկրեացիոն-տարածքային համակարգերի ձևավորման ու զարգացման օրինաչափությունների, բնասոցիալ տնտեսական կոնկրետ պայմաններում դրանց արդյունավետ գործունեության մեխանիզմների մասին:
2. ուսանողներին ծանոթացնել բնական օբյեկտների և պատմամշակութային արժեքների ռեկրեացիոն գնահատման չափորոշիչներին, ռեկրեացիոն ռեսուրսների տարածական առանձնահատկությունների և ժամանակային փոփոխությունների բացահայտման մեթոդաբանությանը:
3. ուսանողությանը իրազեկել ռեկրեացիոն շրջանագոյացման և ռեկրեացիոն շրջանացման բնատնտեսական գործոններին, սկզբունքներին և մեթոդներին, միջազգային զբոսաշրջության զարգացման տարածական առանձնահատկություններին և աշխարհագրությանը:
4. ձևավորել ռեկրեացիոն բովանդակության քարտեզներ կարդալու, վերլուծելու և ռեկրեացիոն նպատակներին ծառայող քարտեզներ կազմելու կարողություններ:
5. ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ռեկրեացիոն տնտեսության արդի վիճակին, զարգացման բնասոցիալ տնտեսական գործոններին, արդի շուկայական տնտեսության պայմաններում ռեկրեացիոն բնօգտագործման կազմակերպման աշխարհագրական, էկոլոգիական և բնապահպանական հիմնախնդիրներին, ՀՀ ռեկրեացիոն ռեսուրսների օգտագործման հնարավորություններին ու հեռանկարներին:
6. նպաստել ուսանողների հայրենագիտական, գեղագիտական և էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանը, հայրենի բնության հանդեպ սեր և հոգատար վերաբերմունք տածելու բարոյական որակների, արդյունավետ բնօգտագործման և բնապահպանության վերաբերյալ գիտակցական պատկերացումների ձևավորմանը:

Առարկայի դասավանդման ծրագիրն ու ուսուցման մեթոդիկան մշակելիս հիմք ենք ընդունել ՌԴ մանկավարժական բուհերի և Մ. Վ. Լոմոնոսովի անվան ՄՊՀ-ի աշխարհագրության ֆակուլտետներում ներկայումս գործող Պ.Վ. Բոլշանիկի [3], Ա.Ս. Կուսկովի, Վ.Լ. Գոլուբնայի, Տ.Ն. Օդինցովայի [4], Դ.Վ. Նիկոլայենկոյի [5], Զ.Վ. Լիսենկովայի [6] դասագրքերն ու ուսումնամեթոդական ձեռնարկները: Անշուշտ, ուսումնական ծրագրում առանձնահատուկ տեղ է հատկացվել Հայաստանի Հանրապետության բնական շահության միջավայրի ռեկրեացիոն ներուժի գնահատման, ռեկրեացիոն տնտեսության տարածքային պլանավորման

և մեր երկրում ներքին ու միջազգային զբոսաշրջության զարգացման հեռանկարային խնդիրներին:

<Ռեկրեացիոն աշխարհագրություն> բուհական դասընթացի արդյունավետ կազմակերպման և վերոհիշյալ խնդիրները հաջողությամբ լուծելու գրավականը ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությունն է: ՀՊՄՀ-ի աշխարհագրության բաժնում առարկայի դասավանդման եռամյա փորձը ցույց է տալիս, որ ուսումնական գործընթացում ցանկալի արդյունք է սպասելու խոսքային, դիտազննական, ինքնուրույն և գործնական աշխատանքների մեթոդների համատեղ կիրառումը: Իհարկե, կարևոր են նաև ուսանողների անհատական ընդունակությունները, հետաքրքրությունների շրջանակներն ու ուսման նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքը:

Ռեկրեացիոն աշխարհագրությունը, որպես ժամանակակից աշխարհագրական գիտության արագ զարգացող տեսա-կիրառական ուղղություն, ունի գիտակառուցողական մեծ ներուժ և կատարում է գիտական և կրթա-դաստիարակչական մի շարք կարևոր գործառույթներ՝ ուղղված ուսանողների տարածական մտածողության, բնաճանաչողական կարողությունների, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ունակությունների զարգացմանը, և վերջապես՝ նրանց գեղագիտական, հայրենագիտական, բնապահպանական ու էկոլոգիական դաստիարակությանը:

Այսպես, դասընթացի արդյունավետ կազմակերպման արդյունքում ուսանողները ստանում են հիմնարար գիտելիքներ ռեկրեացիոն աշխարհագրության հիմնական հասկացությունների, աշխարհագրական գիտությունների համակարգում դրա տեղի ու դերի, ռեկրեացիոն նպատակներով տարածքի օգտագործման և ռեկրեացիոն տնտեսության կազմակերպման սկզբունքների, ռեկրեացիոն տարածքային համակարգերի և դրանց կազմակերպման աշխարհագրական օրինաչափությունների, ռեկրեացիոն շրջանագոյացման և շրջանացման մեթոդների, միջազգային զբոսաշրջության զարգացման աշխարհագրական գործոնների ու պայմանների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ռեկրեացիոն տնտեսության, այն միջազգային զբոսաշրջության ոլորտը ներգրավելու հեռանկարային խնդիրների վերաբերյալ:

Ինչպես նշվեց, <Ռեկրեացիոն աշխարհագրություն> բուհական դասընթացի կրթա-դաստիարակչական կարևորագույն գործառույթներից մեկն էլ ուսանողների էկոլոգիական աշխարհայացքն ընդլայնելու, էկոլոգիական գիտակցությունն ու բնապահպանական գրագիտությունը զարգացնելու նպատակային ուղղվածությունն է, ինչը էկոլոգիական (բնապահպանական) կրթության և դաստիարակության պետական ռազմավարական ծրագրի առաջնային խնդիրներից է: Հայտնի է, որ

ռեկրեացիոն բնօգտագործումը տնտեսական գործունեության այն առանձնահատուկ բնագավառներից է, որի կազմակերպման ու զարգացման հնարավորությունները մեծապես կանխորոշվում են բնական միջավայրի բնառեսուրսային պայմանների համալիրով, դրանց ճիշտ ու նպատակային օգտագործման անհրաժեշտությամբ: Չանգվածային, հաճախ շուքջամյա ռեկրեացիոն գործունեությունը հսկայական ծանրաբեռնվածություն է ստեղծում բնական լանդշաֆտների վրա՝ հանգեցնելով էկոլոգիական և բնապահպանական մի շարք հիմնախնդիրների առաջացմանը: Ռեկրեացիոն ռեսուրսների սպառման հնարավորությունը տեսականորեն որոշվում է օգտագործման ընթացքում դրանց սահմանային ծանրաբեռնման աստիճանով, որի չարաշահման դեպքում ռեսուրսները կամ կորցնում են իրենց ռեկրեացիոն արժեքն ու նշանակությունը, կամ ենթարկվում են դեգրադացիայի:

<Ռեկրեացիոն աշխարհագրություն> դասընթացի հիմնադրույթների յուրացումը ուսանողների մոտ ձևավորում է առանձին տարածաշրջանների բնական ռեսուրսների ռեկրեացիոն արժեքն ու ներուժը, էկոլոգիական վիճակը գնահատելու, ռեկրեացիոն ռեսուրսների տարածական առանձնահատկությունները և հանգստի նպատակով դրանք օգտագործելու բնահասարակական պայմաններն ու հնարավորությունները համեմատելու, բնատարածքային համալիրների վրա ռեկրեացիոն ծանրաբեռնվածությունը գնահատելու և ռեկրեացիոն ռեսուրսների պահպանման և դրանց օգտագործման էկոլոգիապես հիմնավորված ուղիներ մշակելու կարողություններ:

Դասընթացն առանձնահատուկ նշանակություն ունի սպազաուսուցիչների պրակտիկ աշխատանքում՝ դպրոցում բնապահպանական-էկոլոգիական բնույթի միջոցառումների, կրթադաստիարակչական էքսկուրսիաների, հայրենագիտական, ճանաչողական և էկոլոգիական արշավների կազմակերպման, դրանց երթուղիների մշակման, անցկացման տեղավայրերի ընտրության հարցերում ճիշտ կողմնորոշվելու կանոններին և մեթոդներին տիրապետելու առումով: Այս իմաստով, խիստ կարևորում ենք ուսանողների ուսումնական դաշտային համալիր պրակտիկաների դերը [7]: Պրակտիկայի ընթացքում առանձնահատուկ նշանակություն է տրվում բնական միջավայրի պայմանների և մարդու տնտեսական գործունեության միջև կապերի, տնտեսության տարածքային կազմակերպման բնահասարակական գործոնների և անթրոպոգեն լանդշաֆտների, այդ թվում նաև ռեկրեացիոն բնօգտագործման ձևերի ուսումնասիրությանը: Ուսանողները ֆիզիկասաշխարհագրական և սոցիալ-տնտեսասաշխարհագրական բնույթի դիտարկումներին զուգահեռ ծանոթանում են նաև ռեկրեացիոն բնօգտագործման էկոլոգիական ու բնապահպանական հիմնախնդիրներին: Ի դեպ, հավելենք, որ դաշտային

ուսումնական պրակտիկայի կազմակերպման և անցկացման տեղավայրերը բնականոշաֆտային բարդ հորինվածք և սոցիալ-տնտեսական յուրօրինակ դիմագիծ ունեցող Ծաղկունյաց, Լոռի-Փամբակի, Աղստև-Տավուշի, Զանգեզուրի ֆիզիկաաշխարհագրական շրջաններն են, որոնք միաժամանակ հանդիսանում են հանգստի և զբոսաշրջության կազմակերպման առավել հայտնի ռեկրեացիոն գոտիները ՀՀ -ում [8]:

Կարծում ենք, որ ռեկրեացիոն աշխարհագրության ուսուցումը ՀՊՄՀ աշխարհագրության բաժնում ժամանակի հրամայականն է, որը լրացնում և ամբողջացնում է աշխարհագրական մասնագիտացման համակարգված կրթությունն ապահովող առարկայական ցանկը, իսկ դասընթացի գիտակրթական և ուսումնադաստիարակչական գործառույթները հիմնավորում են վերջինիս կարևորությունն ու բարձրագույն դպրոցի <Աշխարհագրություն> առարկայական ծրագրում այն՝ որպես պարտադիր առարկա ներառելու անհրաժեշտությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Багрова Л. А. Подгородецкий П.Д. Физико-географические основы рекреационной географии, Изд-во Симферопольского ун-та, 1982. 258 с.
2. Սամվելյան Ն.Ի. Լանդշաֆտային պլանավորումը որպես արդյունավետ բնօգտագործման միջոց, Աշխարհագրության գիտակառուցողական ներուժը և գործնական կիրառումը, ԵՊՀ գիտաժողովի նյութեր, ԵՊՀ հրատ, Երևան, 2011, էջ 339-346.
3. Большаник П. В. Рекреационная география. Учебное пособие. Омск, 2003. 304 с.
4. Кусков А. С. Голубева В. Л. Одинцова Т.Н. Рекреационная география, Изд-во Академия, Москва, 2005. 504 с.
5. Николаенко Д. В. Рекреационная география, Изд-во Владос, Москва, 2003. 288 с.
6. Лысенкова З. В. Рекреационное природопользование: От теории к практике, Вестник ТГПУ, вып. 6 (69), Томск, 2007, стр. 54-57.
7. Սամվելյան Ն.Ի. Ուսումնական բնագիտական դաշտային պրակտիկաները որպես բուհական աշխարհագրական կրթության բաղադրամաս, □Բնագետ□ հասուկ թողարկում, □Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ□, Համահայկական կրթական III գիտաժողովի նյութեր, ԵՊՀ հրատ, Երևան, 2012, էջ 221-222.
8. Самвелян Н. И. К вопросу оценки природных комплексов горных территорий при ландшафтном планировании рекреационного природопользования, Вестник МАНЭБ, том 17, No 4, вып. 3, Санкт-Петербург, 2011, стр. 15-18

РЕЗЮМЕ
ЗАДАЧИ И НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫЕ ФУНКЦИИ
ВУЗОВСКОГО КУРСА „РЕКРЕАЦИОННАЯ ГЕОГРАФИЯ „
Н. И. САМВЕЛЯН

Междисциплинарные исследования рекреационных проблем в современных условиях интеграции научных знаний ускорили процесс выявления специфического объекта научного познания и формирования на его основе предметной сущности новой географической науки – рекреационной географии. Рекреационная география одна из важнейших дисциплин природно-общественной подсистемы географических наук, изучающих естественно-общественные закономерности территориальной организации хозяйственной деятельности. В последние десятилетия рекреационная география занимает все большее место в исследованиях проблем взаимодействия природы и общества.

Вузовский курс "Рекреационная география" предназначен для студентов 2 курса факультета биологии, химии и географии, обучающихся по специальности „География„ АГПУ им. Х. Абовяна. В статье обосновывается важность вузовского курса „ Рекреационная география „ в подготовке педагогов-географов в контексте их эстетического, экологического и природоохранного образования. Представлены содержание, задачи и научно-образовательные функции данной дисциплины.

SUMMARY
THE CONTENT AND TEACHING-EDUCATIONAL FUNCTIONS
OF UNIVERSITY COURSE “RECREATIONAL GEOGRAPHY”
N. I. SAMVELYAN

Interdisciplinary studies of recreational issues in contemporary conditions of scientific knowledge integration quicken the detection process of the specific object of scientific cognition and formulation of substantive nature of new geographical science – Recreational Geography. “Recreational geography” is one of the most important disciplines of natural and social subsystem of geographical sciences, which study natural social patterns of agricultural activity and its’ territorial arrangement. During last few decades, recreational geography occupies an increasingly important place in the study of nature-society interaction problems.

The University course of “Recreational Geography” is targeted at the second year students of the faculties of biology, chemistry, geography, students majoring geography in SPU after Kh. Abovyan. In the article is reasoned the importance of the course of “Recreational Geography” in the process of geography teachers’ preparation. There are also represented the content, the target, the tasks and educational functions of the given discipline.

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ № 1(18) 2013 Гуманитарные науки

ՀՏԴ 911:371:502

**ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ <ԱՇԽԱՀՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ> ԱՌԱՐԿԱՅԻ ԴԵՐԸ
ԱՇՄԱԿԵՐՏՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Դ. Լ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

***Խ. Արույանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան***

Հանրակրթության ոլորտում ուսուցման արդյունավետության բարձրացման պետական ծրագրի շրջանակներում վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում իրականացվեցին ավագ դպրոցի առարկայական ծրագրերի վերանայման և դրանց թեմատիկ բովանդակության բարեփոխման շարունակական աշխատանքներ: Բացի այն, որ մեր պետությունը խնդիր է դրել համեմատաբար կարճ ժամանակամիջոցում իրագործել կրթական համակարգի արմատական բարեփոխումներ, առանձնահատուկ դեր է վերապահվում նաև դաստիարակության կառավարման արդյունավետ միջոցների և մեթոդների մշակմանն ու իրականացմանը:

Հասարակության զարգացման արդի փուլը, իրոք, պահանջում է կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետ կառավարումն սպասելի էլու մեթոդաբանական նոր մոտեցումներ, դաստիարակության հայեցակարգի նոր մոդելներ, որոնք աստիճանաբար իրենց արտացոլումն են գտնում ավագ դպրոցի առարկայական և թեմատիկ ծրագրերում: Այս առումով, կարծում ենք, որ առանձնակի մոտեցում է պահանջվում աշակերտների բնասպասիական դաստիարակությանն ու էկոլոգիական կրթությանը: Ավագ դպրոցում էկոլոգիական կրթության նպատակն, ըստ Ի.Դ. Ջվերևի <... գիտական համակարգված գիտելիքների, հայացքների և համոզմունքների ձևավորումն է, ինչը կապահովի աշակերտների մոտ պատասխանատվություն և հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ> [1]: Դպրոցական կրթության ու դաստիարակության գործընթացը ուղղորդված է սովորողների անձնային որակների զարգացմանը, նրանց վարքագծի էկոլոգիապես հիմնավորված ձևերի մշակմանն

ու շրջակա միջավայրի վրա մարդու ներգործության հետևանքները գնահատելու կարողությունների ձևավորմանը:

Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը ժամանակի հրամայականն է: Թերևս, այդ է վկայում սվագ դպրոցում ուսուցանվող առարկաների բովանդակության էկոլոգացման գործընթացն ու <բնապահպանական ուղղվածության բազմաառարկայական մոդելի ներդրման> միտումը, որը ներդրվում է Ռուսաստանի Դաշնությունում [2]:

Հայտնի է, որ էկոլոգիական հիմնախնդիրների և բնության պահպանության հիմնահարցերի տիրույթը բավականին լայն ու բազմազան է, և ներառում է սվագ դպրոցում դասավանդվող ինչպես բնագիտական, այնպես էլ հասարակագիտական առարկաների համակարգը: Հետևաբար, սվագ դպրոցում բնապահպանական և էկոլոգիական դաստիարակության ու կրթության արդյունավետ կազմակերպման երաշխիքը, մեր կարծիքով, ուսուցման գործընթացում համակարգային մոտեցման սկզբունքների կիրառումն է՝ բոլոր առարկաների մասնագետ-ուսուցիչների ուսումնա-դաստիարակչական աշխատանքի նպատակային ներդաշնակման ու համատեղման միջոցով:

Հավասարապես արժեվորելով սվագ դպրոցում ուսուցանվող բոլոր առարկաների նշանակությունը, այնուամենայնիվ, գտնում ենք, որ աշակերտների բնապահպանական-էկոլոգիական դաստիարակության գործում <...առանձնակի կարևորությունն պետք է տալ <աշխարհագրություն> առարկային և այն դասավանդող ուսուցչի աշխատանքին> [3]: Եվ իրոք, երիտասարդ սերնդի բնապահպանական և էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման գործում աշխարհագրական համալիր մտածողությանը բացառիկ դեր է հատկացվում: Ժամանակակից աշխարհագրությունը բնահասարակական գիտությունների համակարգ է, որը ելնելով <բնություն-հասարակություն-տնտեսություն> համակարգում գործող համընդհանուր կապերից, բնության և մարդկային հասարակության փոխհարաբերության տարածական հիմնախնդիրների գնահատմանը ցուցաբերում է համակարգային և կառուցողական մոտեցում:

Ֆիզիկական և տնտեսական աշխարհագրության դասընթացների ուսուցման ընթացքում գիտական տեղեկություններ են հաղորդվում հասարակության և բնության փոխազդեցության, դրանց տարածական կազմակերպման առանձնահատկությունների աշխարհագրական, բնագիտական և տնտեսական ասպեկտների վերաբերյալ: Ջրովորտի, մթնոլորտի, քարովորտի և կենսոլորտի բնական ռեսուրսների պահպանման հիմունքներին ծանոթանալու հետ մեկտեղ՝ աշխարհագրության դասաժամերին խորացվում են աշակերտների գիտելիքները բնատարածքային համալիրների ներվանդաֆտային և միջլանդաֆտային փոխադարձ կապերի ու զարգացման օրինաչափությունների մասին,

որոնց իմացությունը էկոլոգիապես գրագետ սերունդ դաստիարակելու գրավականն է: Աշխարհագրական գիտության հիմունքները բովանդակող դպրոցական աշխարհագրությունը բնության և հասարակության փոխհարաբերությունների ուսումնասիրմանը դրսևորում է համալիր մոտեցում, ինչը վկայում է այս առարկայի բնապահպանական դաստիարակությանը նպաստելու ներուժի և աշակերտների էկոլոգիական մտածողության զարգացումը խթանելու հնարավորությունների մասին:

Քննարկելով բնապահպանական դաստիարակության ու էկոլոգիական կրթության նպատակային խնդիրները, Ի.Ս. Մատրոսովը առաջնային տեղ է տալիս <...սովորողների կողմից բնության հարստությունների արդյունավետ օգտագործման և պահպանման կանոնների յուրացմանը>՝ առանցքում տեսնելով աշխարհագրության կապը մյուս առարկաների հետ [4]: Աշխարհագրության դասընթացում քննարկվում են բնության և հասարակության փոխազդեցության ֆիզիկաաշխարհագրական և սոցիալտնտեսաաշխարհագրական առանձնահատկությունները, աշակերտները ծանոթանում են բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և պահպանման միջոցառումներին, ձեռք են բերում հիմնարար գիտելիքներ բնատարածքային համալիրների կառուցվածքի և զարգացման օրինաչափությունների վերաբերյալ: Աշխարհագրությունը պատկերացում է տալիս շրջակա միջավայրի վրա մարդու տնտեսական գործունեության ազդեցությամբ բնական լանդշաֆտների փոփոխության հետևանքների և դրանց կանխարգելման ուղիների ու միջոցառումների մասին, բացահայտում է համամոլորակային էկոլոգիական հիմնախնդիրների պատճառահետևանքային կապերն ու տարածական առանձնահատկությունները: Այս առումով, ավագ դպրոցում աշխարհագրության դասընթացի թեմատիկ բովանդակության յուրացումն ու ձեռք բերված աշխարհագրական գիտելիքները էական նշանակություն կունենան բնության բաղադրիչների զարգացման տարածական օրինաչափությունները ճանաչելու, դրանց նկատմամբ հոգատար վերաբերմունք ձևավորելու, բնական հարստությունների նպատակային օգտագործման, վերարտադրման և պահպանման գիտականորեն հիմնավորված ձևերին ու միջոցներին տիրապետելու, հետևապես, նաև՝ աշակերտների բնապահպանական-էկոլոգիական գրագիտությունը բարձրացնելու աշխատանքներում:

Աշակերտների էկոլոգիական կրթության ու դաստիարակության գաղափարն ավագ դպրոցում կարելի է իրագործել դասի կազմակերպման տարբեր տիպերի և աշխարհագրական տարբեր թեմաների ուսուցման ընթացքում: Մանկավարժական աշխատանքի փորձը ցույց է տալիս, որ ավագ դպրոցականները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում, օրինակ, բնական և բնա-մարդածին տարերային երևույթներին, դրանց պատ-

ճառներին, Էկոլոգիական հետևանքներին, ինչպես նաև դրանց կանխարգելման ուղիներին ու միջոցներին վերաբերող թեմաների ուսուցման ժամանակ: Մասնավորապես, աշակերտները զգալի ակտիվություն են ցուցաբերում ջրաօդերևութաբանական և ջրալիթոդինամիկ երևույթների ուսումնասիրման ընթացքում, որոնք, ի դեպ, դիտվում են նաև մեր հանրապետությունում: Դրանք բնասանթրոպոգեն գործոնների ազդեցությամբ առաջացող հեղեղումներն են, ջրային և խոիզացիոն էրոզիան, սելավաբեր հոսքերը, սողանքները, կարկտահարությունը, երաշտը, ցրտահարությունները և այլն, որոնց հետևանքները կարող են առաջ բերել Էկոլոգիական լարվածության տարաբնույթ դրսևորումներ և սպառնալ աշխարհագրական միջավայրի Էկոլոգիական հավասարակշռության խախտմանը: Հմուտ մանկավարժը հիշյալ երևույթներն ուսուցանելիս դասարանում ստեղծում է պրոբլեմային իրավիճակ, առաջարկում աշակերտներին վերլուծել դրանց պատճառա-հետևանքային կապերը, գնահատել ազդեցությունը տնտեսության և մարդկային հասարակության տնտեսական գործունեության վրա: Ուսուչիցը, ելնելով „բնություն-հասարակություն-տնտեսություն,, համակարգում գոյություն ունեցող համընդհանուր կապերից, առանձնահատուկ նշանակություն է տալիս մարդուն շրջապատող միջավայրն արդյունավետ օգտագործելու, վերականգնելու և պահպանելու անհրաժեշտությանը:

Անդրադառնալով բնագիտական առարկաների ներուժը աշակերտների բնապահպանական - Էկոլոգիական դաստիարակության գործում կիրառելու ուսուցչի կարողության չափորոշիչներին՝ պրոֆ. Լ.Ասատրյանը որպես այդպիսին առանձնացնում է նաև „ուսումնադաստիարակչական գործընթացում միջառարկայական կապերի կարևորությունը,, [5]: Իրավմամբ, ժամանակակից Էկոլոգիան դիտարկվում է որպես միջառարկայական համալիր գիտական բնագավառ կենդանի և անկենդան բնության տարրերի փոխհարաբերությունների մասին, հետևաբար Էկոլոգիական կրթության նպատակային իրականացումը չպետք է սահմանափակվի մեկ առարկայի հնարավորություններով: Խնդիրը պահանջում է միջառարկայական կապերի ստեղծում, որի դեպքում „համագործակցության արհրաժեշտություն է առաջանում նաև տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչների միջև՝ ինչը իր հերթին հետադարձ կապով նպաստում է նաև նրանց գիտելիքների խորացմանը և մանկավարժական վարպետության բարձրացմանը,, [6]:

Այս հարցում, ևս, առանձնահատուկ է աշխարհագրության նշանակությունը, որը միջառարկայական կապերի ստեղծման գործում յուրօրինակ, մի քանի ուսումնական առարկա կապող օղակի դեր կարող է ստանձնել: Իհարկե, նման ձևով ուսուցման գործընթացի կազմակերպումը աշակերտներից պահանջում է բնության բաղադրիչների միջև կապերի,

զարգացման օրենքների և օրինաչափությունների խոր իմացություն, բնության վրա մարդու ներգործության հետևանքները գնահատելու կարողություն, վերլուծական տրամաբանություն և մտածողություն, ինչը հուսալի երաշխիք է աշակերտների էկոլոգիական աշխարհայացքը ձևավորելու և բնապահպանական դաստիարակությունն իրականացնելու աշխատանքներում:

Ավագ դպրոցականների էկոլոգիական դաստիարակության արդյունավետ իրականացումը մեծապես պայմանավորված է նաև ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեսական գիտելիքներն ու կարողությունները առօրյա կյանքում կիրառելու և, անմիջականորեն, բնության գրկում ինքնուրույն դիտարկումներ կատարելու աշակերտների ունակությամբ: Այդ առումով, կարծում ենք, որ դաս-էքսկուրսիաների, դաշտային պրակտիկ աշխատանքների կազմակերպումը, բնապահպանական տարաբնույթ միջոցառումներին աշակերտների մասնակցությունը պարտադիր պայման է, առանց որի չի կարող լիարժեք լուծում ստանալ էկոլոգիական կրթության հիմնական խնդիրն ավագ դպրոցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Зверев И. Д. Экологическое образование и воспитание как новая область педагогической теории и школьной практики, Таллин, 1980, стр. 23.
2. Константинов В. М. Охрана природы, Изд-во Академия, Москва, 2000, с 210.
3. Пономарева И. Н. Основные направления экологического образования в школах России, СПб, 1997. с.172
4. Матрусов И. С. Экологическое образование в школе, Москва, 1976. 312 с.
5. Ասատրյան Լ.Թ. Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները, Արտագերս հրատ, Երևան, 2009, էջ 278
6. Աջամոլյան Ա. Պետրոսյան Ջ. Աշխարհագրության և ֆիզիկայի միջև միջառարկայական կապերի ամրապնդումը արտադասարանական խմբակների միջոցով, Աշխարհագրական գիտությունը Հայաստանում, Ներկան և սպազան, Գիտաժ. նյութեր, ԵՊՀ հրատ, Երևան, 2006, էջ 505

РЕЗЮМЕ
ЗНАЧЕНИЕ ПРЕДМЕТА „ ГЕОГРАФИЯ „ В
ЭКОЛОГИЧЕСКОМ ВОСПИТАНИИ И ОБРАЗОВАНИИ
ШКОЛЬНИКОВ В ВЫСШЕЙ ШКОЛЕ
Д. Л. ГЕВОРГЯН

Ответственность за полноценное экологическое образование и природоохранное воспитание принадлежит общеобразовательной школе. Содержание эколого-природоохранного образования в школе должно быть строго научным и подчинено единому принципу. Оно представляет собой единую систему знаний, позволяющих учащимся познакомиться с современными экологическими проблемами, путями и способами охраны природы.

Для многопредметной модели экологического образования характерно включение экологических вопросов в содержание всех учебных предметов. Географии принадлежит особое место в экологическом образовании и формировании природоохранного мировоззрения учащихся. Помимо знакомства с охраной природных ресурсов гидросферы, литосферы, атмосферы и биосферы, на уроках географии углубляются понятия о развитии и взаимосвязях природно-территориальных комплексов, о воздействии хозяйственной деятельности человека на окружающую среду. География дает возможность понять естественные геоэкологические процессы, глобальные экологические проблемы, возникающие в связи с усилением антропогенного воздействия на природные комплексы.

В статье обоснована важность школьного курса географии в природоохранно-экологическом воспитании школьников.

SUMMARY
THE SIGNIFICANCE OF GEOGRAPHY IN ENVIRONMENTAL
EDUCATION OF PUPILS IN HIGH SCHOOL
D. L. GEVORGYAN

The responsibility for full environmental education is one of secondary school. The content of environmental education in schools should be strictly scientific and subordinated to a single concept. It represents a unique system of knowledge that allows pupils to get acquainted to contemporary environmental problems and methods of nature protection. This multidisciplinary model of environmental education is characterized by the inclusion of environmental issues in the content of educational material. A special role is given to geography in the sphere of creating ecological worldview of the pupils. Besides nature protection of hydrosphere, lithosphere, atmosphere and biosphere during the classes of geography pupils get more deep apprehension about the evaluation and interconnection of natural territorial complexes (NTCs), about the influence of people's agricultural activity on the environment. Geography gives an opportunity to understand natural geo-ecological processes, global environmental problems, which are connected with the strengthening of anthropogenic influence on natural complexes. The importance of such education is reasoned in the article.

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ № 1(18) 2013 Гуманитарные науки

ՀՏԴ 378 : 004

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈ-
ԳԻԱՆՆԵՐԻ ԱՐԺԵԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԻՐԱՌՈՒՄԸ ԲՈՒՀԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Ա. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

***Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան***

Ներկայումս բարձրագույն կրթությունն իրականանում է արմատական փոփոխությունների ազդեցությամբ՝ կապված քաղաքացիական հասարակության ձևավորման, շուկայական տնտեսությանն անցման, զբաղվածության ոլորտում իրականացող տեղաշարժերի հետ: Աշխարհաքաղաքական արդի զարգացումները թելադրում են համաշխարհային տարածքում մարդկանց գոյության և համագոյակցության նոր պայմաններ. կրթության բնագավառի հիմնախնդիր է դառնում անձի ձևավորումը՝ ունակ համարժեք գործելու բազմամշակութային միջավայրում: Հասարակության սոցիալական արժեքների և բարոյական կողմնորոշիչների փոփոխություններն ուղեկցվում են երիտասարդության արժեհամակարգում ընթացող էական տեղաշարժերով: Արժեքային գերակայությունների հարափոփոխ զարգացման պայմաններում արդիական է բուհի ուսանողների՝ սպազա մասնագետների արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդիրը: Արժեքային նոր հարացույցի ձևավորումը կրթական հաստատությունների գերակա ուղղություն է դառնում՝ կապված եվրոպական բարձրագույն կրթական տարածք ինտեգրման, միջբուհական կրթական փոխանակման ծրագրերի իրագործման և ուսանողների ակադեմիական շարժունության հետ: Երիտասարդ սերնդի արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդիրը դառնում է բարձրագույն կրթության կարևոր բաղադրիչը:

<Արժեքը փիլիսոփայության և հասարակագիտության հասկացություն է, որով բնութագրվում է իրականության առարկաների և երևույթների հասարակական-մշակութային նշանակությունը> [1]: Արժեքներում խտացած է մարդու՝ իր և շրջակա աշխարհի նկատմամբ վերաբերմունքը,

արժեքային տեսանկյունից է գնահատվում համամարդկային փորձը՝ արտացոլված տնտեսական, քաղաքական, գեղագիտական, բարոյական, էկոլոգիական, կրոնական պատկերացումներում:

Աշխարհի հետ մարդու փոխազդեցության ցանկացած ոլորտ այս կամ այն կերպ ենթակա է արժեքային գնահատման և իմաստավորման: Մարդու՝ իր և աշխարհի նկատմամբ հարաբերությունների ամբողջությունը, որը կենսական պահանջումների արդյունք է, ձևավորում է համակարգված հոգեկան կառույց՝ մարդու արժեքների համակարգը կամ արժեքանական ոլորտը:

Արժեքների մասին ուսմունքը՝ արժեքանությունը, ձևավորվել է համամարդկային որոնումների և փիլիսոփայական հարցադրումների արդյունքում: Արժեքների փիլիսոփայության հիմնահարցը, արտացոլված լինելով հանդերձ տարբեր տեսություններում, հայեցակարգերում, այնուհանդերձ չի ստացել սպառիչ պատասխան, քանի որ պատմամշակութային յուրաքանչյուր ժամանակաշրջան առաջադրում է արժեքային իր ըմբռնումները՝ որպես բարձրագույն սկզբունքներ: Աշխարհի արժեքային ճանաչողությունը, կյանքի իմաստի հավերժականության որոնումները, աշխարհի, մարդու և հասարակության փոխհարաբերությունների իմաստավորումն ու արժևորումը միշտ արդիական են և նորովի են մեկնաբանվում բոլոր ժամանակներում:

Անտիկ դարաշրջանում որպես բարձրագույն արժեք էր ընկալվում համակողմանի, բոլոր առումներով կատարյալ մարդը. գեղեցիկի, ներդաշնակի, կատարյալի արժեքն արտացոլում էր մարդու հոգևոր և ֆիզիկական վիճակի գնահատումը [2]: Միջնադարյան մտածողները բարձրագույն արժեքները բխեցնում էին աստվածային էությունից. Աստված բացարձակ արժեք է, աստվածային կատարելությունը՝ արժեքի հիմնական չափանիշը և ըմբռնումը: Վերածննդի դարաշրջանում բարձրագույն արժեք հռչակվեց հումանիզմը. ակտիվ և ստեղծագործ իդեալական մարդու չափանիշը ընդգծված բարոյական բովանդակությունն էր: Ներկայումս հասարակության արժեհամակարգի և հոգևոր մշակույթի ձևավորման գործոններ են գիտատեխնիկական արդի նվաճումները, տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների հարաճուն զարգացումները, սոցիալ-տնտեսական և էկոլոգիական տեղաշարժերը, ժողովրդավարական հասարակության արժեքային գերակայությունները, աշխարհաքաղաքական զարգացումներում ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը, գլոբալացման և միջմշակութային հաղորդակցման գործընթացները, սպազայի մարտահրավերների գիտակցումն ու դրանց դիմակայումը:

Հասարակության արժեքային գիտակցությունը կազմում է նրա արժեհամակարգը: Հասարակական արժեքները գաղափարական, սոցիալ-

քաղաքական, հոգևոր-մշակութային, կրոնաբարոյական, գեղագիտական ոլորտները կանոնակարգող նորմեր, իդեալներ և սկզբունքներ են:

Անձի և հասարակության արժեքային գիտակցությունը սոցիալական որոշակի արժեքների՝ ավանդույթների, իդեալների նկատմամբ կողմնորոշումների, աշխարհայացքային, քաղաքական և բարոյական դիրքորոշումների ամբողջությունն է: Աշխարհի նկատմամբ անձի արժեքային հարաբերությունը հանգեցնում է արժեքային կողմնորոշումների ձևավորմանը: Արժեքային կայուն կողմնորոշումները վերածվում են նորմերի, որոնք էլ որոշում են հասարակության անդամների վարքի ձևերը: Իր և աշխարհի նկատմամբ անհատի ունեցած արժեքային վերաբերմունքն արտացոլվում է հույզերի, կամքի, վճռականության, նպատակադրման, իդեալների ստեղծման մեջ [3], ինչպես նաև գեղագիտական և բարոյական պատկերացումներում:

Արժեքային կողմնորոշումները կազմում են անձի արժեքանական ոլորտը: Դրանք հոգեառցիալական կազմավորումներ են, կենսական համոզմունքներ, կենսագործունեության նպատակաուղղվածության արտահայտություն, կառուցվածքային բաղադրատարրեր, դրանք են որոշում անձի գիտակցության, աշխարհայացքի զարգացումը և վարքի դրսևորումները:

Հասարակական-պատմական բոլոր ժամանակաշրջաններում անձի արժեքային կողմնորոշումների ձևավորումն ընկալվել է որպես կրթության զարգացման նպատակ, պայման, գործոն՝ կազմելով մանկավարժական համակարգերի հիմքը: Կրթության բովանդակության նկատմամբ արժեքանական մոտեցման հիմնական դրույթների շեշտադրումն ունի պետական, սոցիալական, մշակութային հնչեղություն:

Բուհի կրթական գործընթացում մասնագետի պատրաստության մոդելի մշակումը հիմնվում է հասարակության արժեքային համակարգի գերակայությունների վրա, որոնց առանցքը կազմում են կրթամշակութային և սոցիալ-մասնագիտական արժեքները: Կրթական արժեքների արդիականության գնահատումը կախված է հասարակության պահանջունքներից, այս կամ այն երևույթի, իրադարձության, հասարակական գործընթացի նկատմամբ վերաբերմունքից, հասարակական հարաբերությունների բնույթից, կրթության բնագավառում ընթացող բարեփոխումներից, համաշխարհային կրթական տարածքի առաջանցիկ զարգացման միտումներից: Կրթության առաջնահերթություններից է տեղեկատվական-հեռահաղորդակցական մի շարք տեխնոլոգիաների դիդակտիկական հնարավորությունները կիրառել ուսանողների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացում:

Տեղեկունակ հասարակությանն անհրաժեշտ է գիտակրթական և մշակութային հարաբերություններ ձևավորել այլ լեզվակիրների հետ ու իր ներդրումն ունենալ տարբեր ազգերի սոցիալ-մշակութային զարգա-

ցումներում: Ժամանակի հրամայականն է ձևավորել ուսանողների արժեքային վերաբերմունքը միջմշակութային երկխոսության և այդ ճանապարհով սոցիալ-տնտեսական, քաղաքական, կրթամշակութային կապեր հաստատելու համար:

Ուսումնաճանաչողական գործընթացում տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների (S2S) կիրառման արդյունավետությունն ապահովելու համար հարկ է հաշվի առնել դրանց մի շարք առանձնահատկությունները՝ դասավանդողի և ուսանողի միջև համաժամանակյա հաղորդակցման հնարավորությունը, ուսումնական գործընթացի կազմակերպման ինտերակտիվ բնույթը, կրթական բաց միջավայրի ստեղծման հնարավորությունը, միջանձնային փոխհարաբերությունների ակտիվացումը և այլն: Համացանցը վիրտուալ իրականություն է, մեր կյանքի անխուսափելի բաղադրիչը, ուստի անհրաժեշտ է նոր ուղիներ որոնել սովորական լսարանը վիրտուալ կրթական տարածքի հետ արդյունավետորեն համադրելու համար, որպեսզի հեռահաղորդակցական տեխնոլոգիաները ոչ թե խոչընդոտեն, այլ նպաստեն կրթական նպատակների իրականացմանը:

Ուսումնական գործընթացում տեղեկատվական մի շարք տեխնոլոգիաներ կիրառելիս հարկ է հաշվի առնել թվայնացված (էլեկտրոնային) տեքստերի որոշ առավելություններ. հատկապես կարևորվում է դրանց ինտերակտիվ ներուժը: Էլեկտրոնային տեքստերն ընթերցողներին ներառում են նոր նյութեր ստեղծելու գործընթացում. նրանք ոչ միայն կարդում են, յուրացնում կարևոր տեղեկատվություն, այլև մեկնաբանում են, արժեքային դաստորություններ արտահայտում, հղումներ անում և մասնակցում ֆորումներում:

Թվայնացված տեղեկատվական ոլորտ մուտք ունենալու, ուսումնաճանաչողական մեծաքանակ տեղեկատվություն յուրացնելու, որոնողական-հետազոտական աշխատանք իրականացնելու և գլոբալ հասարակության մասնիկը դառնալու համար կարևոր գործոն է ոչ միայն ուսանողների ճանաչողական որակների, այլև տեղեկատվության նկատմամբ արժեքային վերաբերմունքի ձևավորումը [4]: Ներկայումս՝ տեխնոլոգիական հեղաշրջումների արդի դարաշրջանում, տեղեկատվական կրթական միջավայրում իրականացող ուսումնաճանաչողական գործունեությունը ուսանողից պահանջում է ինքնուրույնություն, արժեքային-գնահատողական վերաբերմունք և ակտիվություն:

Կրթական գործընթացում Web 2.0 որոշ գործիքների, այդ թվում WebQuest-երի (ի դեպ, նպատակահարմար ենք համարում համակարգչային որոշ եզրույթներ չթարգմանել՝ դրանց իմաստը չաղավաղելու և համընդհանուր ընդունված իմաստի միանշանակ գործածությունը պահպանելու համար) դիդակտիկական-արժեքային հնարավորություն-

ների կիրառումը՝ որպես տեղեկատվական կրթական միջավայրում շփման միջոց, նպաստում է սովորողների արժեքային կողմնորոշումների, ճանաչողական կարողությունների և քննադատական մտածողության զարգացմանը:

Ներկայումս ուսուցման գործընթացում WebQuest-երի, Web 2.0 այլ գործիքների՝ բլոգների (blogs), վիքիների (wikis), Ֆեյսբուքի (Facebook) և տեխնոլոգիական այլ ռեսուրսների ընձեռած հնարավորությունները նպաստում են ուսումնական նյութի արժեքային ընկալմանը, համագործակցային ուսումնասությամբ, հաղորդակցմանը: Այս հոդվածի շրջանակներում մենք դիտարկել ենք WebQuest-ի հնարավորությունների օգտագործումը ոչ միայն ուսումնական նյութի յուրացման, ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման, այլև արժեքային կողմնորոշումների ձևավորման տեսանկյունից:

WebQuest-ը հարցումների միջոցով իրականացվող օնլայն այնպիսի առաջադրանքների իրականացման տեխնոլոգիա է, որոնք ուսանողները կատարում են՝ աշխատելով էլեկտրոնային աղբյուրներից ստացված տեղեկատվությամբ [5]: WebQuest-երը ծրագրեր իրականացնելու և վերլուծություններ կատարելու համար առաջարկում են համացանցային բազմազան միջոցներ, որոնք ուսանողների իմացական կարողությունները ձևավորելուն զուգահեռ զարգացնում են նաև նրանց արժեքային-գնահատողական վերաբերմունքը: Ընտրվում են մասնագիտությամբ կամ տվյալ դասի թեմային առնչվող նյութեր՝ հիմնականում քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, էկոլոգիական արդի հիմնախնդիրների վերաբերյալ, որոնք պահանջում են ուսանողների արժեքային-գնահատողական վերաբերմունքը: Սովորողները կատարում են գրառումներ, վերարտադրում են, համեմատում, հակադրում, ամփոփում, եզրահանգում, գրում էսսեներ:

Նկարագրվող տեխնոլոգիայի հիմնական նպատակն է սովորողներին ներգրավել կենսական հիմնախնդիրներին առնչվող առաջադրանքների կատարմանը, որոնց ընթացքում նրանք ձեռք են բերում երևույթների, գործընթացների հասարակական-արժեքային և մշակութային նշանակությունը գնահատելու կարողություններ, ձևավորվում է նրանց աշխարհայացքը: WebQuest-երի կիրառման հիմնական առանձնահատկություններն են համացանցային ռեսուրսների բազմազանությունը, արդիականությունը, խթանող հարցերի առկայությունը, որոնք մղում են ընդլայնելու ճանաչողության շրջանակները նոր տեղեկատվություն ձեռք բերելու և արժևորելու ճանապարհով:

WebQuest-ը կարող է լինել դասավանդողի կողմից ստեղծված կայքէջ, MS Word փաստաթուղթ, Power Point սլայդներով ներկայացում և այլն: Այն ներառում է ներածության (նախնական), առաջադրանքի կատարման,

արդյունքների ներկայացման, գնահատման և ամփոփման փուլերը [6]: Չնայած կառուցվածքային ընդհանրությունը՝ WebQuest-ը կարող է ունենալ առաջադրանքի կատարման տարբեր մոտեցումներ՝ ըստ առաջադրանքի բնույթի, ուսումնական գործընթացի նպատակի և այլն:

Ներկայացնենք <Մարդու իրավունքներ. մարդկանց թրաֆիքինգը (շահագործումը)> թեմայի ուսուցման՝ մեր կողմից մշակված և ուսումնական գործընթացում ներդրված նմուշօրինակ WebQuest տեխնոլոգիայի կիրառմամբ: Թեմայի ընտրությունը պայմանավորված է նրա արդիականությամբ, քանի որ մարդու անձնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը՝ որպես ազատամտական արժեքների համակարգի կարևոր բաղադրատարր, հասկապես արժևորվում է գլոբալացվող արդի հասարակության հիմնախնդիրների համատեքստում:

Ներածություն. առաջադրանքի կատարման համար համապատասխան տեղեկատվության ստացում: Դասավանդողը WebQuest-ում ներկայացնում է թրաֆիքինգը՝ որպես մարդու իրավունքների ոտնահարման դրսևորումներից մեկը:

Մարդկանց աշխատանքային և սեռական շահագործումը համարվում է 21-րդ դարի ստրկություն: Չնայած այն հանգամանքին, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մարդու իրավունքների պաշտպանության համար նոր փուլ սկսվեց, մարդը հռչակվեց որպես գերագույն արժեք, իսկ նրա իրավունքներն ու ազատությունները՝ անօտարելի ու անկասպտելի, այնուհանդերձ ամեն տարի միլիոնավոր մարդիկ անդրազգային այդ հանցավորության պատճառով ենթակա են ֆիզիկական ու բարոյական խեղման:

Հանձնարարության փուլում ուսանողները պետք է ուսումնասիրեն տեղեկատվական ծավալուն նյութ՝ բացահայտելու համար մարդկանց անլեզալ ստրկացման՝ թրաֆիքինգի էությունը, դրանց նպաստող գործոնները, պայմանները, միջոցները, ծանոթանան թրաֆիքինգի դեմ պայքարի ձևերի հետ և հիմնախնդրի լուծումներ առաջարկեն: Նախընտրելի է այս փուլն իրականացնել համագործակցային փոքր խմբերով: Յուրաքանչյուր խումբ, ստանալով թեմային առնչվող առաջադրանք, իրականացնում է հետազոտություն՝ ըստ թեմատիկայի դասակարգված համացանցային ռեսուրսներով, որոնք նախապես ընտրվել և երաշխավորվել են դասավանդողի կողմից:

Թրաֆիքինգը, դրա տեսակները.

<http://www.unodc.org/unodc/en/human-trafficking/what-is-human-trafficking.html>

[http://www.ungift.org/knowledgehub/publications.html?vf=/doc/knowledgehub/resource-centre/UNODC Trafficking in Persons to Europe.pdf](http://www.ungift.org/knowledgehub/publications.html?vf=/doc/knowledgehub/resource-centre/UNODC%20Trafficking%20in%20Persons%20to%20Europe.pdf)

[http://www.bsccoalition.org/human trafficking and overview.html](http://www.bsccoalition.org/human%20trafficking%20and%20overview.html)

<http://www.state.gov/j/tip/rls/tiprpt/2011/164220.htm>

1. Այն երկրները, որտեղ տարածված է թրաֆիքինգը: Թրաֆիքինգը Հայաստանում.
<http://www.humantrafficking.org/combatt trafficking/regional initiatives>
<http://www.osce.org/yerevan/24682>
<http://gvnet.com/humantrafficking/Armenia.htm>
<http://www.bu.edu/globalbeat/ARMENIA/index.html>
2. Վիճակագրական տվյալներ.
http://www.unglobalcompact.org/docs/issues_doc/labour/Forced labour/HUMAN TRAFFICKING - THE FACTS - final.pdf
<http://www.pbs.org/wqbh/pages/frontline/slaves/etc/stats.html>
<http://www.humantrafficking.org/search/index.php?action=search&s=Statistics>
3. Թրաֆիքինգի դեմ պայքարը, դրա իրականացման միջոցները, իրավական փաստաթղթերը, գոհեղի պաշտպանությունը.
<http://ec.europa.eu/anti-trafficking/index.action>
<http://www.unodc.org/unodc/en/human-trafficking/publications.html>
<http://www.ungift.org/knowledgehub/>
<http://new.qbqm-umc.org/umcor/newsroom/releases/archives2011/antitraffickingprogramfaqs/>

Առաջադրանքի կատարման փուլում խմբի յուրաքանչյուր անդամ ստանձնում է որոշակի դեր, օրինակ՝ համացանցով տվյալներ որոնող, համակարգող և այլն: Առաջադրանքի կատարման ընթացքում, աշխատելով համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով, ուսանողները պատասխանում են հարցերին՝ ըստ ստորև տրված թեմատիկ բաժանումների.

1. Ինչու է թրաֆիքինգը համարվում գլոբալացման դարաշրջանի հիմնախնդիր և անդրազգային հանցավորություն: Ովքե՞ր են թրաֆիքինգի գոհերը: Քո մերձավորներից կամ ծանոթներից որևէ մեկը տուժե՞լ է արդյոք մարդու շահագործման այդ ձևից:
2. Նշեցե՞ք այն երկրները, որտեղ այդ երևույթն ամենատարածվածն է: Ինչու: Ո՞ր ռիսկային խմբում է Հայաստանը բնութագրե՞ք տարածվածության աստիճանը:
3. Ովքե՞ր են թրաֆիքինգի հիմնական գոհերը՝ կանա՞յք, տղամարդի՞կ, թե՞ անչափահասները: Ո՞ր տարիքն է ամենախոցելին: Տարեկան որքա՞ն շահույթ են ստանում այն իրականացնող անհատներն ու կազմակերպությունները:
4. Որո՞նք են թրաֆիքինգի դեմ պայքարող միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունները և հիմնական փաստաթղթերը: Միջազգային ո՞ր կազմակերպությունը կամ երկիրն է թրաֆիքինգի դեմ պայքարում առաջատարը:

Նյութերը որոնելուց, համակարգելուց և առաջադրված հարցերին պատասխանելուց հետո խմբի անդամներն արդեն լսարանում քննար-

կում են ստացված արդյունքները՝ ամփոփելով կարևոր տեղեկությունները՝ թրաֆիքինգի հիմնական տեսակները, աշխարհում դրա դեմ պայքարի միջոցները, Հայաստանում տարածվածության վերաբերյալ տվյալները, խոցելի խմբերը, կանխարգելման ուղիները, նախանշվում են իրագործման միջոցները: Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է ռազմավարական ծրագրի իր նախագիծը (օրինակ՝ <Թրաֆիքինգի կանխարգելման հիմնահարցը Հայաստանում>՝ որպես հիմնախնդրով զբաղվող փորձագետների կամ իրավաբանների խմբի հետազոտության արդյունք: Թեմայի ներկայացումն ուղեկցվում է PowerPoint սլայդներով կամ Prezi (<http://prezi.com/>) ներկայացումներով, խմբի անդամներին բաժանվում են բաշխիչ նյութեր (handouts):

Համացանցային լայն հնարավորությունները թույլ են տալիս հղումներ կատարել միջազգային օրենքներից, հոշակագրերից և դաշնագրերից՝ <Մարդու իրավունքների համաշխարհային հոշակագիրը> [7], ՄԱԿ-ի <Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ> կոնվենցիան [8], ՀՀ քրեական օրենսգրքը [9] և այլն: Բոլոր խմբերի ներկայացումից հետո ընտրվում է լավագույն նախագիծը կամ համատեղ ուժերով մշակվում են ռազմավարական ծրագրի նախագիծ, փորձագիտական գնահատական, օրինագիծ և այլն:

Գնահատման փուլում դասավանդողի կողմից մշակված ռուբրիկների միջոցով սահմանվում են խմբի կամ յուրաքանչյուր ուսանողի աշխատանքի գնահատման չափանիշները՝ համացանցային ռեսուրսներով աշխատելու հմտությունները, նյութը վերլուծելու, համադրելու, հիմնախնդրի լուծումներ առաջադրելու, համագործակցելու կարողությունները, հետազոտության արդյունքի կառուցվածքային ամբողջականությունը, տեխնոլոգիական գրագիտությունը, արժեքային-գնահատողական դատողությունները և այլն: Ի դեպ, ռուբրիկներ մշակելիս ևս կարելի է օգտվել համացանցային ռեսուրսներից, օրինակ՝ <http://rubistar.4teachers.org/index.php>:

Ամփոփման փուլում ուսանողները քննարկում են WebQuest-ի կատարման ընթացքը, արժևորում են հետազոտության առարկան, արտահայտում իրենց կարծիքն աշխատանքի ընթացքում առաջացած դժվարությունների վերաբերյալ, նախանշում գործունեության հետագա ուղիները: Ստացված նյութերն այնուհետև տեղադրվում են համացանցում՝ խմբի բլոգում, ֆեյսբուքյան էջում՝ քննարկումները շարունակելով վիրտուալ տարածքում:

Տեղեկունակ հասարակության մեջ տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներն իրենց հետքն են թողնում անձի մտածողության և արժեքային պատկերացումների վրա: Ժամանակի հրամայականն է կիրերասրածությունը լավագույնս ծառայեցնել ուսանողների արժեքային կողմնորոշումների, քննադատական մտածողության, ուսում-

նական նյութի ինքնուրույն յուրացման, ճանաչողական ակտիվության ձևավորման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայկական Սովետական Հանրագիտարան, Երևան, 1976, հ. 2, էջ 54:
2. Հակոբյան Ս. Մ., Փիլիսոփայություն: Ուսումնական ձեռնարկ, -Եր.: Երևանի պետական համալս. հր., 2000, էջ 243:
3. Կանյե Վ. Ա., Փիլիսոփայություն: Դասագիրք բուհերի ուսանողների համար, -Եր.:<Զանգակ-97>, 2001, էջ 173:
4. Shetzer, H. and Warschauer, M. "An Electronic Literacy Approach to Network-Based Language Teaching." In M. Warschauer and R. Kern (Eds.), Network-based Language Teaching: Concepts and Practice. New York: Cambridge University Press, 2000. <http://www.gse.uci.edu/person/warschauer_m/docs/nblt.pdf>.
5. Dodge, B. "WebQuests: A Technique for Internet-Based Learning." *Distance Educator* 1 (2). California: San Diego University, 1995. 10-13.
6. http://webquest.sdsu.edu/about_webquests.html
7. <http://www.un.org/en/documents/udhr/>
8. <http://www.unodc.org/documents/treaties/UNTOC/Publications/TOC%20Convention/TOCebook-e.pdf>
9. <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1349>

РЕЗЮМЕ

ПРИМЕНЕНИЕ ЦЕННОСТНО-ОРИЕНТИРУЮЩИХ ВОЗМОЖНОСТЕЙ ИНФОРМАЦИОННО-КОММУНИКАТИВНЫХ ТЕХНОЛОГИЙ В УЧЕБНОМ ПРОЦЕССЕ ВУЗА

А. В. АКОПЯН

В статье рассмотрены основные понятия аксиологии - ценность и ценностные ориентации. Выявлены дидактические и методические особенности применения некоторых информационно-коммуникативных технологии в учебно-познавательном процессе вуза. Показана ценностно-ориентирующая возможность веб-куестов в процессе формирования ценностных ориентации студентов.

SUMMARY

VALUE-ORIENTING POTENTIAL OF INFORMATION AND COMMUNICATION TECHNOLOGIES IN THE EDUCATIONAL PROCESS AT HIGHER EDUCATION INSTITUTIONS

A. V. HAKOBYAN

The principal axiological concepts - value and value orientation, were discussed in the article. The value-orienting potential of some web technologies was characterized in the context of educational values. The perspective of applying web technologies while shaping students' value orientations was carefully studied.

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ № 1(18) 2013 Гуманитарные науки

ՀՏԴ 32.001

**ՎՐԱՑ-ՕՍԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ
Ա. Կ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

ՀՀ ԳՍԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

Վրաց-օսական հակամարտությունը արմատներ է առնում խորհրդային ժամանակաշրջանից՝ հանդիսանալով էթնիկ հակամարտություն Վրաստանի կենտրոնական իշխանության և անջատողական տարածք Հարավային Օսիայի միջև: Վրաց-օսական թշնամանքը սկիզբ առավ 1918-1921 թվականներին, երբ 1918թ.-ի մայիսին Անդրկովկասի Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետության փլուզումից հետո Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունը ներկայացրեց իր հավակնությունը ներկայիս Հարավային Օսիայի տարածքի նկատմամբ: Այդ ամենը հանգեցրեց Հարավային Օսիայում զինված ապստամբությունների, որոնց նպատակն էր հասնել ազգային ինքնորոշման՝ հաստատելով խորհրդային իշխանություն: Մակայն Վրաստանի մենշևիկյան կառավարությունն ուժի կիրառմամբ անհնա ճնշեց բոլոր ապստամբությունները [1]: Օսական կողմը վրացական իշխանությունների այդ գործողությունները բնութագրեց որպես ցեղասպանություն [2]: Այդ մասին նշված է Հարավային Օսիայի խորհրդարանի կողմից 2006թ.-ին ընդունված փաստաթղթում, որը քաղաքական գնահատական է տալիս 1918-1920 թվականների դեպքերին՝ բնորոշելով դրանք որպես օս ժողովրդի ցեղասպանություն: 1921թ.-ին Վրաստանի խորհրդայնացումը բերեց Հարավային Օսիայի իրավական կարգավիճակի հաստատմանը: Հարկ է նշել, որ 1921թ.-ի հունվարից մինչ 1922թ.-ի սպրիլը Հարավային Օսիան մտնում էր Լեռնային Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ՝ Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության կազմում: Օսերի մեծամասնությունը ջանում էր վերջինիս կազմում միավորել Հյուսիսային և Հարավային Օսիան՝ ստեղծելով միասնական ինքնավարություն: Մակայն խորհրդային իշխանությունները դեմ արտահայտվեցին այդ նախաձեռնությանը, որի արդյունքում 1922թ.-ի սպրիլի 20-ին ձևավորվեց

Հարավային Օսիայի ինքնավար մարզը՝ Վրաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմում [3]:

Այսպիսով՝ Հարավային Օսիայի ինքնավար մարզի ստեղծումը հաստատեց «Հարավային Օսիա» տեղանվան իրավական կարգավիճակը՝ որպես հատակ որոշված սահմաններով վարչատարածքային միավորի: Խորհրդային տարիներին Հարավային Օսիայի իրավական կարգավիճակը մնաց անփոփոխ՝ առանց իրավական տեսանկյունից հատկանշական զարգացումների: Անհրաժեշտ է նշել, որ այդ ժամանակահատվածում օսերի դեմ իրականացվում էր վրացականացման քաղաքականություն, որը հիմնականում ուղղված էր հասարակական և մշակութային ոլորտներին: Այդ ամենից ելնելով Հարավային Օսիան բազմիցս դիմել է խորհրդային իշխանություններին Վրաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմից դուրս գալու և Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությանը միանալու պահանջով, սակայն ասպարոյուն:

Օսական ազգային շարժումը վերսկսեց 1988թ.-ին՝ պահանջելով արխազ ժողովրդի օգնությունը Վրաստանից անկախանալու հարցում և կենտրոնանալով Հարավային Օսիայի իրավական կարգավիճակի բարձրացման վրա [4]: Այդ ամենը վրաց-օսական հիմնախնդիրը տեղափոխեց քաղաքական մակարդակ, որի արդյունքում 1989թ.-ի նոյեմբերի 10-ին Հարավային Օսիայի Ժողովրդական պատգամավորների խորհուրդը որոշում ընդունեց վերափոխել Հարավային Օսիայի ինքնավար մարզի իրավական կարգավիճակը ինքնավար հանրապետությամբ Վրաստանի կազմում [5]: Սակայն օրեր անց Վրաստանի Գերագույն խորհուրդն անօրինական համարեց այդ որոշումը [6] և ստեղծեց հանձնաժողով, որը պետք է զբաղվեր Հարավային Օսիայի ինքնավար մարզի իրավական կարգավիճակի հիմնախնդրի ուսումնասիրությամբ [7]: Հետագա աշխարհաքաղաքական զարգացումները և ներքաղաքական անկայուն վիճակը հանգեցրին 1990թ.-ի սեպտեմբերի 20-ին Հարավային Օսիայի Ժողովրդական պատգամավորների խորհրդի կողմից Հարավային Օսիայի Խորհրդային Դեմոկրատական Հանրապետության հռչակմանը [8] և Հարավային Օսիայի պետական ինքնիշխանության մասին հռչակագրի ընդունմանը [9]: 1990թ.-ի դեկտեմբերի 9-ին տեղի ունեցան Հարավային Օսիայի Գերագույն խորհրդի ընտրությունները, որոնք չընդունվեցին վրացական իշխանությունների կողմից: Այդ ամենին ի պատասխան 1990թ.-ի դեկտեմբերի 11-ին Վրաստանի Գերագույն խորհուրդը ընդունեց օրենք, որը լուծարեց Հարավային Օսիայի ինքնավար մարզը և վերջինիս կառուցվածքային մարմինները, ինչպես նաև անվավեր ճանաչեց դեկտեմբերի 9-ին կայացած ընտրությունները՝ արդյունքում բաժանելով Հարավային Օսիայի ինքնավար մարզի տարածքը հարևան շրջանների միջև [10]:

Վրաստանը, նման քայլ իրականացնելով, նպատակ ուներ քաղաքական հիմնավորում տալ նախատեսված ռազմական ներխուժմանը, որը հանգեցրեց կողմերի միջև պատերազմի՝ 1991թ.-ի հունվարից մինչ 1992թ.-ի հունիսը: Բացի այդ, Հարավային Օսիայի լուծարման մասին օրենքի միակողմանի ընդունումն ունեցավ զգալի իրավական հետևանքներ [11]: 1991թ.-ի հունվարի 7-ին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (այսուհետ՝ ԽՍՀՄ) նախագահի հրամանագրով չեղյալ հայտարարվեցին Հարավային Օսիայի լուծարման մասին օրենքը և Հարավային Օսիայի պետական ինքնիշխանության մասին հռչակագիրը՝ պահանջելով երեք օրվա ընթացքում Հարավային Օսիայի տարածքից դուրս բերել բոլոր զինված կազմավորումները բացի ԽՍՀՄ-ի ներքին գործերի նախարարության գործերից [12]: Վրաստանի իշխանություններն այս պահանջը չկատարեցին՝ համարելով այն հակասահմանադրական միջամտություն պետության ներքին գործերին [13]:

Վրաց-օսական պատերազմի ընթացքում Մոսկվայի կողմից ճնշումների հետևանքով Հարավային Օսիայի իրավական կարգավիճակը կրկին փոխվեց: 1991թ.-ի մայիսի 4-ին որոշում ընդունվեց վերականգնել ինքնավար մարզի կարգավիճակը [14]: Սակայն ամիսներ անց՝ 1991թ.-ի սեպտեմբերի 1-ին, այդ որոշումը չեղյալ հայտարարվեց՝ հռչակելով Հարավային Օսիայի Հանրապետությունը [15]: 1992թ.-ի մայիսի 29-ին Հարավային Օսիայի Գերագույն խորհուրդը, հիմնվելով ազգերի ինքնորոշման միջազգային սկզբունքի վրա և հաշվի առնելով 1990թ.-ի դեկտեմբերի 9-ի ընտրությունների, ինչպես նաև 1992թ.-ի հունվարի 19-ի հանրաքվեի արդյունքները, ընդունեց Հարավային Օսիայի Հանրապետության անկախության հռչակագիրը [16]: Այս ամենը վերջ դրեց Հարավային Օսիայի իրավական կարգավիճակի շուրջ ստեղծված խառնաշփոթին, որը վրաց-օսական հակամարտության արտացոլումն էր իրավական դաշտում:

Վրաց-օսական պատերազմն ավարտվեց 1992թ.-ի հունիսի 24-ին Մոսկում՝ Վրաստանի և Ռուսաստանի միջև վրաց-օսական հակամարտության կարգավորման սկզբունքների մասին համաձայնագրի կնքմամբ: Վերջինս հրադադարի համաձայնագիր է, որի համաձայն հակամարտող կողմերը պարտավորվում էին դուրս բերել իրենց զինված կազմավորումները շփման գոտուց, իսկ Ռուսաստանը պարտավորվում էր դուրս բերել Հարավային Օսիայում տեղակայված իր երկու զնդերը: Բացի այդ նախատեսվում էր ստեղծել Համատեղ վերահսկող հանձնաժողով, ինչպես նաև Համատեղ խաղաղապահ ուժեր՝ կազմված ռուս, վրացի և օս խաղաղապահներից [17]:

Վրաց-օսական պատերազմը հանգեցրեց բազում մարդկային զոհերի և մեծ թվով փախստականների երկու կողմից՝ ուղեկցվելով օս

փախստականների զանգվածային սպանություններով, որոնք օսական կողմը բնորոշում է որպես ցեղասպանություն: Բացի այդ պատերազմի արդյունքում Վրաստանը կորցրեց Հարավային Օսիայի տարածքի կեսից սավելի նկատմամբ իր վերահսկողությունը, իսկ Հարավային Օսիան դարձավ չճանաչված և դե ֆակտո անկախ պետություն: Այդ հանգամանքն իրավական տեսանկյունից ամրագրում է 1993թ.-ի նոյեմբերի 2-ին ընդունված Հարավային Օսիայի սահմանադրությունը: Վերջինս համաձայն Հարավային Օսիայի Հանրապետությունը հանդիսանում է ինքնիշխան, ժողովրդավարական և իրավական պետություն, որը ստեղծվել է ժողովրդի ինքնորոշման արդյունքում [18]: Չնայած այդ ամենին՝ տվյալ ժամանակահատվածում Հարավային Օսիան միջազգայնորեն ճանաչվում էր որպես Վրաստանի մաս: Հարկ է նաև նշել, որ համաձայն Վրաստանի սահմանադրության՝ նախկին Հարավային Օսիայի ինքնավար մարզը մինչ օրս դե յուրե հանդիսանում է Վրաստանի անբաժան մասը [19]:

Վրաց-օսական հակամարտության հետագա սրումը տեղի ունեցավ 2004թ.-ին, երբ իշխանության եկած նոր ուժերը բարձրացրին պետության տարածքային ամբողջականության վերականգման հարց: Այդ տարիներին Հարավային Օսիան հանդիսանում էր Վրաստանի ամենագինված շրջաններից մեկը, որտեղ ծաղկում էր գողությունը, բռնությունը և մաքսանենգությունը [20]: Այս ամենի դեմ պայքարելու պատճառաբանությամբ Վրաստանը 2004թ.-ի մայիսի վերջին վրաց-օսական հակամարտության գոտի տեղափոխեց իր ներքին գործերի ստորաբաժանումները և ծանր ռազմական տեխնիկա, ինչը Մոսկի համաձայնագրի կոպիտ խախտում է: Վրաստանի գործողությունները բերեցին փոխադարձ հրաձգության, զինված ընդհարումների և մի քանի տասնյակ զոհերի: Իրավիճակը շարունակեց լարված մնալ մինչ նոյեմբերի սկիզբը, երբ կողմերը համաձայնեցին սպառազմականացնել հակամարտության գոտին [21]: 2004թ.-ի նոյեմբերի 5-ին կողմերը ստորագրեցին համաձայնագիր, որը բացի հակամարտության գոտու սպառազմականացումից՝ նախատեսում էր կառուցողական քայլեր՝ ուղղված հետագա ճգնաժամային իրավիճակների կանխմանը, կայունության հաստատմանը և փոխադարձ վստահության ամրապնդմանը [22]: Անհրաժեշտ է նշել, որ 2004թ.-ի դեպքերը չունեցան զգալի իրավական հետևանքներ: Հարավային Օսիան շարունակեց մնալ նույն կարգավիճակում՝ վերահսկելով իր տարածքի մեծ մասը:

Վրաց-օսական հակամարտության գոտում իրավիճակը կրկին սրվեց 2008թ.-ի հունիսի վերջին: Դեպքերի զարգացումը հանգեցրեց հնգօրյա պատերազմի՝ օգոստոսի 7-ից 12-ը, մի կողմից Վրաստանի, իսկ մյուս կողմից Հարավային Օսիայի, Աբխազիայի և Ռուսաստանի միջև: Ռուսաստանը պատերազմին պաշտոնապես միացավ 2008թ.-ի օգոստոսի

8-ին՝ սկսելով Վրաստանին խաղաղությանը հարկադրելու գործողությունը, իսկ Աբխազիան՝ օգոստոսի 9-ին Չճանաչված պետությունների միության անդամների միջև ռազմական օգնության մասին համաձայնագրի շրջանակներում: 2008թ.-ի օգոստոսի 12-ին Ռուսաստանը հայտարարեց, որ Վրաստանին խաղաղությանը հարկադրելու գործողությունը հասել է իր նպատակին, որից հետո կողմերի միջև հիմնական ռազմական գործողություններն ավարտվեցին [11]:

2008թ.-ի օգոստոսի 12-ին Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի միջնորդությամբ ներկայացվեց վեց կետից բաղկացած հրադադարի մասին փաստաթուղթ, որը հայտնի է որպես «Մեդվեդև-Սարկոզի ծրագիր»: Այն նախատեսում էր չդիմել ուժի կիրառման, դադարեցնել բոլոր ռազմական գործողությունները, մարդասիրական օգնության ազատ մուտք, Վրաստանի զինված ուժերի վերադարձը մշտական տեղակայման վայրեր, Ռուսաստանի զինված ուժերի վերադարձը մինչպատերազմյան դիրքերին, ինչպես նաև Աբխազիայի և Հարավային Օսիայի կայունության և անվտանգության ապահովման միջազգային երաշխիքների ստեղծում: Այս բովանդակությամբ կողմերի միջև հրադադարի մասին փաստաթուղթը համաձայնեցվեց նախ Ռուսաստանի, ապա Վրաստանի հետ և ստորագրվեց 2008թ.-ի օգոստոսի 15-ին Վրաստանի, իսկ օգոստոսի 16-ին Ռուսաստանի կողմից [24]: 2008թ.-ի սեպտեմբերի 8-ին կողմերը ձևավորեցին «Մեդվեդև-Սարկոզի ծրագիր»՝ ավելացնելով երեք լրացուցիչ կետ, որոնց նպատակն էր ամբողջականացնել խաղաղության և կայունության հաստատման գործընթացը [25]: Կատարված փոփոխություններն ուժի մեջ մտան անհապաղ: Վրաստանը ծրագրի ձևավորված տարբերակը ստորագրեց 2008թ.-ի սեպտեմբերի 9-ին [26]:

2008թ.-ի հնգօրյա պատերազմը շրջադարձային նշանակություն ունեցավ վրաց-օսական հակամարտության համար: Հարավային Օսիային հաջողվեց հաստատել վերահսկողություն իր ողջ տարածքում, իսկ Վրաստանը կորցրեց այն ամբողջությամբ: Հարկ է նշել, որը հնգօրյա պատերազմի արդյունքում կողմերն ունեցան բազում զոհեր և տասնյակ հազարավոր փախստականներ: Իրավական տեսանկյունից պատերազմը հանգեցրեց Հարավային Օսիայի միջազգային իրավական կարգավիճակի փոփոխությանը: Արդյունքում մի քանի պետություններ ճանաչեցին Հարավային Օսիայի անկախությունը: Առաջինը Հարավային Օսիայի անկախությունը ճանաչեց Ռուսաստանը 2008թ.-ի օգոստոսի 26-ին [27], որին հաջորդեցին Նիկարագուան՝ 2008թ.-ի սեպտեմբերի 5-ին [28], Վենեսուելան՝ 2009թ.-ի սեպտեմբերի 10-ին [29], Նաուրուն՝ 2009թ.-ի դեկտեմբերի 16-ին [30] և Թուվալուն՝ 2011թ.-ի սեպտեմբերի 19-ին [31]: Ըստ այդմ, Հարավային Օսիան ձեռք բերեց մասամբ ճանաչված պետության կարգավիճակ, որը դե ֆակտո անկախ է և ինքնուրույն

վերահսկում է իր ամբողջ տարածքը: Չնայած այդ հանգամանքին՝ մնացած բոլոր պետությունները և միջազգային կազմակերպությունները Հարավային Օսիան ճանաչում են որպես Վրաստանի անբաժան մաս:

Անփոփեղով կարող ենք փաստել, որ վրաց-օսական հակամարտության իրավական ասպեկտներն ունեն բավականին արդիական նշանակություն հակամարտության կարգավորման համատեքստում: Դրանց կարևորությունը պետք է հաշվի առնել հակամարտության ցանկացած զարգացմանն անդրադառնալիս՝ սկսած կարգավորման ձևաչափերի ընտրությունից մինչև միջազգային դերակատարների ներգրավվածությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Спорные границы на Кавказе, под редакцией Бруно Коппигерса, Издательство «Весь Мир», Москва, 1996, с. 43:
2. Декларация о Геноциде 1920 года в Южной Осетии, Принято на 14 сессии Юго-Осетинского областного Совета народных депутатов 20 созыва, Цхинвал, 20 сентября 1990 года:
3. Decree N 2 on Arrangement of the South Ossetian Autonomous Oblast issued by the Central Executive Committee of All-Georgia and the Council of Public Commissars of Georgia, 20 April 1922 (Messenger of the Commissariat of Internal Affairs, N 33, 1922, pp. 81-84):
4. Tim Potier, Conflict in Nagorno-Karabakh, Abkhazia and South Ossetia: A Legal Appraisal, Kluwer Law International, 2001, p. 13:
5. Decision taken by the 12th Extraordinary Session of the South Ossetian Oblast Council of the People's Deputies of the 20th convocation on raising the status of the South Ossetian Autonomous Oblast, 10 November 1989:
6. Decree issued by the Presidium of the Supreme Council of the Georgian SSR on the decisions made at the 12th Extraordinary Session of the Council of People's Deputies of the 20th convocation of the Autonomous Oblast of the South Ossetia, 16 November 1989 (Bulletins of the Supreme Council of the Georgian SSR, 1989, # 11, pp. 7-8, in Georgian):
7. Decree issued by the Supreme Council of the Georgian SSR on election of the commission of the Supreme Council of the Georgian SSR to study the issues relating to the status of the South Ossetian Autonomous Oblast, 18 November 1989 (Bulletins of the Supreme Council of the Georgian SSR, 1989, # 11, p. 98, in Georgian):
8. Decision taken by the 14th Session of the Oblast Council of the People's Deputies of the South Ossetian Autonomous Oblast of the 20th Convocation on reorganization of the South Ossetian Autonomous Oblast into the Soviet Democratic Republic of South Ossetia, 20 September 1990 (Newspaper "Sovetskaya Ossetia", # 180, 22 September 1990, in Russian):
9. Declaration of state sovereignty of the Soviet Democratic Republic of South Ossetia, 20 September 1990 (Newspaper "Sovetskaya Ossetia", # 193, 13 October 1990, in Russian):

10. Law of the Republic of Georgia on abolition of the Autonomous Oblast of the South Ossetia, 11 December 1990 (Bulletins of the Supreme Council of the Republic of Georgia, 1990, # 12, pp. 10-12, in Georgian):
11. Oleg Kudukhov and Ruslan Bzarov, The South Ossetia Five Days in August, Brussels, 2009, p. 9, pp. 20-34:
12. Decree issued by the President of the Union of the Soviet Socialist Republics on certain legal acts adopted in 1990 by the Republic of Georgia, 7 January 1991 (Bulletins of the Congress of the People's Deputies and the Supreme Council of the USSR, 1991, # 2, pp. 118-119, in Russian):
13. Decree issued by the Supreme Council of Georgia on the decree issued by the President of the USSR on 7 January 1991, 9 January 1991 (Bulletins of the Supreme Council of the Republic of Georgia, 1991, # 1, pp. 10-15, in Georgian):
14. Decision of the Meeting of deputies of the oblast, city, district, settlement and village Councils of the South Ossetian Autonomous Oblast on implementation of the decree of the President of the USSR of 7 January 1991 and the Decree issued by the Supreme Council of the USSR of 1 April 1991, 4 May 1991 (Newspaper "Sovetskaya Ossetia", # 41, 16 May 1991, in Russian):
15. Decision of the Session of the Council of People's Deputies of the South Ossetian Autonomous Oblast on annulment of the Decision of the Assembly of the People's deputies of all levels held on 4 May 1991, 1 September 1991 (Conflicts in Abkhazia and South Ossetia, Documents 1989-2006, collected and commented by M. A. Volkhonski, B. A. Zakharov, N. Y. Silaev, Moscow, 2008, pp. 200-202, in Russian):
16. Declaration of Independence of the Republic of South Ossetia, 29 May 1992 (B. Chochoyev and M. Jioev, The South Ossetia, Chronicle of Events of the Aggression of Georgia 1988-1992, Tskhinval, 1996, p. 1, in Russian):
17. Соглашение "О принципах урегулирования грузино-осетинского конфликта", Сочи, 24 июня 1992 (Дипломатический вестник МИД РФ, 1992, №13-14. с.31):
18. Constitution (Fundamental Law) of the Republic of South Ossetia, 2 November 1993, Article 1 (Newspaper "Youzhnaia Ossetia", No 132-133, 8 December 1993, in Russian):
19. Constitution of Georgia, Adopted on 24 August 1995 (Last amendment 27.12.06), Article 1:
20. Svante E. Cornell, The South Caucasus, A Regional Overview and Conflict Assessment, Prepared for the Swedish Agency for International Development Cooperation (SIDA), Stockholm, 30 August 2002, p. 50:
21. International Crisis Group (ICG), Georgia: Avoiding War in South Ossetia, Europe Report N°159, Brussels, 26 November 2004, pp. 14-15:

22. Statement on the results of the meeting of Z. Zhvania and E. Kokoiti, Sochi, 5 November 2004 (Archive of the OSCE Mission to Georgia, in Russian):
23. International Crisis Group (ICG), Russia vs Georgia: The Fallout, Europe Report N°195, Brussels, 22 August 2008, pp. 3-4:
24. Implementation of the Plan of Russian President Dmitry Medvedev and French President Nicolas Sarkozy, 12 August 2008, MFA press release 1321-8-09-2008, Moscow, 9 September 2008:
25. Implementation of the Plan of 12 August 2008, Tbilisi, 9 September 2008 (Archive of the Georgian Ministry of Foreign Affairs, in French):
26. Decree of the President of the Russian Federation on recognition of the Republic of South Ossetia, Moscow, Kremlin, 26 August 2008:
27. El Presidente de la República Nicaragua, Decreto No. 46-2008, 5 September 2008:
28. Agreement on the establishment of diplomatic relations between the Republic of South Ossetia and the Bolivarian Republic of Venezuela, Caracas, 23 July 2010:
29. Agreement on the establishment of diplomatic relations between the Republic of South Ossetia and the Republic of Nauru, Tskhinval, 16 December 2009:
30. Joint Statement on establishment of diplomatic relations between the Republic of South Ossetia and Tuvalu, Tskhinval, 19 September 2011:

РЕЗЮМЕ
ПРАВОВЫЕ АСПЕКТЫ ГРУЗИНО-ОСЕТИНСКОГО КОНФЛИКТА
А. К. АЙРАПЕТЯН

В статье представляются правовые аспекты грузино-осетинского конфликта. В ней основное внимание обращено на предисторию конфликта, изменения правового статуса, важные правовые события и текущий международно-правовой статус. В статье хронологически исследуется грузино-осетинский конфликт: с начала до наших дней, одновременно пытаюсь представить особенности и отличия конфликта. Исследование с правовой точки зрения имеет важное значение, так как правовые аспекты играют ключевую роль в разрешении грузино-осетинского конфликта.

SUMMARY
THE LEGAL ASPECTS OF GEORGIAN–OSSETIAN CONFLICT
A. K. HAYRAPETYAN

The article introduces the legal aspects of Georgian–Ossetian conflict. It mainly focuses on prehistory of conflict, changes of legal status, significant legal events and current international legal status. The article chronologically researches Georgian–Ossetian conflict from the beginning till nowadays, trying to present the features and differences of the conflict. The research from the legal point of view has a significant importance, because the legal aspects are playing key role in the resolution of Georgian–Ossetian conflict.

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 1(18) 2013 Гуманитарные науки

ՀՏԴ 32.001

**<ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ>
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

Ս. Լ. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն

<Պետության աշխարհաքաղաքական զարգացումը> աշխարհաքաղաքականության կարևոր հասկացություններից է, որի նկատմամբ ուշադրությունը և որի հետազոտությունների կարևորությունը պայմանավորված է հատկապես հետևյալ իրողություններով.

- այն նոր ձևավորվող, տեսականորեն թերմշակ և աշխարհաքաղաքականության համար մեթոդաբանական նշանակության հասկացություն է, որի տեսական-մեթոդաբանական թերմշակության հաղթահարումն արդիական խնդիր է,

- սրա հետազոտությունների արդյունքների արժանահավատությունից է նաև կախված աշխարհաքաղաքականության ինչպես ճանաչողական, այնպես էլ կանխատեսման և կառավարման գործառնությունների արդյունավետությունը, բարդ և դժվար կանխատեսելի գործընթացներով նոր աշխարհակարգի պայմաններում պետությունների (հատկապես զարգացման միջին և ցածր մակարդակ ունեցող) ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հիմնական գործառնությունների կատարմանը աշխարհաքաղաքականության օժանդակության արդյունավետությունը, պետությունների քաղաքականության և գործառնության արդյունավետությունը,

- այն կարևոր նշանակություն ունի այնպիսի բարդ գիտական գիտելիքների ստեղծման գործում, ինչպիսիք են՝ պետության աշխարհաքաղաքական անվտանգության և զարգացման հայեցակարգերը, պետության աշխարհաքաղաքական դոկտրինան և այլն:

<Պետության աշխարհաքաղաքական զարգացումը> <զարգացում> հասկացությամբ համակարգի բաղադրիչ է:

<Զարգացումը նյութական և իդեալական օբյեկտների անշրջելի, ուղղորդված և օրինաչափ փոփոխությունն է> [1]: Այլ փոփոխությունների մեջ զարգացման գործընթացները առանձնացնում է միայն նշված բոլոր

երեք հատկությունների միաժամանակյա առկայությունը. Փոփոխությունների շրջելիությունը բնութագրում է գործառության գործընթացները, օրինաչափության բացակայությունը բնորոշ է աղետի տիպի պատահական գործընթացներին, փոփոխությունների ուղղորդվածության բացակայության դեպքում չի լինի կուտակում և դրա համար գործընթացը կզրկվի զարգացման համար բնորոշ ամբողջականությունից, ներքին փոխկապվածությունից:

Զարգացման արդյունքում առաջանում է օբյեկտի որակական նոր վիճակ, որն արտահայտվում է նրա կազմի կամ կառուցվածքի փոփոխությամբ՝ նրա տարրերի կամ կապերի ծագմամբ, փոխակերպմամբ, կամ անհայտացմամբ: Զարգացման ունակությունը մատերիայի և գիտակցության համընդհանուր հատկություններից է [1]:

Գիտական գրականության մեջ <զարգացում> հասկացությանին համակարգի բաղադրիչներից հաճախ հանդիպում են <տնտեսական զարգացումը>, <քաղաքական զարգացումը>, <սոցիալական զարգացումը>, <մշակութային զարգացում> ու <կայուն հասարակական (մարդկային) զարգացումը>: <Տնտեսական զարգացման> հետ <կայուն հասարակական (մարդկային) զարգացումը> առավել հաճախ շրջանառվողն է, որի գերակայությունները ՄԱԿ-ը փորձում է կիրառել աշխարհի բոլոր երկրների նկատմամբ:

<Պետության աշխարհաքաղաքական զարգացումը> կոնկրետ աշխարհաքաղաքական այն կարևոր հասկացություններից է, որոնց նկատմամբ համապատասխան ուշադրության բացակայությունը և որոնց տեսական-մեթոդաբանական թերմշակությունը շատ բանով պայմանավորել են ժամանակակից աշխարհաքաղաքականության զարգացման ցածր մակարդակը [2]: Որպես <պետության աշխարհաքաղաքական զարգացման> տեսական թերմշակության հիմնավորում բավական է նշել աշխարհաքաղաքականության դասագրքերի և ուսումնական ձեռնարկների հիմնական հասկացությունների բաժիններում այս հասկացության բացակայությունը: Սակայն “Геополитика: Популярная энциклопедия”-ում (M., 2002) այն տեղ գտել է և սահմանվում է որպես <այս կամ այն պետության՝ իր աշխարհաքաղաքական դիրքի փոփոխմանն ուղղված պրակտիկ գործողությունների ամբողջություն՝ հիմնված նրան մատչելի զարգացման ռեսուրսների տարածաժամանակային կոնֆիգուրացիայի մասին գիտական գիտելիքների վրա> [3]: Այս սահմանման մեջ ակնհայտ է <զարգացման> վերը շարադրված կարևոր բնութագրիչների անտեսումը: Մասնավորապես, զարգացումը ոչ թե փոփոխությանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, այլ փոփոխությունը՝ վերը շարադրված բնութագրիչներով: Պետության աշխարհաքաղաքական զարգացման արդյունքում անշուշտ վերջինիս աշխարհաքաղաքական դիրքը բարե-

լավվում է, սակայն այն աշխարհաքաղաքական գործոններից մեկն է (պետական տարածքի, պետության հզորության բնութագրիչներից մեկը) և պետության աշխարհաքաղաքական դիրքի փոփոխությունը որպես նրա աշխարհաքաղաքական զարգացման միակ նպատակ ներկայացնելը, կարծում ենք, ճիշտ չէ: Սահմանման մեջ ռեսուրսների մասին շեշտադրումը կարևոր է, սակայն, դրանցից ճիշտ կլինի առանձնացնել աշխարհաքաղաքական ռեսուրսները՝ աշխարհաքաղաքական զարգացման համար օգտագործվող ռեսուրսները: Ընդ որում, այստեղ առանձնահատուկ կարևորություն ունի ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, դրանք որակապես և քանակապես սվելացնելով հզորության վերածելը:

Ինչ վերաբերում է սահմանման մեջ գիտական գիտելիքների առկայությանը, ապա <զարգացում> հասկացությանին համակարգի բաղադրիչների սահմանումներում դրանք գրեթե միշտ չեն հանդիպում՝ թեև այս կամ այն ոլորտի զարգացման համար ակնհայտ է դրանց կարևորությունը:

<Պետության աշխարհաքաղաքական զարգացման> համար կարևոր է նաև <աշխարհաքաղաքականի> բովանդակությունը: Իսկ վերջինիս մասին թեև տարակարծիք են, սակայն, մեր կարծիքով, այն ընդհանուր առմամբ ճիշտ է ներկայացնում <աշխարհաքաղաքականության> առավել տարածված սահմանումը. <աշխարհաքաղաքականությունը գիտություն է տարածության վերահսկման մասին> [4]: <Տարածության (տարածքի) վերահսկումը> <աշխարհաքաղաքականությունը>, ինչպես նաև <աշխարհաքաղաքականը> սահմանող (բնութագրող) թեև հիմնական հասկացությունն է, սակայն, մեր կարծիքով, քանի որ անվերջ պայքար է մղվում այդ գործընթացի մասնակիցների՝ աշխարհաքաղաքական սուբյեկտների կողմից՝ իրենց ազդեցության ոլորտները պահպանելու և ընդարձակելու համար, և աշխարհաքաղաքականության բովանդակությունը հնարավոր չէ պատկերացնել առանց այդ մրցակցության հետազոտությունների (որի արդյունքում էլ աշխարհաքաղաքական գրականության մեջ շրջանառվում է <աշխարհաքաղաքական մրցակցություն> հասկացությունը), ուստի <աշխարհաքաղաքականություն>, ինչպես նաև <աշխարհաքաղաքականի> սահմանման (բնութագրման) համար կարևոր է ոչ միայն <տարածության (տարածքի) վերահսկումը>, այլև <տարածության (տարածքի) վերահսկման համար մրցակցությունը>: Կարևոր է նաև վերահսկման օբյեկտների՝ համաշխարհային տարածության և դրա բաղադրիչների (ենթակարգային միավորների) մասին շեշտադրումը՝ հատկապես այն պատճառով, որ ժամանակակից աշխարհաքաղաքականության մեջ առանձնահատուկ կարևորություն է տրվում աշխարհաքաղաքական տարածության ենթակարգային բոլոր միավորներին, վերահսկումը և դրա

համար մրցակցությունը վերաբերում է ինչպես համաշխարհային տարածությանն ընդհանրապես, այնպես էլ դրա բաղադրիչներին:

Այսինքն, <համաշխարհային տարածության և դրա բաղադրիչների վերահսկումն ու դրա համար մրցակցությունը> հենց <աշխարհաքաղաքական> սահմանող հասկացությունն է [5] և <աշխարհաքաղաքական> բնույթի հասկացությունների սահմանման ժամանակ դրա օգտագործումը, կարծում ենք, ճիշտ է և հիմնավորված: Սակայն, կախված աշխարհաքաղաքական կոնկրետ հասկացության սահմանման առանձնահատկություններից, սահմանողի մեջ առկա հասկացություններից, <աշխարհաքաղաքականը> սահմանող վերը նշված հասկացության հետ դրանց առնչություններից, տվյալ սահմանման մեջ կարող է օգտագործվել <աշխարհաքաղաքականը> սահմանող <համաշխարհային տարածության և դրա բաղադրիչների վերահսկումն ու դրա համար մրցակցությունը> հասկացությունն ամբողջությամբ կամ դրա բաղադրիչները:

Գիտական գիտելիքի այս կարևոր տեսակի՝ <հասկացության> (<կատեգորիայի>) բովանդակությունը ներկայացնելու համար կարևոր է <հասկացություն> իմացաբանական հասկացության պահանջների [6] իմացությունը, առանց որի հնարավոր չէ ընդհանրապես պետության աշխարհաքաղաքական զարգացման հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմքի սպասելու:

Հիմք ընդունելով <հասկացություն> իմացաբանական հասկացության պահանջները, <զարգացման>, <պետության աշխարհաքաղաքական զարգացման> և <աշխարհաքաղաքականի> մասին վերը շարադրվածը, փորձենք սահմանել <պետության աշխարհաքաղաքական զարգացում> հասկացությունը:

Պետության աշխարհաքաղաքական զարգացումը պետության աշխարհաքաղաքական ռեսուրսները որակապես և քանակապես ավելացնելով աշխարհաքաղաքական հզորության վերածող, նրա աշխարհաքաղաքական անվտանգության ապահովմանն ու նրա կողմից համաշխարհային տարածության և (կամ) դրա բաղադրիչների վերահսկմանն ուղղված փոփոխություններն են:

Պետության աշխարհաքաղաքական զարգացումը, ինչպես նաև այլ զարգացումները, իրականացվում են իրական ժամանակում և միայն ժամանակն է բացահայտում զարգացման ուղղորդվածությունը:

Ինչպես երևում է սահմանումից, <պետության աշխարհաքաղաքական զարգացումը> սահմանողը ներառում է մի քանի կարևոր հասկացություններ՝ <պետության աշխարհաքաղաքական ռեսուրսները>, <պետության աշխարհաքաղաքական հզորությունը>, <պետության աշխարհաքաղաքական անվտանգությունը> և <պետության կողմից համաշխարհային տարածության և (կամ) դրա բաղադրիչների վերահսկումը>:

<Պետության աշխարհաքաղաքական զարգացման> համար առանձնահատուկ կարևորություն ունեն`

- պետության կողմից աշխարհաքաղաքական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, դրանք քանակապես և որակապես ավելացնելով աշխարհաքաղաքական հզորության վերածող փոփոխությունները,

- պետության աշխարհաքաղաքական անվտանգության ապահովմանն ուղղված փոփոխությունները,

- համաշխարհային տարածության և (կամ) դրա բաղադրիչների (մակրոտարածաշրջաններ, պետություններ) վերահսկմանն ուղղված փոփոխությունները:

<Պետության աշխարհաքաղաքական զարգացումը> քաղաքական նպատակների բնութագիր է, պետության ինքնիշխանության և գերիշխանության ապահովման, աշխարհում կամ առանձին մակրոտարածաշրջանում պետության աշխարհաքաղաքական մրցակցության արդյունավետության բարձրացման գործընթաց: Պետության ցանկությունից անկախ, նրա աշխարհաքաղաքական զարգացումը ընթանում է աշխարհաքաղաքական մրցակցության պայմաններում, ինչպես համամոլորակային, այնպես էլ մակրոտարածաշրջանային մակարդակի աշխարհաքաղաքական գործընթացներում:

Բարձր (1-ին և 2-րդ) կարգի ուժերի աշխարհաքաղաքական զարգացումը կարող է էականորեն ազդել ամբողջ աշխարհում և (կամ) առանձին մակրոտարածաշրջանում աշխարհաքաղաքական գործընթացների (մասնավորապես` աշխարհաքաղաքական մրցակցության) բնութագրի վրա: Բարձր կարգի ուժերի աշխարհաքաղաքական զարգացումը բացի իրենց աշխարհաքաղաքական անվտանգությունն ապահովող փոփոխություններից, նաև` համաշխարհային տարածության և (կամ) դրա բաղադրիչների (մակրոտարածաշրջաններ, այլ պետություններ) վերահսկմանն ուղղված փոփոխություններն են, որոնք նաև համաշխարհային տարածության և (կամ) մակրոտարածաշրջանների և այլ պետությունների աշխարհաքաղաքական բնութագրի վրա էական ազդեցություն ունեցող փոփոխություններ են: Առաջին կարգի ուժերի (ԱՄՆ, Ռուսաստան, ԵՄ, Չինաստան, Ճապոնիա) աշխարհաքաղաքական զարգացումը ազդում է ինչպես ամբողջ աշխարհի, այնպես էլ մակրոտարածաշրջանների աշխարհաքաղաքական բնութագրի, իսկ երկրորդ կարգի ուժերի (Իրան, Թուրքիա, Բրայել և այլն) աշխարհաքաղաքական զարգացումը` առանձին մակրոտարածաշրջանների (որտեղ նրանք գտնվում են) և հատկապես դրանց ցածր կարգի ուժերի աշխարհաքաղաքական զարգացման վրա:

Ցածր (3-րդ, 4-րդ և 5-րդ) կարգի ուժերի (նաև ՀՀ-ի) աշխարհաքաղաքական զարգացումը` աշխարհաքաղաքական ռեսուրսները

աշխարհաքաղաքական հզորության վերածող այն փոփոխություններն են, որոնք ուղղված են իրենց աշխարհաքաղաքական անվտանգության ապահովմանը և մակրոտարածաշրջանի այլ պետությունների (մասնավորապես՝ ցածր կարգի ու հարևան) նկատմամբ ազդեցության մեծացմանը: Ցածր կարգի աշխարհաքաղաքական ուժերի զարգացումը կարող է ազդել մակրոտարածաշրջանի աշխարհաքաղաքական իրադրության և բնութագրի վրա: Մրանց աշխարհաքաղաքական զարգացման մակարդակը ոչ միայն կախված է իրենց աշխարհաքաղաքական ռեսուրսները աշխարհաքաղաքական հզորության վերածելու ցանկությունից, այլև ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ կարգի և մակրոտարածաշրջանի այլ պետությունների աշխարհաքաղաքական հզորության և զարգացման մակարդակից, դրանց աշխարհաքաղաքական շահերից, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ մակրոտարածաշրջանային մակարդակում աշխարհաքաղաքական մրցակցության վիճակից և աշխարհաքաղաքական մակրոտարածաշրջանային խնդիրներից: Մրանք ի վերջո մեծ ազդեցություն են ունենում ցածր կարգի ուժերի աշխարհաքաղաքական քիչ ռեսուրսները հզորության վերածելու արդյունավետության վրա, հետևաբար՝ աշխարհաքաղաքական զարգացման մակարդակի վրա:

<Պետության աշխարհաքաղաքական զարգացման> բնութագրի թերի կլինի առանց <Էքսպանսիայի>: Նրա աշխարհաքաղաքական անվտանգության ապահովումը (որին ուղղված փոփոխությունները պետության աշխարհաքաղաքական զարգացման կարևոր բնութագրիչ են) հենց Էքսպանսիայի տարբեր տեսակներից պաշտպանվածությունն է: Էքսպանսիան մի կողմից ազդում է այլ պետության աշխարհաքաղաքական զարգացման վրա (իջեցնում է դրա մակարդակը), մյուս կողմից՝ նպաստում այն իրականացնող պետության աշխարհաքաղաքական զարգացման մակարդակի բարձրացմանը՝ եթե բխում է տվյալ պետության աշխարհաքաղաքական շահերից: Էքսպանսիայի տեսակների (հատկապես նոր) արդյունավետության և հետևանքների մասին պատկերացումները շատ կարևոր են պետության աշխարհաքաղաքական դոկտրինայի մշակման, հետևաբար՝ պետության աշխարհաքաղաքական զարգացման համար:

Պետության աշխարհաքաղաքական զարգացման վրա ազդում են տարաբնույթ զարգացումները, քանի որ, ինչպես երևում է վերը շարադրվածից, <աշխարհաքաղաքական> կարող են լինել տարաբնույթ այն երևույթները, գործընթացներն ու գործոնները (տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային և այլն), որոնք անմիջականորեն վերաբերում են համաշխարհային տարածության և դրա բաղադրիչների վերահսկմանն ու դրա համար մրցակցությանը: Պետության աշխարհաքաղաքական զարգացումը կախված է զարգացման վերոհիշյալ տեսակ-

ներից, մյուս կողմից, դրան ուղղված քաղաքականությունը հիմնականում արդյունավետ է նաև զարգացման մյուս տեսակների համար: Այսինքն, <պետության աշխարհաքաղաքական զարգացման> համար կարևոր են <զարգացում> հասկացությամբ համակարգի հաճախ շրջանառվող բաղադրիչ-հասկացությունները՝ <տնտեսական զարգացում>, <քաղաքական զարգացում>, <սոցիալական զարգացում>, <մշակութային զարգացում>, <կայուն հասարակական (մարդկային) զարգացում>:

<Պետության աշխարհաքաղաքական զարգացում> սերտորեն կապված է նաև պետության աշխարհաքաղաքական բնութագրիչներ-հասկացությունների, աշխարհաքաղաքական տարածության վիճակն ու գործընթացները բնութագրող հասկացությունների հետ:

Պետության աշխարհաքաղաքական բնութագրիչներ-հասկացություններից <պետության աշխարհաքաղաքական զարգացման> համար կարևոր են ոչ միայն նրա առաջարկված սահմանման մեջ առկա <պետության աշխարհաքաղաքական ռեսուրսները>, <պետության աշխարհաքաղաքական հզորություն> ու <պետության աշխարհաքաղաքական անվտանգություն>, այլև՝ <պետության աշխարհաքաղաքական շահերը>, <պետության աշխարհաքաղաքական հարաբերությունները>, <պետության աշխարհաքաղաքական իրավիճակը (իրադրություն)>, <պետության աշխարհաքաղաքական դիրքը> և այլն: Աշխարհաքաղաքական տարածության վիճակն ու գործընթացները բնութագրող հասկացություններից, <պետության աշխարհաքաղաքական զարգացման> համար հատկապես կարևոր են, <աշխարհաքաղաքական գործընթացները>, <աշխարհաքաղաքական մրցակցություն>, <գլոբալացում>, <Ֆրագմենտացում> ու <ռեգիոնալացում>:

Պետության աշխարհաքաղաքական զարգացման հետազոտության գիտական հիմքի մշակումը հատկապես կարևոր է աշխարհաքաղաքականության կառավարման գործառույթի արդյունավետության բարձրացման համար: Իսկ առանց կանխատեսման, դրա տեսական և մեթոդական ապահովման (աշխարհաքաղաքական կանխատեսման մեթոդաբանության մշակման) հնարավոր չէ ապահովել պետության աշխարհաքաղաքական զարգացման հետազոտության գիտական հիմքը և բարձրացնել աշխարհաքաղաքականության կառավարման գործառույթի արդյունավետությունը:

Ժամանակակից աշխարհաքաղաքականության զարգացման գործընթացը հատկապես պետության աշխարհաքաղաքական զարգացման հետազոտության գիտական հիմքի ապահովման գործընթաց է, պետության աշխարհաքաղաքական կանխատեսման մեթոդաբանության մշակման և դրա հիմքի վրա պետությունների աշխարհաքաղաքական կանխատեսման գործընթաց:

Պետությունների աշխարհաքաղաքական զարգացման հետազոտությունները կարող են նաև կարևոր դեր խաղալ նրանց արդյունավետ գործառության համար առանձնահատուկ կարևորություն ունեցող սեկյուրիտոլոգիայի՝ կենսագործունեության անվտանգության մասին գիտության զարգացման գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Философский энциклопедический словарь. 2-е издание. Ред. колл. С. С. Аверинцев, Э. А. Араб-оглы, Л. Ю. Ильичев, С. М. Ковалев и др. М., 1989, с. 537.
2. Մարիբեկյան Ս. Լ. Աշխարհաքաղաքականության զարգացման մակարդակի մասին // Կանթեղ 1: Գիտական հոդվածների ժողովածու.- գիրք 3 (44), Եր., 2010, էջ 195
3. Геополитика: Популярная энциклопедия. Авторы сост. В. БПришполец, Д. БПришполец, В. Манилов. Под общей ред. В. Манилова. М., 2002, с. 114.
4. Нартов Н. А., Нартов В. Н. Геополитика. Учебник для студентов вузов. 4-е изд., перераб. Դ ձև. Մ., 2007, с. 8.
5. Մարիբեկյան Ս. Լ. <Պետության հզորություն> և <Պետության աշխարհաքաղաքական հզորություն> հասկացությունները // Կանթեղ 1: Գիտական հոդվածների ժողովածու.- գիրք 1 (46), Եր., 2011, էջ 183
6. Բրուսյան Գ. Ա. Տրամաբանության դասընթաց: Դասագիրք բուհերի համար / [Խմբ.՝ Ռ. Զ. Ջիջյան և ուրիշ.], Երևանի պետ. համալս. 4-րդ վերամշ. և լրաց. հրատ., Եր., 1987, էջ 77-91

РЕЗЮМЕ

ПОНЯТИЕ “ГЕОПОЛИТИЧЕСКОЕ РАЗВИТИЕ ГОСУДАРСТВА”

С. Л. САРИБЕКЯН

“Геополитическое развитие государства” будучи компонентом понятийной системы “развитие”, является одним из развивающихся понятий геополитики.

В статье даются представления о понятиях “развитие” и “геополитическое развитие государства”, предложено новое, аргументированное определение “геополитического развития государства”, дана его характеристика и представлены понятия, имеющие для него важное значение.

SUMMARY
THE CONCEPT OF "THE GEOPOLITICAL DEVELOPMENT
OF THE STATE"
S. L. SARIBEKYAN

"The geopolitical development of the state" as a component of the conceptual "development", is one of the developing concepts of geopolitics.

The article touches upon the idea of the concepts of "development" and "geo-political development of the state," which is a new, presents a substantiated definition of "geopolitical development of the state", gives its characteristics and concepts of great importance.

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ № 1(18) 2013 Гуманитарные науки

ՀՏԴ 004

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՑԹԸ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Գ. Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

***Խ. Արույանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան***

Հոդվածում ցույց են տրված սոցիալ-հաղորդակցական ոլորտում և գրադարանային-տեղեկատվական գործունեության մեջ տեխնոլոգիական միջոցների կիրառությամբ վերջին տասնամյակներում առաջացած մի շարք հիմնախնդիրներ՝ հեղինակային իրավունքի խախտում, տեղեկատվության անհսկելիություն և տեղեկատվական պատերազմներ, անձի հոգեբանական խանգարումներ, համակարգչային հանցագործություններ [8], որոնք պահանջում են հիմնարար լուծումներ: Այդ են վկայում հայ և արտասահմանյան ռադիո-հեռուստատեսային հաղորդումներն ու բազմաթիվ տպագիր աղբյուրները:

Տեղեկատվական և տեխնոլոգիական հանցագործության օրինակ է ադրբեջանցիների կողմից հակահայկական գրքերի հրատարակումը Մոսկվայում՝ կեղծելով հայոց պատմությունն ու մշակութային ժառանգության ազգային պատկանելիությունը (<Հ 1>, 20.10.2010): Իսկ լրագրողներին տված իր հարցազրույցում Հ. Մելիք-Շահնազարյանը նշել է, որ ադրբեջանցիները <ամսական 5-6 գիրք են տպագրում՝ կեղծ տեղեկություններով, սակայն մենք նրանց ոչ մի հակահարված չենք տալիս> [1]:

Քննադատական սկզբունքի մեր տեսանկյունից հարկավոր է ոչ միայն պայքարել նման գրականության մասսայականացման դեմ, այլև՝ դրանց մուտքը գրադարանային ու գիտակրթական ոլորտ: Մյուս կողմից՝ ուշադրություն դարձնել գրահրատարակչական գործին՝ ստպարեզ հանելով մեր ազգային և պատմական հեղինակությունը բարձրացնող գրականություն:

Նոր ժամանակներում սակայն, որքան էլ կիրառություն ստանան համացանցն ու տեխնոլոգիական մյուս միջոցները, այնքանով սովորի են մեծանում նրանցում ծնվող <կիբեռհանցագործությունները> [2] և

դժվարանում դրանց դեմ պայքարը: Խոսքը հասկապես միջազգային հնչեղությունն ձեռք բերած <Վիկիլիքս> (Wikileaks) կայք-ծրագրի մասին է, որի հիմնադիր ավստրալիացի Ջուլիան Ասանժը շրջանառության մեջ է դրել տարբեր երկրներին վերաբերող քաղաքական, տնտեսական և սոցիալական բնույթի <գաղտնագերծված փաստաթղթեր>՝ լայն հետաքրքրություն առաջացնելով քաղաքական և ընթերցողական շրջաններում... Եվ պատահական չէ, որ Է. Լիկը **կիրենետիկան** անվանել է <քաղաքակրթությունների մահվան խուց> [9, հ. 309]:

Եթե <Վիկիլիքս>-ի օրինակով տեղի է ունենում տեղեկատվական և տեխնոլոգիական ոչ օբյեկտիվ գործունեություն, ապա Եվրամիությունը պատերազմ է հայտարարել Google ինտերնետային ընկերությանը ոչ միայն՝ մենաստիություն և շուկայական անազնիվ մրցակցության, այլև՝ անձնական տվյալների անօրինական տարածման մեջ (<Հ 1>, 23.03.2011 թ.):

Երկու դեպքում էլ նկատելի են տեխնոլոգիական համակարգերի <բացասական> ազդեցությունը տեղեկատվական աղբյուրների <ժողովրդականացման>, հասարակական կյանքի ու գրադարանային-տեղեկատվության զարգացումների վրա (որպես նաև հեղինակային իրավունքի խախտում): Համաձայն Վ. Ի. Յարոչկինի՝ տեղեկատվական դարաշրջանի գլխավոր խնդիրներից մեկը՝ *տեղեկատվության անվտանգության սպահնությունն է* [12]:

Այնուհետև, վիրտուալ աշխարհի հետ ակտիվ կապը եվրասիական երկրներում մարդկանց մոտ օբյեկտիվ տեղեկատվության բացակայության պատճառով առաջ է բերել <լճացում>, <անհանգստություն> և <հոգու հիվանդություն>, որոնց պատճառով յուրաքանչյուր տարի մոտ 60.000 մարդ դիմում է ինքնասպանության (<Հ 1>, 14.11.2008 թ.): Տվյալ խնդրի լուծման նպատակով, օրինակ, Հունգարիայում ստեղծվել են ուսումնական ծրագրեր՝ ներդնելով մեծ ծախսեր (մոտ 17 մլր):

Մոցիլոգիական հարցումները ցույց են տվել նաև (<Արմյուզ>, <SNN>, <Կուլտուրա> - 2008 թ. դեկտ. 25, 28), որ եթե ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Ավստրիայի քաղաքացիներից ինտերնետից չդժգոհողները իրենց հաշմանդամ են պատկերացնում, ապա՝ դժգոհողներն առանց ինտերնետի իրենց լավ են զգում: Սա ենթադրում է, որ *վիրտուալ աշխարհի* հետ հասարակության կապը մի կողմից բխում է տեղեկատվության ընդհանուր հետաքրքրությունից, մյուս կողմից՝ *օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու սպանելից*, որի բացակայությունը ստիպում է մարդուն (ընթերցողին) վիրտուալ աշխարհից վերադառնալ իրական աշխարհ՝ գրադարանային-տեղեկատվական աղբյուրներին դիմելու խնդրով:

Հայտնի է նաև, որ մարդկանց առանձին խմբեր, տեղեկատվական համակարգերում չպահպանելով իրավունքներն ու պարտականություն-

ները, զբաղվում են *համակարգչային հանցագործությամբ*՝ ինտերնետի միջոցով գողանալով անձնական և այլ տվյալներ: Ըստ հասարակական կարծիքի (ԱՄՆ, Ֆրանսիա)՝ դա տեղեկատվության և անձի անպաշտպանության ամենամեծ վտանգն է տեխնոլոգիական միջավայրում, ուր *<ոչ միայն պահպանված չեն մարդկային իրավունքները, այլև՝ վաճառվում>* (<Հ1>, 18.11.2008 թ.): Նույնիսկ այդ միջավայրում մարդկանց իրավունքները հսկելու նպատակով <էլեկտրոնային ոստիկանության> դեպքում անգամ ԱՄՆ-ի և Ֆրանսիայի քաղաքացիներն ասում են, որ նրանք սովորի շատ են իմանում, թե <Մենք ինչ ենք ասում և ինչ ենք մտածում...>:

Համաձայն մեկ այլ լրահաղորդման (<Արմյուզ>, 4.03.2009 թ.), ֆիննական ինտերնետային նշանավոր կենտրոններից մեկում աշխատակցուհին զբաղվել է <տնտեսական շպիոնաժով>՝ երկրին հասցնելով մեծ վնաս: Պետությունն անմիջապես վերացրել է հաղորդակցական այդ համակարգը:

Համակարգչային ոլորտում տեղեկատվական անվտանգության գծով մասնագետներ Ս. Մարտիրոսյանի և Ս. Մաչանյանի հաղորդմամբ, խակերների կողմից տեղեկատվական աղբյուրների հափշտակության պատճառով վիրտուալ պատերազմ է հայտարարվել նաև Հայաստանի, Ադրբեյջանի և Թուրքիայի միջև (<Ա.Բ>, 12.09.2011 թ.):

Այո, <քաղաքացիական հասարակության> մեջ յուրաքանչյուր քաղաքացի ունի ազատորեն ասելու, տեղեկատվական աղբյուրներից օգտվելու և գործելու իրավունք: Մակայն՝ էլեկտրոնային-տեխնոլոգիական միջոցներով մարդկանցից գաղտնի տեղեկատվություն կորզելու և այլ նպատակներով օգտագործելու <ազատ իրավունք> ոչ ոք չունի: Հակատեղեկատվական և հակահասարակական այս երևույթը իստորեն քննադարտվել ու դատապարտվել է ՌԴ պետական մարմինների կողմից (ռուսական <1> հեռուստաալիք, 31.03.2011 թ.)՝ առաջարկելով պայքարել նման միջոցներով տեղեկատվությունների մասսայականացման և օգտագործման դեմ:

Իսկ Չինաստանում տեխնոլոգիական միջոցների (ինտերնետի) տարածումն ու նրանց հետ մշտական կապը երիտասարդների մոտ ծնել է **հոգեկան խանգարվածություն**, որն էլ իր հերթին հասարակության մեջ առաջ է բերել խորը անհանգստություն (հասարակական հիվանդություն)՝ պահանջելով **հրատապ բուժում** (<Հ 1>, 3.05.2011 թ.): Հատկապես աղջիկներին՝ որպես բուժման միջոց առաջարկվել է սովորի շատ զբաղվել **<զինվորական վարժությամբ>**: Իսկ մենք կավելացնեինք՝ զբաղվել նաև **գրքաբուժությամբ** (ընդգծումը՝ Գ. Ա. Սուքիասյանի):

Տեղեկատվական և տեխնոլոգիական հանցագործությունների մասին հաղորդմամբ հանդես են եկել նաև ԵՄՀ զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ Սամվել Խուրոյանը, ֆիզմաթ գիտ.

դովտոր Արթուր Իշխանյանը և արվեստաբան Արմինե Բաղդասարյանը՝ նշելով, որ «ինտերնետի առկայությունը այօր լայն հնարավորություն է ստեղծում գրագողության համար... շատ ծառայություններ առաջարկում են կուրսային, դիպլոմային, գրախոսային, ստենոգրաֆիայի պատրաստի տարբերակներ՝ որոշակի վճարի դիմաց և դրանց դեմ պայքար որևէ մեկ կառույցի կողմից չկա: Չկա հսկողություն» [5]:

Մեր կարծիքով նման զարգացումները <տղիպակյան դեկալարման և անձի հոգեբանական պաշտպանության համար [6] չեն կարող ստեղծել նպաստավոր պայմաններ և արտադրել օբյեկտիվ տեղեկատվություն: Հետևապես՝ փաստաթղթային ֆոնդերի համալրման, հաղորդակցության, գրադարանային-տեղեկատվական գործի կազմակերպման և *ռազմավարական զարգացման* համար անվստահելի են: Մինչդեռ արդի գլոբալ տեղեկատվական համակարգերի զարգացումների պայմաններում մարդկության գլխավոր խնդիրը՝ «քաղաքակրթությունների պահպանման խնդիրն է» [10, հ. 4] և մշակութային ժառանգության փոխանցումը ապագա սերունդներին: Հակառակ դեպքում տեխնոլոգիական մրցավազքը կարող է տանել մարդկային և տեղեկատվական (հոգևոր) արժեքների կործանման:

Այուսինետն, ժամանակակից գրադարանային-տեղեկատվական գործում խնդիրը միայն ֆոնդերի թվայնացումը չէ՝ մի կողմ թողնելով գրադարանային-մատենագիտական սպասարկման, հրատարակչական, ընթերցանության դեկալարման, կրթադաստիարակչական և կարևոր այլ գործառույթները: Եթե այո, ապա նման մոտեցումը միակողմանի է՝ հակազրադարանագիտական ու հակամատենագիտական, մեթոդապես անընդունելի, և առաջարկում է գործնական ոլորտի աշխատողներին վերանայել «թվայնացման» իմաստը, տարբերել գործնական հարցերը պատմականից և տեսականից:

Կարելի է վստահորեն այնտեղ, որ <էլեկտրոնային գրադարանը> ստեղծվում է <փաստաթղթերի> տարատեսակ ֆոնդերի գումարից, որը <ձգտում է կազմել ունիվերսալ տեղեկատվական կենտրոն>՝ *հասարակությանը մատակարարելով եռաստիճան կամ քառաստիճան մատենագիտական տեղեկատվություն (անկախ սվանդակյան և էլեկտրոնային ձևերից)*: Զարգացման այս միտումը գրադարանային գործի մասին հնդիկ գրադարանագետ Շիպի Ռանգանաթանի (1892-1972 թթ.) հինգր օրենքներից մեկի հաստատումն է՝ «գրադարանը զարգացող օրգանիզմ է»:

Մակայն ժամանակակից թվայնացման գործընթացը կարելի է համարել օրինական, եթե գրադարանների (ներառյալ մատենադարանների), արխիվների, թանգարանների, փաստաթղթատեղեկատվական այլ կենտրոնների և հեղինակային իրավունքի վերաբերյալ օրենքներում (նախագծերում) կան ամրագրված փոփոխամաձայնություններ կամ

համապատասխան թույլտվություն, որը նաև կնպաստի նրանց միջև փոխգործունեության զարգացմանը: Իսկ *փոխգործունեության շարժիչ ուժը՝ տեղեկատվական պրոցեսների ակտիվությունն է, որն իրականացվում է մարդու կողմից՝ որպես կենսասոցիալական համակարգի:*

Պետք է իմանալ մեկ ճշմարտություն ևս, որ անկախ տեխնոլոգիական-տեղեկատվության դրսևորման ձևերից, խոսքը որոնման գործառույթի (իսկ որոնումը չի սահմանափակվում միայն համակարգչով) միջոցով փաստաթղթի (<գրքի>) ձևով բերման մասին է՝ հաստատելով նրա կայուն և անփոխարինելի տեղը տեղեկատվության դաշտում, ժամանակի և տարածության մեջ: Եվ պատահական չէ, որ քաղաքակրթության զարգացման բոլոր դարաշրջաններում ձևավորված փաստաթղթատեղեկատվական և սոցիալ-հաղորդակցական համակարգերում մշտապես պահպանվել է ԳԻՐՔ անունը (ինֆորմացիա+ֆիզիկական կրող=<քարե գիրք>, =<կավե գիրք>, =<պապիրուսե գիրք>, =<ձեռագիր գիրք>, =<տպագիր գիրք>, =<էլեկտրոնային գիրք> և այլն):

Ընդհանրապես *մատենագիտական հրատարակությունները* սոցիալ-հաղորդակցական, ուսուցողական և այլ գործառույթներից բացի, *ունեն նաև վիճակագրական անփոխարինելի նշանակություն՝* օբյեկտիվ պատկերացում տալով այս կամ այն երկրի (կենտրոնի) տեղեկատվական աղբյուրների (ռեսուրսների) քանակի մասին: Վկա՝ Հայաստանում ու հայկական սփյուռքում ստեղծված բազմաթիվ և բազմաթիվ ձեռագիր գրքերի և տպագիր հրատարակությունների մատենագիտական ցանկերը, որոնք կազմում են նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հաստատված <Աշխարհի հիշողության> ծրագրի բաղկացուցիչ մասը:

Մեր կարծիքով, **էլեկտրոնային գրացուցակավորումը կարելի է համարել նախորդների արտատպված (կրկնած) կամ աստիճանական (հերթական) զարգացման սինեներգետիկ արտահայտությունը:** *Այս կոնցեպցիան առաջ է քաշվում՝ հաշվի առնելով մատենագիտական տեսական գիտության արդի զարգացումները:*

Գրականության ընտրության հարցում խորհուրդ է տրվում խորապես հաշվի առնել մատենագիտական տեղեկատվության հիմնական հասարակական գործառույթները՝ **որոնողական, հաղորդակցական և գնահատողական** [7, հ. 44-52]:

Անհրաժեշտ է նշել, որ գրքից հեռանալու և ընթերցանության պակասի միտումները, որոնք նկատելի են նաև հայ իրականության մեջ, արդյունք են հենց տեխնոլոգիական միջոցների մասսայական տարածմանն ու նրանց հետ <անհարկի> կապի. ստեղծվել է սոցիալ-հոգեբանական մի իրավիճակ, որն անգամ սահմանափակել է ծնողների կապն ու շփումը երեխաների հետ... Ավելին, գրելու արվեստը, որպես մշակութային երևույթ, անհետանում է (դպրոցից բուհ ընդունված

ուսանողների մեծ մասի ձեռագրերը <հայերեն չեն>: Այս իրավիճակը թելադրում է էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրներից օգտվողների (անկախ սեռից և ազգությունից) ընթերցանության ղեկավարման նոր, բայց դժվարին խնդիր, որի իրականացումը, մեր կարծիքով, խիստ պարտադիր է: Իսկ ըթերցանությունը դա կյանքի ռազմավարություն [11] է նաև:

<Գիրքը կրթության և ժողովուրդների դաստիարակության իսկական աղբյուրն է, համակարգիչը՝ տեղեկատվության և փոխհաղորդակցության զարգացման միջոցներից մեկը>,- ասել է ԱՄՆ-ի նախկին դեսպան Ջոն Էվանսը 2006 թ. մայիսի 18-ին գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնին կից կաբինետ-լսարանի բացման ժամանակ:

Հայտնի է, որ **ՅՈՒՆԵՍԿՈ-ի որոշմամբ 2012 թ. Երևանը հռչակվել է գրքի համաշխարհային մայրաքաղաք**, որը վկայում է հայ գրքի և գրադարանների համաշխարհային պատմական դերի ու նշանակության մասին: Բայց Հայաստանի վիճակագրական տվյալները (2010 թ.) ցույց են տալիս, որ եթե քաղաքների ու գյուղերի գրադարանների քանակը 2005 թ. կազմել է 1051, ապա 2009 թ. այն նվազել է՝ հասնելով 986-ի: Արդյունքում՝ 2005-2009 թթ. փակվել է 65 գրադարան (15-ը քաղաքներում, 50-ը գյուղերում) [3]: Փաստորեն՝ ընթերցողներին զրկելով գրքերից և գրադարաններից օգտվելու սահմանադրական իրավունքից: Սա նշանակում է ոչ միայն ազգային գրքի ու գրադարանային-տեղեկատվական աղբյուրների ոչնչացում, այլ նաև մոտեցումը հակադրված է Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք կոչելու ՅՈՒՆԵՍԿՈ-ի որոշմանը:

Մեր կարծիքով, ճիշտ կլինի հայկական տպագրության 500-ամյակի առթիվ [4] Հայաստանում, Արցախում և հայկական սփյուռքում բացել 500 գրադարանային և գրավաճառային կենտրոններ՝ մեծ դեր ու մասնաչափություն հաղորդելով հայ բազմադարյան մշակութային ժառանգությանը, խթանել տեղեկատվության և գիտակրթական գործի բազմակողմանի զարգացմանը:

Անհրաժեշտ է սպահովել մատենագիտական օբյեկտիվ և անբժանահավատ տեղեկատվություն՝ անկախ ձևից, հեղինակի պատկանելիությունից, միջավայրից և տարածությունից: Բարձրացնել գրքի, գրադարանի (որպես մշակույթի հիշողության), ընթերցանության հասարակական և կրթատաստիրակական դերը:

Օրենսդրական ճանապարհով պայքարել էլեկտրոնային-տեխնոլոգիական (վիրտուալ) միջավայրում արտադրվող կեղծ գրականության և տարատեսակ այլ աղբյուրների հիման վրա ստեղծված անհիմն տեսությունների (պատմական, կրոնական, մանկավարժական, սոցիալ-տնտեսական, քաղաքական) տարածման դեմ, որոնց <տեղեկատվական> դերը

արդի գիտության, կրթության և հասարակական կյանքի զարգացման համար չափազանց վտանգավոր են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գիտության փոխարեն կեղծիք: Այս սկզբունքվ է առաջնորդվում Ադրբեյջանը // ՀՀ, 20 հոկտեմբ., 2010, թիվ 195, էջ 3:
2. Կամավոյան Օ. Կիբեռհանցագործություններ. դրանց դեմ միասնական մոտեցումներ ու պայքար է անհրաժեշտ // ՀՀ, 9 դեկտեմբ., 2010, թիվ 231, էջ 3:
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք:-Եր., 2010, էջ 144:
4. Հայկական տպագրության 500-ամյակը (1512-2012): Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում: / Հանրապետական գիտաժողովի (2010 թ. ապրիլի 15-16) զեկուցումների ժողովածու: / Խմբագիրներ՝ Ա. Վ. Գալստյան, Գ. Ա. Սուքիասյան:-Եր.: Մանկավարժ, 2010.-132 էջ: - Հայերեն և ռուսերեն լեզուներով:
5. Մակարյան Մ. Նյութականի գողը գող է, իսկ հոգևորինը՝ ո՞չ // Ազգ, 5 հոկտեմբերի 2011, թիվ 176, էջ 6:
6. Грачев Г. В. Личность и общество: информационно-психологическая безопасность и психологическая защита. Изд. 2, испр. и доп.-Волгоград: Издатель, 2004.-336 с.
7. Коршунов О. П. Библиографоведение. Общий курс: Учебник.-М.: 1990.-232 с.
8. Крылов В. В. Информационные компьютерные преступления: Учеб. и практич. пособие.-М., 1997.-285 с.
9. Лем С. Библиотека XXI века: Сб. / Пер. с. пол.-М., 2004.-602 с.
10. Прыкин Б. В. Глобалистика: Учебник для вузов.-М., 2007.- 463 с.
11. Чтение как стратегия жизни: Материалы межд. науч.-практ. конф., Москва, 14 дек. 2006 г. / Сост.: М. А. Ермоева и др.-М., 2006.-213 с.
12. Ярочкин В. И. Информационная безопасность: Учебник для вузов.-5-е изд.-М.:Академический проект, 2008.-544 с.

РЕЗЮМЕ
ИНФОРМАЦИОННАЯ КУЛЬТУРА В КОНТЕКСТЕ
ТЕХНОЛОГИЧЕСКИХ РАЗВИТИЙ
Г. А. СУКИАСЯН

В статье показано современное значение развития информационных и технологических систем в социальных коммуникациях на основе анализа разных источников, границы роста информационных и технологических преступлений и важность борьбы против них. Подчеркнуты важность вопросов обеспечения безопасности социальных и информационных источников и обслуживания объективной информации.

SUMMARY
THE INFORMATION CULTURE IN THE CONTEXT OF
TECHNOLOGICAL DEVELOPMENTS
G. A. SUKIASYAN

The significance of informational and technological system development, the increase boundaries of informational and technological crimes and the necessity to fight against them are shown based on the analysis of a number of sources. The issues of ensuring public and informational sources security and objective information service have been emphasized.

СОДЕРЖАНИЕ

ПСИХОЛОГИЯ

| | |
|--|----|
| К. Е. ВАРДАНЯН, Л. Р. ОВАКИМЯН МОЛОДЕЖНЫЕ ДЕСТРУКТИВНО РЕФЕРЕНТНЫЕ ОБЪЕДИНЕНИЯ КАК СРЕДСТВО ВЛИЯЮЩЕЕ НА АУТОАГРЕССИВНОЕ ПОВЕДЕНИЕ ЧЕЛОВЕКА..... | 5 |
| С. А. АНТОНЯН ПСИХОЛОГИЧЕСКИЕ ХАРАКТЕРИСТИКИ КОМАНДИРОВ ВООРУЖЕННЫХ СИЛ РА ПРИ ДОМИНИРОВАНИИ ЭКСТРИНСИВНЫХ И ИНТРИНСИВНЫХ МОТИВОВ..... | 14 |
| Д. Г. МАРКОСЯН ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ ИССЛЕДОВАНИЯ АУТОАГРЕССИВНОГО ПОВЕДЕНИЯ ЛИЧНОСТИ..... | 24 |
| АСКАРИ АСХАРИ ГАНДЖИ, К. Е. ВАРДАНЯН РАЗНЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К РЕШЕНИЮ БРАЧНЫХ КОНФЛИКТОВ..... | 34 |
| А. В. ЯЙЛОЯН ОСОБЕННОСТИ МОРАЛЬНЫХ ПРЕДСТАВЛЕНИЙ УМСТВЕННО ОТСТАЛЫХ ДЕТЕЙ ДОШКОЛЬНОГО ВОЗРАСТА В ПРАКТИЧЕСКИХ СИТУАЦИЯХ..... | 43 |

ЛИНГВИСТИКА, ФИЛОЛОГИЯ

| | |
|--|----|
| Э. М. АВАГЯН ПОЛИТИЧЕСКИЕ ДЕБАТЫ КАК ВИД УСТНОЙ КОММУНИКАЦИИ ДИСКУРСА..... | 53 |
| Н. В. ПАРОНЯН ИСКОННЫЕ И ЗАИМСТВОВАННЫЕ СЛОВА В ТРУДЕ ЕСАИ КРЫМЕЦИ “КАЛЕНДАРЬ СОЛНЦА И ЛУНЫ”..... | 61 |

НАУЧНО-МЕТОДИЧЕСКАЯ

| | |
|---|----|
| Л. А. БРЕМЯН АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ РЕГУЛЯЦИЙ МЕЖДУНАРОДНОГО ГУМАНИТАРНОГО ПРАВА ОТНОСИТЕЛЬНО ВЕДЕНИЯ ВОЕННЫХ ДЕЙСТВИЙ..... | 70 |
| А. Ю. ЕРИЦЯН РУССКИЕ ФРАЗЕОЛОГИЗМЫ КАК СРЕДСТВО РАЗВИТИЯ ЛИНГВОСТРАНОВЕДЧЕСКИХ ЗНАНИЙ УЧАЩИХСЯ АРМЯН..... | 81 |

| | |
|---|-----|
| Н. И. САМВЕЛЯН ЗАДАЧИ И НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫЕ ФУНКЦИИ ВУЗОВСКОГО КУРСА „РЕКРЕАЦИОННАЯ ГЕОГРАФИЯ„..... | 87 |
| Д. Л. ГЕВОРГЯН ЗНАЧЕНИЕ ПРЕДМЕТА „ГЕОГРАФИЯ„ В ЭКОЛОГИЧЕСКОМ ВОСПИТАНИИ И ОБРАЗОВАНИИ ШКОЛЬНИКОВ В ВЫСШЕЙ ШКОЛЕ..... | 96 |
| А. В. АКОПЯН ПРИМЕНЕНИЕ ЦЕННОСТНО-ОРИЕНТИРУЮЩИХ ВОЗМОЖНОСТЕЙ ИНФОРМАЦИОННО-КОММУНИКАТИВНЫХ ТЕХНОЛОГИЙ В УЧЕБНОМ ПРОЦЕССЕ ВУЗА..... | 102 |

ПРАВО

| | |
|--|-----|
| А. К. АЙРАПЕТЯН ПРАВОВЫЕ АСПЕКТЫ ГРУЗИНО-ОСЕТИНСКОГО КОНФЛИКТА..... | 111 |
|--|-----|

ГЕОПОЛИТИКА

| | |
|--|-----|
| С. Л. САРИБЕКЯН ПОНЯТИЕ “ГЕОПОЛИТИЧЕСКОЕ РАЗВИТИЕ ГОСУДАРСТВА”..... | 119 |
|--|-----|

ИНФОРМАЦИОННАЯ КУЛЬТУРА

| | |
|---|-----|
| Г. А. СУКИАСЯН ИНФОРМАЦИОННАЯ КУЛЬТУРА В КОНТЕКСТЕ ТЕХНОЛОГИЧЕСКИХ РАЗВИТИЙ..... | 128 |
|---|-----|

CONTENTS

PSYCHOLOGY

| | |
|---|----|
| <i>K. E. VARDANYAN, L. R. HOVAKIMYAN</i> YOUTH DESTRUCTIVE REFERENTIAL UNIFICATIONS AS A FACTOR PROMOTING PERSON'S AUTOAGGRESSIVE BEHAVIOR..... | 5 |
| <i>S. A. ANTONYAN</i> PSYCHOLOGICAL CHARACTERISTICS OF COMMANDERS OF RA ARMED FORCES ACCORDING TO DOMINANCE OF EXTRINSIC AND INTRINSIC MOTIVES..... | 14 |
| <i>D.H. MARKOSYAN</i> PSYCHOLOGICAL ASPECTS REVIEW OF HUMAN BEHAVIOUR..... | 24 |
| <i>ASKARI ASGHARI GHANJI, K. E. VARDANYAN</i> THE EFFECT OF PSYCHOLOGICAL APPROACHES IN IMPROVING MATRIMORY PROBLEMS..... | 34 |
| <i>A. V. YAYLOYAN</i> MENTALLI DISABLE PRE-SCHOOL CHILDREN'S CHARACTERISTICS OF MORAL IMAGINATIONS IN PRAETICAL SITUATIONS..... | 43 |

LINGUISTICS, PHILOLOGY

| | |
|---|----|
| <i>E. M. AVAGYAN</i> POLITICAL DEBATE AS A FORM OF DISCOURSE ORAL COMMUNICATION..... | 53 |
| <i>N. V. PARONYAN</i> NATIVE AND BORROWED WORDS IN „CALENDAR OF THE SUN AND THE MOON” BY YESAYI CRIMETSY..... | 61 |

SCIENTIFIC-METHODICAL

| | |
|--|----|
| <i>L. A. EREMYAN</i> TOPICAL ISSUES OF INTERNATIONAL HUMANITARIAN LAW REGULATIONS CONCERNING THE CONDUCT OF HOSTILITIES..... | 70 |
|--|----|

| | |
|--|-----|
| A. Y. YERITSYAN PHRASEOLOGY AS MEAN OF DEVELOPMENT OF A STUDENT KNOWLEDGE OF A LANGUAGE COUNTRY STUDYING.... | 81 |
| N. I. SAMVELYAN THE CONTENT AND TEACHING-EDUCATIONAL FUNCTIONS OF UNIVERSITY COURSE “RECREATIONAL GEOGRAPHY”..... | 87 |
| D. L. GEVORGYAN THE SIGNIFICANCE OF GEOGRAPHY IN ENVIRONMENTAL EDUCATION OF PUPILS IN HIGH SCHOOL..... | 96 |
| A. V. HAKOBYAN VALUE-ORIENTING POTENTIAL OF INFORMATION AND COMMUNICATION TECHNOLOGIES IN THE EDUCATIONAL PROCESS AT HIGHER EDUCATION INSTITUTIONS..... | 102 |

RIGHT

| | |
|---|-----|
| A. K. HAYRAPETYAN THE LEGAL ASPECTS OF GEORGIAN–OSSETIAN CONFLICT..... | 111 |
|---|-----|

GEOPOLITICS

| | |
|---|-----|
| S. L. SARIBEKYAN THE CONCEPT OF "THE GEOPOLITICAL DEVELOPMENT OF THE STATE"..... | 119 |
|---|-----|

THE INFORMATION CULTURE

| | |
|--|-----|
| G. A. SUKIASYAN THE INFORMATION CULTURE IN THE CONTEXT OF TECHNOLOGICAL DEVELOPMENTS..... | 128 |
|--|-----|

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ № 1(18) 2013 Гуманитарные науки

Տպագրական բնօրինակը հրատարակության է ներկայացրել
խմբագրական խորհուրդը

Հրատարակչական տեղեկատվական էջերի
մուտքագրումը և ձևավորումը, բնօրինակի
ամբողջական վերաչափաբերումը, տպագրումը՝
Շապիկի ձևավորումը

**Տ. Ավագյան
Մ. Քոչարյան
Ա. Նադարյան**

Ստորագրված է տպագրության 02.05.2013թ
Թուղթ՝ А4
Տպագրությունը՝ <PrePrint> եղանակով
Տպագր. 8.75, հրատ. 8.37 մամուլ
Պատվեր 169 – 2013թ.

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՅՔԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆ
armspu.am

Տպաքանակը՝ 150

Գինը՝ պայմանագրային

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ <Մանկավարժ> հրատարակչություն:
Երևան, Կենտրոն, Տիգրան Մեծի 17:

